



一个学术性教育性
出版机构

Գրքի հրատարակությունն իրականացվել է
«Օտար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների
հրատարակչության» (Պեկին, Չինաստան) աջակցությամբ:



Ոգի-Նաիրի
Vogli-Nairi

心声集--马凯著

Ma KAI
Echoes of the Heart
Poems
(Armenian Version)

«Vogi-Nairi»

Մա թԱՅ

ՍՐՏԻ
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ
Բանաստեղծություններ

Թարգմանիչ՝
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2015

ՀՏԴ 821.581-1ԲԱ

ԳՄԴ 84(5Չ)-5

Ք 120

«Գեղարմ» հանդեսի մատենաշար

Խմբագիր՝ Հրանտ ԱԼԵԲՍԱՆՅԱՆ

Մա Քայ

Ք 120 **Սրտի արձագանքներ:** Բանաստեղծություններ:

Թարգմանություններ անգլերենից:

Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի», 2015, 264 էջ:

Մա Քայի անունը ներկայիս Չինաստանում հայտնի է ոչ միայն որպես անվանի բանաստեղծի, այլև՝ պետական-կուսակցական խոշոր գործչի, ով մինչ օրս առանցքային տարբեր պաշտոններ է վարել չինական կոմկուսում եւ կենտրոնական կառավարությունում: Եվ օրինաչափ է, որ նրա բանաստեղծությունների մի ստվար մասն ունի գաղափարական շեշտվածություն, բայց եւ անձնական սպրումների, ազգային մշակույթի ու պատմության հետաքրքիր մեկնիչ է նա: Սույն ժողովածուն ասես մի յուրատեսակ մանիֆեստ է՝ տոգորված ժողովրդական համախմբումի, բարգավաճման ու համերաշխության անկեղծ հղումներով: Մ. Քայի ստեղծագործությունների հայերեն թարգմանությունները մեր ընթերցողներին կօգնեն առավել լայն պատկերացում կազմել չին ժողովրդի ձգտումների ու մաքառումների, առանձին անհատի ներաշխարհի մասին:

ՀՏԴ 821.581-1ԲԱ

ISBN 978-9939-1-0267-2

ԳՄԴ 84(5Չ)-5

Original Chinese Text © Ma Kai

© Foreign Language Teaching and

Research Publishing Co., Ltd (FLTRP)

All rights reserved.

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար/

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՆԱԽԱԲԱՆ

Չինաստանը հայտնի է պոեզիայի հանդեպ իր մշակութային համակրանքով: Դասական բանաստեղծությունները, հատկապես նրանք, որ հետեւում են ռիթմի ու հանգի կանոններին, երկրի մշակութային ժառանգության գոհարներն են:

Դարերի ընթացքում բանաստեղծների սերունդները մեկը մյուսի ետեւից իրենց ներդրումն են ունեցել փայլուն չափածոյի գանձարանում, որն էլ մեծ դեր է ունեցել պատմության արձանագրման եւ Չինաստանի մշակութային ժառանգության առաջխաղացման գործում: Այդ բանաստեղծությունները այսօր ծանոթ են չինական լեզվին: Նրանք ներշնչանքի ու գաղափարների մշտական աղբյուր են, որ վկայում են մարդու մշակութային բարոյախոսության եւ մտավոր բարեկեցության մասին. նրանք լուրջ գործոն են անհատական զգացմունքների փոխանակումը խթանելու, արվեստի գնահատման եւ հասարակական ու մշակութային զարգացման համար:

Դասական չինական պոեզիայի զարգացումը վերջին հազարամյակի ընթացքում եւ նրա տեւական կենսունակությունը որոշիչ ու հիմնարար նշանակություն ունեն չինական նշանների համար, որոնք ծառայում են որպես փոխադրող լեզու: Այս անկախ գրավոր ձևերի, օրինակ՝ քառատոն միավանկերի քառակուսի կառուցվածքը, Չինաստանի տոհմական անցյալում բանաստեղծներին թույլ էր տալիս հետեւել գեղագիտորեն կենսունակ տոնային նմուշներին ու տաղաչափությանը եւ կառուցել կատարյալ բանաստեղծական հենք,

որը գեղեցիկ էր իր հավասարակշռությամբ, երաժշտականությամբ, համաչափությամբ ու հակիրճությամբ: Այն իր գագաթնակետին է հասնում ճշգրիտ ու հակիրճ լեզվում, որն ականջ է շոյում իր տոնայնությամբ ու ռիթմով եւ այնքան հեշտ է արտասանվում, որ ուրախություն է պարզելում բոլորին:

Որպես արհեստավարժ տնտեսագետ, որը երկար տարիներ աշխատել է կառավարության տնտեսական բաժիններում, ես իմ մեջ խոր սեր են արթնացրել չինական մշակույթի ու հիերոգլիֆների հանդեպ: Ես ինձ համարում եմ դասական չինական բանաստեղծության «երկրպագու»: Մանկության տարիներին սկսել եմ կարդալ Թանգ դինաստիայի բանաստեղծությունները եւ Սոնգ դինաստիայի լիրիկական չափածոն: Ավելի ուշ սովորեցի դասական չափածոյի ռիթմային կանոններն ու հնչերանգային նմուշները, ինչն ինձ խրախուսեց՝ ազատ ժամանակ գրել առաջին մի քանի բանաստեղծությունը: Ընտանիքի անդամների ու ընկերների քաջալերանքի շնորհիվ հրատարակեցի իմ բանաստեղծությունների ժողովածուները, այդ թվում եւ՝ «Ուղեւորի երգերը» եւ «Սրտի արձագանքները»: Այս ընտրյալ բանաստեղծություններն արձանագրում են տանը եւ արտասահմանում տեղի ունեցած խոշորագույն իրադարձությունները, որոնք անձամբ ինձ հետ են պատահել: Դրանց մի մասն արտացոլում է այն, ինչ սիրում կամ ատում եմ ողջ սրտով. մյուս մասն արտացոլում է իմ մտքերն ու դիտարկումները կյանքի, բնության, սիրելիների ու ընկերների մասին, եւ միասին վերցրած՝ նրանք գծում են վերջին վեց տասնամյակում իմ անձնական կյանքի ու գործունեության հետագիծը: Ի մեծ ուրախություն ինձ՝ այս բանաստեղծություններն արձագանք են գտել բազմաթիվ ընթերցող-

ների սրտերում. նրանք նաեւ ինձ հնարավորություն են տվել նոր ընկերներ ձեռք բերել իմ չափածոյի միջոցով եւ այն համեմատել ուրիշ բանաստեղծների ստեղծագործությունների հետ: Անշուշտ, բանաստեղծություններ կարդալը, գրելն ու գնահատելը դարձել է իմ կյանքի կարեւոր մասը:

...Բանաստեղծությունների իմ առաջին ժողովածուի՝ «Ուղեւորի երգերը» գրքի չինական հրատարակության նախաբանը եզրափակել եմ՝ ասելով. «Եթե այս գրքի մի բանաստեղծություն կամ տող օգտակար լինի մարդկանց եւ այս աշխարհին, եթե այս գրքի հրատարակման համար օգտագործված թուղթն ու թանաքը եւ այն ժամանակն ու ջանքը, որ ներդրվել են իմ ընկերների կողմից, հենց այնպես չկորչեն, շատ գոհ կլինեմ»:

Այդ տողը վերաբերում է նաեւ այս գրքին, բայց կուզեի ավելացնել. «Ես երջանիկ կլինեի, եթե «Սրտի արծազանքներ» գրքի այս հրատարակությունը կարողանա խթանել մշակութային փոխանակությունը Չինաստանի եւ մյուս երկրների միջեւ, եթե իմ միջազգային ընթերցողներն այս գրքում օգտակար բան գտնեն իրենց համար, փոքր-ինչ ավելի լավ ճանաչեն Չինաստանը, նրա մշակույթն ու քաղաքացիական ծառայողներին:

Մա ԶԱՅ

Ապրիլ, 2012, Պեկին

Նվիրվելով ժողովրդին՝ առաքիևությանը

1. ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԵՐՇՆՉԱՆՔՆԵՐ



ԱՐԵՎ, ԼՈՒՍԻՆ, ՄԱՐԴ

«Սարալանջի խոյ» (Շան պօ յանգ)

I. Կարմիր արեւ

2003

Օ՛ Արեւ, սպիտակ ճաճանչներով ընդհատում ես
գիշերը.
Տարածելով կարմիր լույս՝ հալեցնում ես ձյունը,
Մինչ մեզը նահանջում է, ու գարունն է աչք
զարնում:

Շքեղությունն է նախանշանը քո,
Փարթամ կանաչը՝ ուղեկցորդը քո:
Մանուշակագույն ճաճանչներ ես ուղարկում
Արեւելքից¹՝ լցնելու հովիտն ու բլուրը.
Անսահման շաղ ես տալիս լույսը
ամենախոստումնալից:

Բարձրանալիս
Փայլուն ես դու,
Մայր մտնելիս
Փայլուն ես դարձյալ:

¹ «Մանուշակագույն ճաճանչներ Արեւելքից»՝ համարվում է բարե-
հաճության նշան: Երբ արևածագին տան արևելահայաց պատշգամբից
այդպիսի ճառագայթներ մտնեն քո տուն, ողջ տունդ կալայծառանա, ու
ընտանիքիդ յուրաքանչյուր անդամ անմիջապես կջերմանա:

II. Պայծառ Լուսին

1992

Աստղափայլ երկինք, արծաթափայլ գալակտիկա,
Պագոդա՝ արտացոլված լճակում ալեճեւ:
Ո՞վ նկարեց կամրջակը այսքան գողտրիկ:
Այսքան մաքուր, առանց բծի,
Այսքան համեստ, առանց փայլի:
Անգին անդորրության մեջ դու աճում ու նվազում ես,
Խաղաղ լույս թափելով երկնքից:
Գալիս
Անհոգ ես դու,
Գնալիս
Անհոգ ես դարձյալ:

III. Մարդն իր ներսում²

1992

Նա, ով իր սրտում օվկիանոս ունի
Արգելք չի տեսնում իր տեսիլքի մեջ:
Քանզի շունչ է առնում տիեզերքում, կապվում
երկնքի հետ:

Գալով Գարնան հետ,
Ուղարկելով ծաղիկներ փթթող,
Նա այնտեղ է՝ բլրին ու հովտին մի վերջին
անգամ հավելու համար:

Նա ինչպե՞ս կարող է միշտ իր մեջ լինել:

Փառքը

Նրա համար ձանձրալի է,

Շահը

Ձանձրալի է նույնպես:

² Գերմանացի փիլիսոփա Իմանուիլ Կանտի՝ «իրն իր մեջ» գաղափարը նշանակում է ցանկացած անդրանցական առարկա, որը մարդկային ըմբռնման արդյունքն է: «Մարդն իր մեջ», անշուշտ, ընդգրկվում է այս կարգում:

ԱՐԵՎԻ ԴԻՏՈՒՄ

1980

Օրը ընդհատելու համար Արեւը ցատկում է
օվկիանոսների վրայով,
Օդում նա սնում է բազմաթյանը,
Ապա շրջվում է՝ բլուրներից ներքեւ ընկղմվելու³:
Մինչդեռ մարդը բազում քայլեր է անում:

³ Այս տողը ցույց է տալիս, թե ինչպես է թռչում ժամանակը: Առա-
վոտյան արևը բարձրանում է ծովի վրա ու իր լույսը սփռում ամենուր,
բայց ընդամենը մի առկայծում, ու այն ընկղմվում է սարերից ներքև՝
մթնշաղի մեջ:

ՔԻԱՆԹԱՆԳ ԳԵՏԻ ՄԱԿԸՆԹԱՑՈՒԹՅՈՒՆԸ⁴

Սեպտեմբեր 1984

Երկնքի ծայրից դու մի թիավարումով գալիս
ես գլորվելով,
Դիրդոցը քո հասնում է հեծելագորի
գոռում-գոչյունի,
Մինչ կալեկոծվես դեպի երկինք՝ ջուր
ցայելով սաստիկ:
Քարշ տալ քեզ այնտեղ, ուր քո տեղն է,
ո՞վ կարող է դա:

⁴ Ժեյջիանգ գավառի Քիանթանգ գետը իր ահարկու մակընթացության այիքներով առաջ է տանում ավիամերձ Չինաստանի բոլոր գետերը: 1984 թվականի սեպտեմբերին ներկա լինելով Միջին տարիքի և երիտասարդ ղեկավարների՝ տնտեսական վերակառուցման վերաբերյալ առաջին ազգային գիտաժողովին՝ ես գնացի այդ գետի մոտ՝ մակընթացությունն ու տեղատվությունը դիտելու, ինչն ինձ հիշեցրեց, որ այս երկրում ծավալվող բարեփոխումները նույնքան անհաղթահարելի են, որքան ալեկոծ Քիանթանգի մակընթացությունն ու տեղատվությունը:

ԱՌԱՎՈՏՅԱՆ ԱՏՎԵՐԱՄԱՐՏ⁵

1992

Դիրքավորվում ես⁶ արեւածագից շուտ,
Շարժումը լողում է, որ ոչ մի թռչուն չարթնացնի:
Ամեն չափված քայլ հանգիստ է ու փափուկ,
Չէ՞ որ երկարակեցությունը հազվադեպ է լինում:

⁵ Կուսակցության կենտրոնական կոմիտեի կուսակցական դպրոցում իմ ուսումնառության ընթացքում՝ 1992 թվականին, սովորություն ունեի ամեն առավոտ ստվերամարտ պարապել թայջիքուան վարպետի հետ:

⁶ Պարզեցված ստվերամարտն ունի 24 դիրք. «մեկնարկի դիրքը» առաջինն է:

ՄԻ ԸՆԿԵՐՈՋ ՊԱՏՎԻՆ

-Ըստ Բաի Ջուլիի, «Հավիտենական ձգտում»
(Չանգ շիանգ սի)

Մարտ 1993

Դեղին Գետը հոսում է,
Յանգցե գետը հոսում է
Դեպի արեւելք եւ վերադարձի կետից անդին:
Լիկյո՞ր է պետք հոգսերը մարելու համար:

Երկար, երկար է տեւում, երբ արթնանում ես,
Երկար, երկար է տեւում, երբ երազում ես:
Երազանքները չքանում են հասունանալով:
Վերադառնում ես սանդղահարթակ⁷,
երբ հատվում է օրը:

⁷Սանդղուղը, որով մարդ ճամփորդում է երազից դեպի իրականություն: Երբ սթափվում ես երազից, դարձյալ դեմ առ դեմ ես կանգնում իրականությանը, ու ինքնահաստատվում քո կյանքում և աշխատանքիդ մեջ:

ՆԵՐՔՈՂ ՏԱՐԱՁԵՎ ՏԵՐԵՎՆԵՐՈՎ ԲԱՐԴՈՒՆՑ⁸

Հուլիս 1993

Անապատում արմատավորված՝ խիզախ ջնջում ես
երկինքները դու,
Հազարամյա պողպատե բնին աճած տարագիծ
սաղարթներով:
Քանզի մահից հազար տարի անց դարձյալ
չես ընկնում.
Ու չես քայքայվի ընկնելուց հետո մի հազարամյակ:

⁸ Շինջիանում՝ Թարիմ գետի ավազանում՝ Տակլամական անապատում դադարի ընթացքում կյանքում առաջին անգամ տեսա տարածն տերևներով բարդիների խիտ անտառակներ: Մի ծեր ույգուր ասաց ինձ. «Տարածն տերևներով բարդին ապրում է հազար տարի, մահից հետո ևս հազար տարի կանգուն է մնում, իսկ գետնին ընկնելուց հետո հազար տարի չի փտում»:

ՆԵՐՔՈՂ ԾԱՂԿՈՂ ՍԱԼՈՐԵՆՈՒՆ

Ըստ Լու Յոուի «Երգ հմայության»
(Բու սուան գի)

1998

Ընկած ծաղկաթերթերի մոտ կանգնած ես
գողտրիկ ու հոտավետ,
Բոլորի աչքի ակամա լույսն ես դու:
Ուղարկելով տառապանք՝ թող, որ սառույցը հալչի
Ու սևի շիվերդ, որ անձրեւներին են ներշնչում:

Նվիրյալն ես դու ավետող գարնան,
Աչքերից հոսող անշեջ նախանձին:
Լողանալով ձյան ու քամու ոլորքներում,
փոշուց ազատվելով,
Մաքուր ես մնում դու տարեցտարի:

ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

1998

Ես հետ եմ գցում գլուխս, շրջվում՝ նվալով
վզի ցավից,
Երբ բամբուկները շարունակ սոսափում են
իմ սրտում⁹:
Ինչպես պինդ ընկույզը չի կոտրվում ձեռքով,
Նույնպես՝ մազերիս մոխրագույնը ինձ չի հուզում:

¹ Քինգ դինաստիայի նկարիչ և քանաստեղծ Ժենք Բանքիաո (1693-1765), «Ուայժան *Յամեն* կոմսությունում արված բամբուկի նկարը նվիրելով քեռի Բաո Կուոյին՝ Շանդոնգի կառավարչին», «*Յամենի* աշխատասենյակում պատկած՝ ես լսում եմ բամբուկի շնկշնկոցը, /Կասկածելով այս ժողովրդին, որ հոգեվարքի մեջ հառաչում է:/ Քաժուի պաշտոնյաները՝ դատավորները, ինձ պես,/Միշտ անհանգստանում են դատարկ բաների համար, ինչպես ճյուղ կամ տերև»:

ԿԱՐԴԱԼՈՎ ՋԻԱ ԴԱՌՅԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ¹⁰

Դեկտեմբեր 1998

Պատրաստ է թուղթն ու չինական թանաքը,
Այս երկուներից հետո կավետեմ թղթերն
ոչ պարապին:
Երեք տողի շրջապտույտը չորս երկշաբաթում,
Երբեք ամբողջ տեքստ դուրս չի գալիս
Նրա փորոտիքից¹¹:

¹⁰ Թանգ դինաստիայի նշանավոր բուդդիստ-բանաստեղծ Ջիա Դաոն (779-843) մտորում էր չափածոյի երկու տողի շուրջ, երբ ավանակով ուղևորվում էր Չանգան՝ կայսերական քննության. «Մինչ թռչունները բույն են դնում լճամերձ ծառերի մեջ, /Մի վանական թակում է լուսնի լույսով ողողված դուռը»: Նա մտածում է՝ արդյոք կարող է «թակելը» փոխարինել «հրելով», երբ ցրված բախվում է Մետրոպոլիտեն շրջանի կառավարիչ Հան Յուի (768-824) թափորին: Երբ Ջիային բերում են Հանի մոտ, նա պատմում է, որ շփոթվել է, որովհետև բանաստեղծություն էր խմբագրում: Բանաստեղծին հանդիմանելու փոխարեն Հանը, ով իր ժամանակի նշանավոր բանաստեղծներից էր, խորհում է այն մասին, թե ինչ է հավերժությունը իր պատկերացմամբ: Հետո նա Ջիային համոզում է իր բանաստեղծության մեջ պահել «թակել» բառը: Այս միջադեպը պատճառ դարձավ «հրել ու թակել» չինական արտահայտության, որը նշանակում է «զգուշորեն ճարտասանական արտահայտություններ ավելացնել նախադասությանը»:

¹¹ Այն զգացողությունը, որ գրելը երբեմն բարդ աշխատանք է, նաև երևում է Ջիա Դաոյի՝ «Բանաստեղծությունն ավարտելուց հետո» բանաստեղծության մեջ. «Ուռա՜, վերջապես երկու տող: Արդեն երեք տարի է: /Արտասանելիս հոսում են արցունքներս: /Եթե քեզ համար, իմ սիրելի ընթերցող, դրանք դեռ ճշմարտացի չեն, /Կնահանջեմ ես հայրենի բլուրներ»:

ՄԱ ՔԱՅ

Պոկեց մազերը բառ առ բառ,
հր բեղերից մի փունջ պոկեց նա¹²:
Յանուն կատարյալ հարստության հռչակեց
նա իր խելքը,
Յամարձակվում եմ ասել՝ շատ չեմ ամոստում
կրա համար, ինչ թողեց ու զգաց:

¹² Թանգ դինաստիայից տաղանդավոր բանաստեղծ Լու Յանրանգը (902) նաև գրել է. «Այնքան բարդ գործ է գրելիս ընտրել հատուկ բառ, /Որ չեմ կարող զսպել ինձ ու կգակիցս մի փունջ մազ չպոկել»:

ԳԻՇԵՐԸ ՏԵՂԸ ՉԻՋՈՒՄ Է ՕՐԿԱՆ

2000

Կանխորոշված է տիեզերքում ամեն ինչ.
Անսահման են ժամանակն ու տեղատվությունը
դարերի մեջ:
Երկար պարանոյ հետ չես քաշի արեւամուտը.
Գիշերն ավարտվում է, որ շուտափույթ
բացվի լուսաբացը:

ՄԱ ՔԱՅ

ԱՍԱ ՈՉ ԾԱՐԱՎԻ ՄՏՔԻՆ

2000

Ինչպես անօգուտ է բռնել լուսինը լճակի մեջ,
Փորձել ծաղկեփունջ քաղել հայելուց,
Նետը երբեք հետ չի դառնում արձակվելուց հետո,
Ոչ մի անապատ չես չափի մատի մի զարկով:

ՕՐԿԱ ՉԱՐԻՔՆԵՐ

Օգոստոս 2005

Ինչու՞ չներկայացնել ուրվականի գրած թուղթը՝
ինչպես քոնը,
ինչպես գումար կշորթես՝ առանց մեղսավորության:
Իր երազում ձկնորսի կինը շարունակում է ապրել¹³,
Կայսրը ցուցադրում է իր չտեսնված
«նոր հանդերձը»¹⁴:
Նա հանրությանը սուտ է ասում, մինչդեռ վայելում է
հանդերձն իր,
Չի շփոթվում մերկության մեջ, որին անուշադիր է:
Պիղծը երբեք չի դիմանում բարձր ալիքներին:
Սպասում է նա, ապա գնում ճանապարհով՝
դեպի խոր անդունդ:

¹³ Ըստ Ալեքսանդր Պուշկինի «Հեքիաթ ձկնորսի ու ձկան մասին» բանաստեղծության, երբ խեղճ ձկնորսն իր ցանցով ոսկե ձկնիկ է բռնում, ձուկը խոստանում է կատարել ձկնորսի ցանկացած ցանկություն, եթե համաձայնի նվիրել իր կյանքը: Այսպես, ձկնորսի կնոջ բուրդը պահանջները կատարվում են, բայց երբ նա խնդրում է իրեն դարձնել «Ծովի թագուհի», ձուկը նրան դարձյալ աղքատ է դարձնում:

¹⁴ Հանս Բրիստիան Անդերսենի հանրաճանաչ «Կայսեր նոր հագուստը» հեքիաթում երկու խարդախ հանում են կայսեր հագուստն ու նրան հագցնում անտեսանելի «նոր շորեր»։ «պատիվ», որին արժանի են միայն նրա դիրքի մարդիկ: Կայսրն այնքան սնափառ է, որ բացարձակ մերկ զբոսանքի է դուրս գալիս փողոց: Ամբոխից մի երեխա ասում է կայսերը, որ նրա հագին ոչինչ չկա, բայց կայսրը հպարտությամբ բարձրացնում է գլուխն ու շարունակում ցուցադրական երթը:

ՅԵՌՈՒ ՊԱՅԻՐ ՅՈՉԱԿ ՈՒ ՇԱՅ

Մարտ 2001

Ձեռք բերված կոչումը կարող է գնալ սահող
ամպերի պես,
Ապահովված ունայնությունը կարող է խեղդվել
տեղատվության հետ:
Հանգստանում է մարդու միտքը¹⁵, երբ անտարբեր է
ունայնությանը,
Ճշմարտությանն եմ ես վերադառնում՝ չհղկված
Նեֆրիտը¹⁶ ձեռքիս:

¹⁵ Անուղղակի մեջբերում Ժուգե Լիանի (181-234) «Խրատներ որդու» բանաստեղծությունից. «Դու չես կարող հավատալ ձգտումներիդ, թե չվանես ունայնությունը. դու չես հասնի մեծ նպատակների, թե չխարսխես սիրտդ հանդարտ ծովածոցում»:

¹⁶ Անուղղակի մեջբերում «Պատերազմող պետությունների խարդավանքներ. Քիի ռազմավարությունից». «Վերադարձիր բնությանն ու չհղկված նեֆրիտի պարզությանը, ու քո ողջ կյանքում անպատիվ չես զգա»: Չինական գրականության մեջ «վերադարձ ճշմարտությանը» նշանակում է վերադառնալ բնությանն ու չհեռանալ քո բնական էությունից. «չհղկված նեֆրիտը» խորհրդանշում է մարդու անպաճույճ, անկեղծ էությունը:

ՆԵՐՔՈՂ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՍԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Սեպտեմբեր 2001

Սալորածաղիկը ոչնչացված, ամենահաճելին է

դարձյալ¹⁷.

Կինաբարը աղացած՝ չի խամրում բոսորը նրա¹⁸:

Կրաքարը թրծված՝ ձյան պես ճերմակ է դառնում¹⁹,

Նեֆրիտը կոտրված՝ անեղծ է մաքրությամբ իր²⁰:

¹⁷ Հարավային Սոնգ դինաստիայի բանաստեղծ Լու Յու (115-1210), «Ներքող սալորածաղիկն»։ «Նա գուցե ընկնի ցեխի մեջ ու վերածվի փոշու, /Մինչդեռ բուրավետ է մնում, ինչպես միշտ»:

¹⁸ Լյուի մեկնաբանությունը. «Քարը կարող է կոտրվել, բայց նրա ամրությունը չի կորչի. կինաբարը կարող է վերածվել փշուրների, բայց նրա կարմիրը երբեք չի քայքայվի»:

¹⁹ Հռչակավոր Մինգ դինաստիայի քահանա Յու Քիան (1398-1457), «Ներքող կրաքարին»։ Կոփված ու հատված հեռու բլուրներից /Դ-ու քո մեջ կրում ես այրվող կրակը: /Առանց վախի թողնում, որ քեզ բաժանեն մասերի, /Այնքան, մինչ մաքրությունդ մնա անցյալում:

²⁰ *Հյուսիսային Քիի գիրք. Յուան Ջինգանի կենսագրությունը*. «Ավելի լավ է կոտրած նեֆրիտի բեկոր լինես, քան ամբողջական հախճասալ» - ավելի լավ է մեռնել արժանապատիվ, քան անարգված:

ՄԱ ՔԱՅ

ԻՄ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԸ

Դեկտեմբեր 2001

Մաքրված սենյակում՝ թափված թանաքի հոտ,
Գիրք ընթերցելիս խաղաղ միտքն է հրճվում:
Հասարակ թեյը վերածվում է հնավանդ մեղեդու,
Իմ կոպիտ վրձինը նոր գաղափար է թրծում:

ՍՊԱՍՈՒՄ

2002

Փխրեցումն ավարտվեց, հաջորդը աշնան
բերքահավաքն է,
Երբ ջրանցքը փորվի, ջուրը կհոսի:
Երբ կինը հղիանում է, պատկերացնում է երկունքը,
Ինչպես մեկը, ով երագում է, որ նավը դառնա տուն:

ԿԱՐԴԱԼՈՎ «ՏԱՈ ՏԵ ՉԻՆԳ»²¹

Մարտ 2003

Մարդուց անդին աշուն ու գարուն կփոխարինեն
իրար,
Տերեւները թառամում են, ճյուղերը բողբոջում.
Նախասահմանված է,
Անգործության մեջ²² մարդ գտնում է իր
իրական եսը²³,
Խոհեմ պահվածքի մեջ է հանգստությունը մտքի²⁴:

²¹ Գառիզմի փիլիսոփայության առանցքային դասական ստեղծագործությունը՝ Տաո Տե Չինգը (հայտնի է նաև Լաոզի անունով), վերագրվում է Լի Էրին (մթա 571-471)՝ Գարնան ու Աշնան ժամանակահատվածի հայտնի մտածողին: 5000 բառից կազմված նրա տեքստը բաժանված է երկու մասի՝ «Տաո» (Ճանապարհը) և «Տե» (Առաքինություն):

²² Տաո Տե Չինգ. «Տաոն երբեք չի անում. մինչդեռ ամեն ինչ արվում է նրա միջոցով»: Տաոյի «անգործությունը» չի նշանակում ոչինչ չանել: Ավելին, այն մեզ հորդորում է հետևել օբյեկտիվ օրենքներին և երբեք չզնայ նրանց դեմ, ու ավելի շատ հետևել բնության կամքին, քան մեր կամքը թելադրել նրան:

²³ Մարդու համար իր եսը գտնելը նշանակում է գտնել «իր ներսի մարդուն»:

²⁴ Նշանակում է անհոգ մնալ և ետ մղել հոշակ ու շահ:

ՄՏՔԵՐ ՊՈՇՁԻԱ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հունիս 2003

Ինչպես թափանցիկ ջուրը կարող է պարփակել
լուսինը,
Փափուկ վրձինը կարող է ետ պահել վիշապի:
Երբ նրա ծայրից հոսում են զգացմունքներ անկեղծ,
Արդյո՞ք պատկառելի *քիս*²⁵ չի լցվի մինչեւ պռունկը:

²⁵ Ամմահ ազնիվ ոգի շինական օնթոլոգիայում:

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԿԵՍՊԻՇԵՐԻՆ

Օգոստոս 2003

Ես տենչում եմ գիշերային հանգստություն
ընթերցելիս,
Յանուն մտքի խաղաղության՝ շաղափում եմ
ձեռագիրը:
Ի հեճուկս իմ տրտմության՝ սկսում եմ ես ծիծաղել,
Երբ որ կինս կամացուկ ժամն է հարցնում դարձյալ:

ՆՅՈՒԹԵՂԵՆ ԻՐԵՐ I

Նոյեմբեր 2003

I. Վեր խոյացող սար

Անշարժ երկրի վրա՝ դու թափանցում ես երկինքներ.
Լայնատարած բնապատկերին է հասնում

կատարը քո:

Ժայռի պես ամուր ես դու, ինչպես խիզախ հողմեր
Չավաքում ես անձրեւները, որ ողողում են գետեր:

II. Թափանցիկ գետակ²⁶

Դու հեռանում ես լիության մեջ՝ երկինքների
միանալու,
Չալչող ձյան հոսանքներով ես
վերադառնալու սուկ:
Անձեւ ու պաղ՝ նմանվում ես անոթներիդ²⁷.
Ծաղիկներին ես սնում հերթով, խոնավություն
տալիս նրանց:

²⁶ Հին օրերում «թափանցիկ գետակը» գրականագետ պաշտոնյաների գովաբանական փոխաբերությունն էր, որոնք չէին ուզում որևէ կապ ունենալ մեծանուն մարդկանց հետ: «Երեք թագավորությունների տարեգրություն. Ուեյի տարեգրություն. Մեկնաբանություններ Չեն Քանի և մյուսների մասին». «Չեն Քան» (-236) իր գործողություններում խրախուսում էր անձնական հեղինակությունն ու իրավացիությունը. սրա համար նա ձեռք է բերել «թափանցիկ գետակ» նրբագեղ անվանումը:

²⁷ Տաո Տե Չինգ. «Երկնքի տակ ոչինչ ավելի փափուկ կամ ավելի ճկուն չէ, քան ջուրը, բայց երբ այն բախվում է ամուր ու դիմացկուն առարկաների, նրանցից ոչ մեկը չի կարող հաղթել»:

III. Անձրեւի կաթիլներ

Դուք լվանում եք գետինը կանաչ ու սանրում
ուռիները մեղուշ,
Կարմիրով ներկում ու խոնավեցնում եք
անհամար դեմքեր:
Ուր իջնում եք, արագորեն մաքրում եք փոշին՝
Լցնելով աշխարհը օդով, որ թարմացնում է
խոնջացած մարդուն:

IV. Բարեհաճ ձյուն

Դու ծածկում ես հազարավոր բլուրներ, հանց
մաշված վերարկու.

Տասը հազար լի մաքրվում է, մինչ փաթիլները
տեղում են:

Երբ հալվում ես, անհետ կորչում ես տեսադաշտից,
Ջետտ հավաքում ես քեզ՝ գարունը սնելու:

V. Բարձր քամի²⁸

Դու շոյում ես ծաղիկներն ու արթնացնում
երկիրը հեզ.
Թարմ բուրմուկք ես հղում եւ օրորում ստվեր ու լույս:
Ցցված ոստերը ճամփիդ կոտրատվում են իսկույն,
Երբ քշում ես ավազը՝ մարդու ոսկորքը կոփելու:

²⁸ Այս քառատողի չորս տողերը պատկերում են քամին համապատասխանաբար գարնանը, ամռանը, աշնանն ու ձմռանը:

VI. Ավագուտի խոստ

Առանց իրարանցման սփռվում, աճում ես դու,
Եվ ծաղկում բարձրաբերձ ժայռերի ծերպերում:
Արմատներդ դիմադրում են մահին ձյան տակ,
Կանաչով ես ներկում աշխարհը, երբ գարուն է
գալիս:

ՆՅՈՒԹԵՂԵՆ ԻՐԵՐ II

Դեկտեմբեր 2004

I. Ձմեռային սալորի ծաղիկ

Երբ ձյուն է մաղում, նա ավելի է գեղեցկանում,
Բույրը նրա տարածվում է փաթիլների վրա:
Նրանց համար կարելուր չէ՝ ով է ավելի լավ,
Պարում է զույգն այդ հրաշք, որ գարունը հետ բերի:

II. Գարնանային խոլորձ

Ընտելացել էր կյանքին հովտում մեկուսի,
Ո՞վ տեղափոխեց նրան անհայտ մի քաղաք:
Հրաժարվում է թավալվել արեւմտյան քամու մեջ²⁹,
Անարատ է նրա բույրն եւ նուրբ անսահման:

²⁹ Այս բանաստեղծության համատեքստում արեւմտյան քամու մեջ թավալվելը կապված է տիպիկ չինական մեկնաբանության հետ, որը հակադրվում է եզրույթի արեւմտյան հասկացությանը: Ըստ Փերսի Շելլիի (1792-1822), իր «Ներքող արեւմտյան քամուն» ստեղծագործության մեջ արեւմտյան քամին հոգու կենդանի էությունն է, որն առաջ է մղում աշխարհը: Այս արեւմտյան հայացքը «արեւելյան քամու» չինական տեսակետի արձագանքն է:

III. Ամառային լոտոս

Արձանի պես նա կանգնած է անբիծ,
Ցուցադրելով ծաղիկներն իր անմեղությամբ:

Նրա արմատը կոտրվում է, բայց կանգուն է
ցողունը դեռ.

Նուրբ, դյուրիչ է բույրը նրա ամառային երազի պես:

IV. Աշխատանքի քրիզանթեմ

Մինչ բյուր ծաղիկներ մրցում են վասն գարնան
հաճության,
Նա ծաղկում է ահա ուշացած, մենակ, Արևելյան
գորշ ցանկապատի մոտ³⁰:
Երբ ցրտահարվում է, նրբանում է նա այնպես
գեղեցիկ:
Որքան ուշանում՝ քաղցր է այնքան դանում
բույրը նրա:

³⁰ Տառ Յուանսինգ (Տես Ծանոթագրություն 2, էջ 267), «Գինի խմելով»։ «Վերցնելով քրիզանթեմը Արևելյան ցանկապատի տակից, /Մարդը մտածկոտ նայում է հարավային սարերին»։ Այս բանաստեղծության պատճառով «Արևելյան ցանկապատը» դարձել է «քրիզանթեմների տնկարանի» մականուն։

V. Չմրուխտե սոճի

Ժայռի վրա սոճին ստոհկ ու կոր սավառնում է
թեթեւ:
Բարձր են ճյուղերը նրա, եւ ցած է իջնում արեւը
հոգնած:
Ամպերը նորից քշվում են անկարգ,
Կանաչն է մզանում, երբ ցրտերն են մեկեն
վրա տալիս:

VI. Սիլֆանման բամբուկ

Ցույց տալով երկինքը՝ հողից է գալիս նա
դանդաղորեն.
Երբ միակցվում է³¹, մի մատնաչափ է աճում
վերստին:
Անտեսելով ունայնությունը՝ հազնվիր այնպես,
ինչպես երբեւէ,
Նա ավելի շուտ կկոտրվի, քան թե կզիջի քեզ:

³¹ Բամբուկի աճման միացման փուլում միջհանգուցային հյուսվածքները սկսում են վերածվել ցողունի. Այս փուլից հետո ցողունը ճյուղեր է տալիս ու շարունակում ձգվել:

ՄԱ ՔԱՅ

ՆՅՈՒԹԵՂԵՆ ԻՐԵՐ

Փետրվար 2009

I. Անձրեւի կաթիլներ

Կարմրաչ մարգարիտները պարում են անկանգ
հողմապտույտում.

Միայն քամու մեջ են նրանք անհետանում:

Կամացուկ ծորում են քարոտ հողի մեջ՝

Փափկացնելու երկիրը կրկին:

II. Որոտ

Ամպերի վարագույրը փակվում է մեկեն՝
Թաքցնելով Արեւը կուրացնող միգում:
Որոտի Աստված գալիս է մռնչյունով՝
Անծիր կապույտը տալով աչքերին:

III. Ֆրտահարված տերեւներ

Երբ վաղաժամ սառնամանիքը վրա հասավ,
Մի քանի ճյուղեր թույլ կարմրեցին:
Մինչ բլուրները կարմիր կհագնեն,
Դեռ ուշ է ժպտալ մաքուր ու սրտանց:

IV. Ձյան փաթիլներ

Դժգույն ծաղկանց պես՝ երկնքում թեւող,
Նրանք ծածկում են հողը շերտավոր ու թաց
շղարշով:
Մաքրելով օդը սավառնող անթիվ
տարր-մասնիկներից՝
Թարմություն են նրանք առաքում տնետուն:

II. Լեռնային անտառներ

Անձրեւ թե արեւ, ամպերը քուլա-քուլա բարձրանան
թե ոչ,

Անձրեւի, քամու դեմ՝ անտառն աննահանջ
կառչում է արմատից:

Ցրտահար տերեւներով պաղ աշնան օրերին
Չազնում են սրանք հրավառ հագուստ:

III. Փոշեհատիկ

Լինի գովասանք, մեղադրանք, ձեռքբերում թե
կորուստ՝ կմնամ հանգիստ:
Ճիշտ, սխալ, արժանիք թե թերություն՝
ուրիշներն են դատում:
Վերադառնալով հողին՝ նայում եմ երկնքին
առանց ավստասանքի:
Ի վերջո, միայն փոշեհատիկ եմ ես Տիեզերքում:

IV. Միայն մի դադար

Դեպի արեւելք հոսում է վիթխարի գետը՝
Ալեկոծվելով ու փրփրելով առանց դադարի:
Ուշք գրավելով՝ հետ է քաշվում նա,
Գնում ու գալիս՝ դադար չառնելով:

ՔԱՋՎԱՐԴԸ

Հունիս 2009

Մրցակցություն ու կռիվ երբեք չեն իմացել.
Ուղեկից կանաչի մեջ հանդարտ աճում ես դու:
Երկրի թագուհին՝ հազար հմայքով,
Ծաղկանց առաջնորդում ես դիրքերով բազում:
Շնորհների արժանացած երբեմնի տներում՝
Աստվածային բուրմունքդ տարածվում է երկար:
Ուշացողը գարնանն է տրտնջում, եւ գուցե
Նույն պսակները երբեք չեն ճոճվում գլխավերելում:

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Հունվար 2007

I. Գրքեր

Երեք թագավորության³² է հասնում գրքերի
բարձր դեզը,
Ինչպես փարոսներ՝ ուղեւորության համար
մեր կյանքի:
Կամ հանգստացնող անձրեւի ու գարնան
քամու նման՝
Բոլոր գրքերը հավերժ ընկերներ ու ուսուցիչներ են:

³² Նկատի է առնվում ճշմարիտի, բարու ու գեղեցիկի թագավորությունները:

II. Շրջված բաց գիրք

Դուռը բացվում է դեպի բակ, ուր ծաղիկների
ապստամբություն է.
Մոլախոտն ու կոտրված ճյուղերը չեն կարող
թաքցնել նրանց ճոխությունը:
Արբեցնող է բույրը նրանց, որ տարածում են
նեկտար հավաքողները.
Նեխած թե մոխրացած՝ բոլորն էլ հիանալի
պարարտանյութ են:

III. Լավ գրքեր

Լավ գրքերն արժե կարդալ հարյուրերորդ անգամ³³.
Ընթերցելուց ու վերընթերցելուց թարմանում է

մուսասա:

Աչքերը վայելում են ընտանեկան ժառանգությունն
այս,

Ու գոհացնող են պարզ թեյն ու հասարակ

սենյակները:

³³ Մոնգ դինաստիայի բանաստեղծ Սու Շի (1037-1101), «Ան Դու-նին, այն բանից հետո, երբ նա տապալեց կայսերական քննությունը». «Գիրքն արժանի է ընթերցվելու ու վերընթերցվելու հարյուր անգամ, /Դու կարող ես տիրապետել դրան, եթե շարունակ կարդաս ու խոր մտածես»:

IV. Լարված ընթերցում

Յնեցրած գինին հասունանում է միասնական
ջանքով.
Երբ ըմպում ես, բուրմունքը տարածվում է շուրջդ:
Շատ խոհեր են պետք՝ նրա արմատին հասնելու
համար.
Միայն կրթությունից կարելի է քաղել
ճշմարտությունը:

V. Ընդարձակ ընթերցում

Գրքերը նույնպես ստեղծված են արագ
թերթելու համար,
Ու բացում են հորիզոններ հավաքական ջանքով:
Թող նրանց թվերը դաջվեն ուղեղներում,
Որ պետք եկած գրքերը կարողանաք հանգիստ
մտաբերել:

VI. Անխոնջ ընթերցող

Բարձի վրա, լոգարանում, ցանկացած եռակի
ազատ ժամանակ³⁴,
ԻՆչ հաճույք է սա, շրջել գրքերի անծայրածիր
ծովում:
Լամպի տակ կարդալով՝ տեսնում եմ, ինչպես է
սլանում երեկոն,
Ու փնթփնթում եմ՝ դու գրքեր վերցրու երազ
տեսնելիս:

³⁴ Երեք թագավորությունների արձանագրությունները. Ուելի գիրքը. Ուանգ Սուի կենսագրությունը. ««Եռակի ազատ ժամանակ» նշանակում է ձմեռ՝ տարվա ազատ ժամանակը, գիշեր՝ օրվա ազատ ժամանակը, և երբ անձրևում է՝ ժամվա ազատ ժամանակը»:

VII. Հետաքրքրասեր սովորող

Թերահավատորեն ընդունիր այն, ինչ հաստատ
թվում է³⁵,
Քանզի ճշմարտությունն ի հայտ է գալիս
հետապնդելիս:
Մի փուլում հին կասկածն անհետանում, ապա
նորն է գալիս:
Փոխարինում են իրար սովորելն ու կասկածը:

³⁵ Հյուսիսային Սոնգ դինաստիայի փիլիսոփա Ժանգ Չայ (1002-1077), «Դասականների ու ռացիոնալիստների գրադարան. Բանականություն և արդարություն». «Ընթերցելիս առաջին գործը կասկածելն է: Միայն կասկածելու դեպքում այն, ինչ կասկածելի է, կարող է վերածվել իրականության»: Եվս մի Հյուսիսային Սոնգ փիլիսոփա Լու Ջիու-յուանը (1139-1193) իր «Մեջբերումներում» ասում է. «Սովորելու մեջ սարսափելին այն է, երբ կասկածներ չունես. միայն երբ մտքումդ կասկածներ կան, կարող ես առաջընթաց ունենալ»:

VIII. Գրքեր գնել

Դժվար է քայլել խռնված գրքերի տոնավաճառով,
Ուր բազում գրքեր կան, եւ դժվար է հաշվել դրանք:
Որքան հաճելի է լվալ ավագի մեջ թաղված
բնակտորները,
Այնքան էլ՝ գիրք գնել յոթանասուն տոկոս զեղչով:

IX. Ընտրված ու լքված գրքեր

Սեղմված գրապահոցների արանքում, գրքե
պատերով պաշարված,
Աչքերիս համար դժվար է դարակից
դարակ թափառել:
Չարչարանքից հետո յոթ-ութ գիրք ես ի մի բերում
միայն.
- Այն էլ՝ որ զամբյուղդ պարպվի մի անգամ էլ:

X. Գրքեր օգտագործելով

Իմացության պակասը սուր զգում ես այն
օգտագործելիս³⁶.
Մենք ափսոսում ենք, որ լեփ-լեցուն են
պահարանները բազում գրքերով:
Ուսումնասիրիր ուռկանը փորձով, գիրքը՝
ո՛չ բառով³⁷,
Վարքականոսի համար հարկ է դիմել գիտուն
մտածողներին:

³⁶ Քինգ դիմաստիայի հայտնի վաղամեռիկ լիրիկական բանաստեղծ Դու Ուելման, (1815-1881), *Անդրիկ բալլադներ և սասցվածքներ*. «Միայն երբ կիրառես սովորածդ, կզղջաս, որ այսբան քիչ ես կարդացել. միայն ինչ-որ բան փորձելով կարող ես հասկանալ՝ որքան բարդ կարող է լինել կյանքը»:

³⁷ Վարչապետ Ժոու Էնլայ (1898-1976). «Աշխատեք նրանց հետ, ովքեր անկեղծ են ու սրտաբաց. սկսեք առանց բառերի նախադասություններ կարդալուց»: Մինգ դիմաստիայի ճգնափոր Հոնգ Յինգմինգ (1560-1615), *Բանջարեղենի արմատների Չենը*. «Մարդիկ գիտեն՝ ինչպես կարդալ բառերով գիրք, բայց ոչ՝ առանց բառերի գիրք: Մարդիկ գիտեն նվազել լարային գործիք, բայց առանց լարի գործիք՝ ոչ: Եթե ճանաչում ես միայն գործնականը և ոչ հոգևորը, ինչպե՞ս կարող ես գնահատել երաժշտության ու գրքերի հրաշքները»:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ԶՍԱՆ ՏԱՐԵԿԱՆ Է³⁸

Մայիս 12, 2007

Դրոշները սավառնում են շնչնկացող քամու մեջ, որ
սահում է ժամանակով.
Հին ժամանակների չափածոն հայտնի է, ինչպես
պոեզիան արդի:
Չգացմունքը սրտից հեղվում է վտակի պես,
Երբ նրբագեղորեն տեսարաններ են ուրվագծվում:
Բառը մաքրվում է լրիվ, որ խուսափի
գեղագարդությունից:
Սքանչելի է ստեղծագործական վարքը՝
բնական ու ճաշակով:
Գովերգելով փթթումն ու հերքելով չարիքը օրվա՝
Բարձրանում ես աստիճանին այն, որ
բանաստեղծներն են ակնկալում:

³⁸ Հիմնադրվելով Պեկինում 1987 թվականի մայիսի 31-ին՝ Չինական պոեզիայի միությունը հասարակական կազմակերպություն է, նվիրված դասական չափածոյին և *սի* - լիրիկական պոեմներին, որոնք գրվում են խիստ տոնային կաղապարներով ու հանգային կառույցներով, յուրաքանչյուրը՝ նախատեսված երկարությամբ տողերի ամրագրված թվով:

**ՎԱՅԵԼԶԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ՑՈՒՑԱԿ Է ԿԱԶՄՈՒՄ³⁹**

Դեկտեմբեր 2009

Թանաքը հեղեղել է սալաքարը հազարավոր
տարիներ,
Վիշապները կուչ են եկել աստվածային հողին:
Իրականն ու անիրականը ապշեցնող հրաշքեր են
գործում.
Ջրաշալի կետեր ու գծեր փոխարինում են
իրար անվերջ:
Վրձնահարվածները քո կամքով նմանակում են
ամպեր կամ սուր.
Գրական ժառանգությունը մնում է՝ որպես
Մեծ արջ ու Գալակտիկա⁴⁰:
Վայելչագրության իմաստունը թե այստեղ է,
կմխիթարվի.
Չէ՞ որ արվեստը մի աստիճան վեր է ելել դարձյալ:

³⁹ Արաբական Միացյալ Էմիրություններում՝ Աբու Դաբիում 2009 թվականի սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 2-ն անցկացված նստաշրջանի ընթացքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման միջկառավարական կոմիտեն չինական վայելչագրությունը ներառեց Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում:

⁴⁰ «Մեծ արջից գալակտիկա» բանաստեղծական դարձվածք է, որը ցույց է տալիս, թե ինչ աննկատ է սլանում ժամանակը:

ԱՎԵԼԻ ՇԱՏ ՃԱՆԱՉԵԼ ՄԱՐԴՈՒՆ

Նոյեմբեր 25, 2006, Իսլամաբադ

ԻՆչ հրաշալի աշխարհ է:
Իմ աչքում մարդը անգուգական է:
Մարմնում նրա ամենաքիչը երկու տրիլիոն
բջիջ կա ու

Քսաներեք գույգ քրոմոսոմ:
Նրանք աստծո ձեռքով պահված են կարգին,
Ու ոչ ոք չգիտի՝ ով է կապել դրանք առանց կարերի:
Խմբերը, երբ փոքր-ինչ փոփոխվում են,
Սեռի ու բնավորության տարբերություններ են
ստեղծում:

Ալիքներն ու գուգահեռները գուցե մոլորեցնում են.
Բայց մտքի հոսքը երբեք չի կանգնում:
Համակարգիչները գուցե չափազանց հարմար են,
Բայց սոսկ մարդկային ուղեղն է ունակ
կանխատեսել:

Բաժանված է աշխատանքը ոսկորի ու մկանի միջեւ,
Միաժամանակ են գործում չորս վերջույթները:
Մարդը, իրեն լավ ճանաչելու համար,
Թող գիտությունից ստանա պատասխաններն իր⁴¹:

⁴¹ Քու Յուան (մթա. 339-278), պատերազմող պետությունների ժամանակահատվածի (մթա. 475-221) բանաստեղծ, գրել է «Աշխարհի գաղտնիքների փնտրտուքներում հարցրեք երկնքին»: Այսօր՝ այսքան տարի անց, իր իսկ մասին մարդու իմացությունը շարունակում է մակերեսային մնալ, և հանելուկները, որ Մայր բնությունը առաջադրել է նրան, դեռ պիտի պատասխան ստանան գիտության միջոցով:

ՊՈՇԽԱՅԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԶԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Մայիս 2011

Դարձյալ երկիրը կանաչ է դառնում գարնանային
քամուց.
Թանգ սոճիներն ու Սոնգ նոճիները նոր ճյուղեր են
տալիս:
Ինչպե՞ս են նրանք փարթամ սաղարթով հասնում
երկնքին -
Միայն բեղուն հողի ու իրենց ամուր բնի շնորհիվ:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԵԼՉԱՆՔ⁴²

Օգոստոս 1968

Յի-յու-զու,
Այնքան լավ, այնքան հոյակապ:
Յեռու, շատ հեռու:
Կարմիր է արեւը արեւելքում:
Երկու ձմեռ ջրերին հարվածելը
Լցնում է սիրտս բազում զգացմունքներով:
Քաղցր, թթու, դառը, տաք. ամեն ինչ համտեսել եմ,
Քամի, մակընթացություն, սառույց, սառնամանիք՝
փորձարկել է փորոտիքս:
Մեծ ալիքները չեն կարող խանգարել իրենց վրայով
ցատկող ձկներին,
Քամին ծղրտում է, բազեները միեւնույն է,
սավառնում են:
Ձյունոտ, ցրտահար կամ սառցոտ կարող են
լինել օրերը.
Ավելի կանաչ են սոճիները, ավելի կրակոտ՝
սալորները:
Թռչունները սլանում են հազար անգամ, բարձր
թռչում են, ինչպես միշտ:
Գետերը գալարվում ու թեքվում են ինն անգամ,
բայց շարունակում են հոսել արեւելք:

⁴² Վերելքների ու անկումների երկու տարին, որ ավարտվեց 1968 թվականին իմ անձնական կյանքում, պատճառ դարձավ այս բանաստեղծության ստեղծման, որը գրեցի՝ ըստ Թանգ դինաստիայի տրանս-ցենդենտալ բանաստեղծ Լի Բայի «Դժվար է ճանապարհը դեպի Սիչուան» ստեղծագործության ազդեցությամբ:

Կարելոր չէ՝ որքան է բարձրանում Թայ լեռը,
Սովորականի պես սլանում են նրանք բյուր
լեռնագոգերով:
Որքա՞ն վտանգավոր են նրանց պտտվող ալիքները:
Դեռ հնուց հերոսները ծնվում են վշտից:
Թեևավոր նժույզները չեն բուծվու սյունագարդ
սրահում,
Եվ ոչ էլ սոճին կարող է ապրել ծաղկամանում:
Աշխատանքից է սերում գիտելիքն իսկական.
Արեւելյան⁴³ քամին փոխառելուց առաջ վերջ
տանք սին զրույցին:
Ոչինչ ձեռք չես բերի առանց զանգվածների.
Վստահությունը աշխատողների ու ագարակատերերի
հանդեպ հաջողություն է բերում:
Ոչ մի իշխանություն չի տեսում երեք
սերնդից ավելի⁴⁴,
Որքա՞ն բարձր է թնդում տագնապի զանգը:
Յեռու, շատ հեռու,
Կարմիր է արելը արեւելքում:
Ալիք ալիքի վրա առաջ է գնում Ներդաշնակության
ճամփան:
Ինչպես մի օղակ տասը հազար լի երկարությամբ
վազքում,

⁴³ Պատկերավոր արտահայտչամիջոց, որը ցույց է տալիս հեղափոխության շարժիչ ուժը, այն է՝ մարքսիզմ, լենինիզմ և Մատ Զեռոնգ մտածողություն:

⁴⁴ Դարձվածք, որը նշանակում է, որ առանց շահագործման դիզված հարստությունը երեք սերնդից ավելի չի տևում: Այն ծագում է «Պատերազմող երկրների խարդավանքները» գրքի «Չուլոնգը համոզեց թագուհի Դովագեր Ժառյին» հոդվածից, որ բարձր է գնահատվում նախագահ Մառյի կողմից: Մենսիուս Լի Լոու (II). «Ինքնիշխան իմաստունի ազդեցությունը դադարում է հինգերորդ սերնդում»:

Փառահեղ է, երբ կիսում ես այդ ծանր բեռը:
Մեր նախահայրերը չէին վախենում գլխատվելուց,
Նույն կեցվածքով մենք՝ ուշացածերս,

քայլում ենք առաջ:

Երբ ամեն ինչ ասված ու արված է,
Ի՞նչն է գերակա ազգային կառավարման համար:
Ով շահում է հանրային վստահությունը,

շահում է գահը:

Առաջին քայլից է սկսվում ամեն ինչ.

Ամենաբարձր տեղում հասարակ ժողովուրդն է:

Կարճ, ինչպես կյանքը,

Վերջ չունի խնդիրը մեր:

Որպեսզի Չինաստանը երիտասարդանա,

Այս միտքը պետք է պահել սրտի մեջ:

Եկեք ընկերներ գտնենք աշխարհում,

Քանզի երկրագունդը ամենքինն է:

Թող իմ արյունը

Ծիածան լինի բարձր երկնքում:

Յեռու, շատ հեռու,

Կարմիր է արեւը արեւելքում՝

Վեր բարձրացնելով բոսորը ողջ փառքով:

ԿԱՍՔԻ ԱՏՈՒԳՈՒՄ

- «Լուսինը Արեւմտյան գետի վրա»-ին (*Շի քիան յե*)

Յունիս 1970

Ոչ մի ճանապարհ չի տանում ուղիղ սարի գագաթ,
Սովորական են հեղեղները երկար

Ալեկոծվելով՝ մեծ ալիքները չեն ելնում վերեւ,
Ժպտալով՝ մարդիկ պայքարում են ցավ ու
վշտերի դեմ:

Երբ գիտես՝ երբ նահանջել, սահմաններ չկան⁴⁶,
Անձնուրաց ու խիզախ ազատությանն ես
պատկանում դու:

Եկեք ուղիղ նայենք որոտի ու կայծակի անթարթ
աչքերին,
Ինչպես մրրկահավն է խոյանում երկինք⁴⁷:

⁴⁶ Այս բանաստեղծությունը գրել եմ Մշակութային հեղափոխության ընթացքում, մինչ Պեկինից Մայիսի յոթի կադրերի դպրոց մեկնելս:

Բնագրի նախադասությունը, ամբողջությամբ թարգմանվելու դեպքում, կհնչեր այսպես. «Սահմաներ չկան, եթե մարդը գիտի՝ երբ առաջ գնա ու երբ նահանջի»: Քանի որ ավելի դժվար է որոշել՝ երբ նահանջել, քան՝ երբ առաջ գնալ, թարգմանիչը, հակիրճ լինելու համար, նախընտրում է տողում թողնել «երբ նահանջել» արտահայտությունը:

⁴⁷ Մաքսին Գորկի. «Մրրկահավի երգը».

*«...սհեղ ամպերի և ծովի միջև
Ճահրում է հպարտ մրրկահավը՝
Թռչում է՝ մի սև կայծակի նման:
Մերթ ալիքներին քնով դիպչելով,
Մերթ նեղի նման ամպերին հասած...»* (Թարգմ.՝ Եղիշե Չարենցի)

ԼՈՒՍՆԱՊՍԱԿԸ ԳՈՒՇԱԿՈՒՄ Է ՔԱՍԻ⁴⁸

-Ըստ Բայ Ջուլիի «Յայտարարությունների»,
երկրորդ մաս⁴⁹

1972

Ո՞վ է ասում՝ չկա միջոց կասկածները փարատելու:
Առանց հմայության լուսնապսակը քամի է
կանխագուշակում:
Օճառի պղպշակները գուցե հիասքանչ են, սակայն
շատ շռայլ.

⁴⁸ Լուսապսակը անսովոր երևույթ է, և պատահում է, երբ արևի կամ լույսի լույսն արտացոլվում կամ սառույցի բյուրեղների կողմից հետ է քաշվում փետրաշերտավոր ամպի մեջ, բարձ, բարակ, միգապատ ամպ, որ ծածկում է երկինքը: Ինչպես ասացվածքն է ասում. «Արևի շուրջ լուսապսակը ազդարարում է քամի, իսկ լուսինը շրջապատող լուսապսակը կանխագուշակում է միջօրեի քամի»: Մոնգ դինաստիայի բանաստեղծ և արձակագիր Սու Ջունը (1009-1066) իր «Այն մասին, թե ինչ ոտխներ են քո շուրջ» ստեղծագործության մեջ գրել է. «Լուսնի շուրջ լուսապսակը նշանակում է քամի. Խոնավ գետնախարիսխը նշանակում է անձրև»: Երկու մեջբերումներն էլ ենթադրում են, որ ցանկացած բան, պատահելուց առաջ նախագուշացող նշաններ է թողնում:

⁴⁹ Հինգ բանաստեղծությունից կազմված իր «Հայտարարություններ» շարքում Թանգ դինաստիայի հայտնի բանաստեղծ Բայ Ջոյին (772-846), վկայակոչելով ընթացիկ իրադարձությունները, մեջբերում է պատմությունը և պարզաբանում, որ ճշմարտությունն ու կեղծիքը գանգանելի են, չնայած գուցե շփոթեցնում են իրար: Ես այս բանաստեղծությունը գրեցի՝ ներշնչված Բայի բանաստեղծական շարքի երկրորդ մասից, այն բանից հետո, երբ Լին Բիսոն (1907-1971) 1971 թվականի սեպտեմբերին Մոնղոլիայում վախճանվեց ինքնաթիռի վթարից:

Բեռան⁵⁰ վրա թառած բուն ոչ մի տեղ չի թռչում:
Երբ ամեն ինչ անխռով է, ոճրագործները
խնդիրներ են ստեղծում.
Դողոշներն են ի հայտ գալիս, երբ փակված են
աչքերը մարդու:
Քարացած միջատներն իրականում անկենդան չեն,
Լուշան լեռը իրական չի լինի մինչեւ արեւածագ:

⁵⁰ Արտահայտչամիջոց, որը բվին համեմատում մարդու հետ, որի ձեռքին կացին է, հատկապես ուխտադրուժ քահանայի, որ թաքնվում է միապետի սովերեններում: Երեք թագավորությունների ժամանակաշրջանի (220-280) բանաստեղծ Քառ ժի (192-232), «Նվիրվում է Քառ Բիսոյին՝ Բայմայի արքայագնին»։ «Երբ բուն կռիվն թառում է բեռան վրա, /ճանապարհը արգելափակում են շնագայլն ու գայլը»:

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՌԱՎՈՐ ԵՐԿԻՐ⁵¹

«Գարունը Քին այգում» (Քին յուան չուն)

Յուլիս 1, 1977

Երկար, երկար է մարդկային կյանքը նավակի նման՝
Երկարուձիգ է ուղեւորությունը, որ օվկիանոս է
ճեղքում:

Ինչպե՞ս կարող է ձգտումը դառնալ իրականություն:
Նայիր տներին. նրանք շողում են լուսատուիկի պես,
Որ վառել է Մեծ արջը⁵²:

Մեծ վարպետները, լավ իրագեկված
դասականները⁵³

Առաջնորդում են, որ կանգնենք բարձր ու
նայենք հեռու⁵⁴:

⁵¹ Ես գրեցի այս բանաստեղծությունը՝ կարդալով 1977 թվականի հուլիսի 1-ին Կուսակցության անդամներին առաջադրված հինգ պահանջները: Բանաստեղծությունն իր տեղն է գտել Պեկինի արևմտյան շրջանի Կուսակցական դպրոցի պատի թերթում, որտեղ դասավանդել եմ՝ որպես ֆակուլտետի անդամ:

⁵² Չգտումն իրականության վերածելու համար անհրաժեշտ է գնալ ճիշտ ուղղությամբ, ինչն այս նախադասության մեջ ցույց է տալիս Մեծ արջը, այն է՝ Կուսակցության առաջնորդությունը:

⁵³ Հեղափոխական մտածողներ Մարքսի, Էնգելսի և Մաոյի աշխատությունները:

⁵⁴ Ինչպես Թանգ դինաստիայի բանաստեղծ Վանգ Շիհուանը (688-742) գրում է իր «Վեղարավոր աշտարակ» գործում, «Եթե ուզում ես հազարավոր մղոններ հեռու տեսնել, /Եվս մի հարկ բարձրացիր այս աշտարակում»: հեռուն տեսնելու համար անհրաժեշտ է կարդալ որոշ վարպետ-մտածողների գրքերը:

Ճանապարհն⁵⁵ իր անողոք օրենքներից է կառչում,
Բայց մեթոդները հարուստ, բազմազան են⁵⁶:

Ճշմարտությունը կգտնես, թե միախառնվես
ուսում ու աշխատանք:

Չափանիշը⁵⁷ ամուր պահած՝
Սեղմիր լուսնի ձեռքն ու հասկացիր կրիաներին⁵⁸,
Ո՞վ է լինելու գլխավորը:

Չանգվածները միշտ պատմությունն ստեղծողների
կողքին կանգնած են,

Ինչպես ջուրը, որ կարող է տանել կամ շրջել սավը⁵⁹:
Արդյո՞ք բյուր ծաղիկները

Կանաչ տերեւների բացակայությունն են վայելում:

Թե բոլոր գետերը դատարկվում են ծով,

Բարակ գետակները ոչ մի դեր չունեն՞:

Ժողովրդին մտքի մեջ պահած՝

Ճանրաբեռնված ու անհանգստացած չենք մենք:

⁵⁵ «Ճանապարհը» նշանակում է այն օբյեկտիվ օրենքները, որոնք կառավարում են իրերի զարգացումն ու շարժումը, օրենքներ, որ հավերժական են և անկախ են մարդու կամքից:

⁵⁶ Եթե Ճանապարհն անկախ է մարդու կամքից, մեթոդոլոգիան անշարժ չէ. այն փոխվում է ժամանակի, տեղի ու հանգամանքների հետ:

⁵⁷ Չափանիշը մեկն է՝ ճշմարտություն:

⁵⁸ Մաո Յեթունգ բանաստեղծություններ (Օտարալեզու մամուլ, 1976), «Նորից ելնելով Չինգվանգչեն. Շուի Տիաո Կեհ Թուի մեղեդուն». «Երեսունութ տարի սլացավ/Ընդամենը մատի մի չրթոցով: /Մենք կարող ենք սեղմել լուսնի ձեռքը Իններորդ երկնքում /Ու հասկանալ կրիաներին Հինգ ծովերի խորքում. /Այս աշխարհում ոչինչ բարդ չէ.../ Եթե համարձակվես չափել բարձրությունները»:

⁵⁹ Թանգ դինաստիայի պաշտոնյա Ուեյ Ժենգը (580-643) ասել է. «Կայսրը նմանեցվում է նավակի, իսկ նրա ենթակամները՝ ջրերի: Ջրերը կարող են տանել նավակը, բայց կարող են նաև գլխիվայր շրջել»:
Այս արտահայտությունն այդուհետ հիշեցնում է կավառարության պաշտոնյաներին՝ լինել մաքուր և ուղղամիտ:

Ազատությունը պատկանում է սրտաբաց
մարդկանց:
Քայլելով ուղիներով ձիգ ու խորդուբորդ,
Եվ ճամփա ընկնելով դեպի վեհություն՝
Երբեք չենք հասնի վերջին:

ԻՆՔԼԱՉԵՂՎԵԼՈՎ ՎԱԹՍՈՒՆՅՒՆԳ ՏԱՐԵԿԱՆՈՒՄ

Յունիս 29, 2011

Յանկարծ զգում եմ՝ անցավ կյանքիս գարունը, երբ
քառատրոփ վարգում է նժույգս.
Մինչդեռ սանձն ամուր է ու խթանում եմ նրան:
Գյուղացիները ատում են արեւամուտը, երբ հող են
մշակում,
Իսկ ընթերցելիս հաճելի է տեսնել երկնքում
ելնող լուսինը:
Ես հաճույքով գոհարներ եմ հավաքում
գիտելիքի ծովից,
Չմայլվելով բլրով ու լեռնանցքով՝ գոհանում եմ:
Սմբակների զարկը թուլանում է, մինչդեռ երկար
զնգում է այն ականջներիս մեջ.
Կռանալով թամբին՝ եւս մի քայլ եմ անում:

ՈՒԹՍՈՒՆՄԵԿ ԲԱՌԻՑ ԱՍԱՑՎԱԾԸ⁶⁰

Յուլիս 29, 2001

Կարծում եմ՝ պետք է

⁶⁰ Քանի որ չինարեն բանաստեղծության բնագիրը վերնագրված էր «Ութսունմեկ բառից սասցվածք» (յուրաքանչյուր տողում՝ երեք անձ), բառացի տարբերակը հնչում է հետևյալ կերպ. 民 (մարդիկ) 𠄎 (լինել) 本 (արմատ), 𠄎 (երկիր), 𠄎 (հաշվել), 重 (ծանր), 公 (հանրություն), 𠄎 (վերցնել), 先 (նախորդում), 𠄎 (իմանալ), 𠄎 (ընթացիկ), 𠄎 (գործեր), 𠄎 (թվարկել) 𠄎 (ընդհանուր), 体 (իրավիճակ), 居 (պահել), 高 (մեծ), 瞻 (հեռատեսություն), 明 (իմանալ), 是 (ճիշտ), 非 (սխալ), 通 (ցույց տալ), 情 (զգացողություններ), 理 (պատճառներ), 方 (հասկանալ), 方 (քառակուսիներ) 𠄎 (չրջաններ), 求 (փնտրել) (անկեղծ), 情 (զգացմունքներ), 𠄎 (անել) 𠄎 (պրակտիկ), 事 (բաներ), 敢 (համարձակ-), 直 (վել-), 言 (խոսել), 兼 (տրամադրություն), 𠄎 (ուժ), 柔 (ողորմածություն), 能 (կարող է), 取 (ընդունել), 舍 (մերժել), 𠄎 (արժեք), 周 (ամբողջականություն), 全 (կատարելագործում), 𠄎 (սովորել) 道 (Տաո), 喜 (երջանիկ), 知 (գիտակցել) 𠄎 (սխալներ), 改 (ճիշտ), 𠄎 (տեսնել), 善 (բարություն) 𠄎 (փոխել), 𠄎 (խիստ), 律 (կարգապահություն), 己 (ինքնիրեն), 𠄎 (ներողամիտ), 待 (դեպի), 人 (մյուսներ), 𠄎 (լայն), 𠄎 (ծանոթություն), 𠄎 (բարեսիրտ), 淡 (անտարբեր), 名 (փառք) 利 (բախտ/ձեռքբերում), 𠄎 (նվաստացնել), 富 (հարուստներ), 𠄎 (պատիվներ), 守 (պահել), (անկեղծություն), 廉 (անապական), 循 (մնալ), 天 (Դրախտ), 道 (Ճանապարհ), 𠄎 (հետևել), 民 (ժողովուրդ), 意 (կամք), 𠄎 (վերադառնալ), 自 (ինքնիրեն), 然 (ինչ էլ լինի)

Ժողովրդին⁶¹ համարել հիմնարար,
Պետությունը՝ առանցքային,
Հանրությանը՝ էական:
Իմանալ՝ ինչպես է փչում քամին,
Պահպանել հիմնական սկզբունքները⁶²,
Կանգնել բարձր ու նայել հեռուն:
Ճիշտը տարբերել սխալից,
Լինել ողջամիտ ու հասկացող,
Իմանալ քառակուսի ու կողմնացույց⁶³:
Փնտրել ճշմարտությունը,
Չկտրվել հողից,
Չտրորել մարդու խոսքերը:
Կոփել ամրությունը մեղմության հետ⁶⁴,
Լավ իմանալ՝ ինչ վերցնել ու տալ,
Մսալ խոհուն եւ ուշադիր:
Չմայլվել՝ լսելով ճանապարհը,

⁶¹ Տարածված կարծիք կա, որ այս միտքը պատկանում է Չիա դի-նաստիայի լեգենդար Յու արքային (մ.թ.ա. 21-16 դդ.): «Պատմության գիրքը. [Արքա Թայքանգի] հինգ եղբոր երգերը». «Ժողովուրդը պետության հիմքն է, իսկ պետությունը ծառայում է իր ժողովրդին»: Մենսիուս. Ջին Շին II. «Ժողովուրդն ազգի ամենակարևոր տարրն է. հաջորդը՝ երկրի հոգին ու հացահատիկն է. ամենաթեթևը ինքնիշխանությունն է»: «Ծեսերի գիրք. Ծեսեր և ճակատագիր». «Հանրային ոգին կկառավարի Երկնքի տակ, երբ մեծ Ուղին գերակշռի»:

⁶² «Երեք թագավորությունների պատմությունը. Չեն Ջիաոյի կենսագրությունը». «Նա, ով հասկանում է ժամանակը, մեծ մարդ է»:

⁶³ Այսինքն՝ պահպանել օրենքը: Մենսիուս. Լի Լու I. «Լի Լուի տեսիլքի ուժը և Գոնգուն Ջիի ձեռքի հմտությունը, առանց կողմնացույցի ու քառակուսու, չի կարող քառակուսիներ ու շրջաններ կազմել»:

⁶⁴ «Փոփոխությունների գիրք». «Ուժեղ և թույլ տողերը հաջորդում են իրար և փոփոխություններ ու ձևափոխություններ առաջացնում քվերում»: Տաո Տե Չինգ. Գլուխ 52. «Իմանալ, թե ինչպես է պետք զիջել, մեծ ուժ է»:

Պատրաստ լինել ուղղել սխալները,
Գործել բարի ու ազնիվ:
Խիստ լինել քեզ հետ,
Եվ ներողամիտ՝ ուրիշների հետ,
Մտերիմ լինել առաքինության հետ:
Խուսափել հռչակից ու շահից,
Լույս վառել փամբից ու հարստությունից,
Լինել ազնիվ ու անկաշառ:
Իսկ ընդհանրապես
Ուսումնասիրել Երկնի ճանապարհը,
Սպասարկել հանրային կարծիքը,
Բնությանն է վերադառնում ամեն ոք:

Վսեմ սարեր եւ հավերժական գետեր

2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՎՍԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅՐԻԿԻ ՄԱՅՎԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Հուլիս 1988

Ամպի ինչպիսի՛ անշունչ ծով:

Քամին ինչպե՛ս էր մրմնջում:

Սգասրահի ներսում ոտքերս հագիվ օրորվում էին,

Սիրտս արնահոսում էր դիմանկարիդ նայելիս:

Երբ աչքերս հառում էի քեզ, արցունքները

հոսում էին այտերս ի վար:

Կյանքիդ գարունն էր, երբ մահը տարավ քեզ,

Երեխաներիդ թողնելով միամիտ սգի մեջ.

Ի՛նչ դաժանությունն այսքան բարեսիրտ

մարդու համար:

Որտե՞ղ է հավատամքդ, իմ երկնային Տե՛ր:

Համր էր երկինքը, ու երկիրը՝ մունջ,

Միայն հեկեկոցներ, որ խտացնում էին

անհուն վիշտը:

Մարդը չկա, բայց կան ոտնահետքերը,

Որ անցել են հիսուն տարվա բացառիկ կյանք:

Տասներեքում տարար ուսումնառության խիստ

պայմանները,

Ավարտեցիր դպրոցը քսանում, երբ արեն է ծագում:

Մեծ պաստառը սավառնում էր Պագոդա բլրի

գագաթին.

Դեղին գետի վրա փռվել էր կորեկի հոտը:

Որպես գենք՝ վճռեցիր գրել Ճապոնիայի

պատերազմի մասին,

Քո տաղանդը փթթում էր կրակոտ տողերի մեջ:

Չվիատվեցիր, երբ քեզ հետ անարդար վարվեցին,

Չե՞ որ երկաթը կոփվում է կրակի բոցերում:

Աշխատանքի մեջ սովորությունն ուներիր

մի պահ նստել,
Չէիր ցուցադրում, անում էիր այն, ինչ կարող էիր:
Ուրիշների հետ՝ հանդուրժող ու ազնիվ,
Անձնական օրինակով բացարձակ ռեկորդ էիր
սահմանում:
Երբ գրիչը ձեռքիդ էր, իրազեկ հողվածագիր էիր,
Երբ ասեղն էր ձեռքիդ՝ հագուստդ էիր նորոգում:
Ուզում էիր՝ զգուշանանք միջակությունից ու
ձգտենք կատարելության,
Սիրում էիր լինել գործնական ու լրջմիտ:
Դուստրերիդ սովորեցնում էիր պարզ կենցաղ ու
տեղին խնայողություն,
Չէիր հոգնում տղաներիդ հորդորել
տքնաջան բանել,
Քո կյանքի գարունն էր, ինքդ էիր պնդում,
Բայց անակնկալ քամին տարավ քեզ հեռու:
Ամուր ոտքերիդ հենված՝ կոփված ոսկորներով,
Յպարտորեն գլուխդ բարձր էիր պահում:
Թախծալի հրաժեշտը ցնցեց երկիր ու երկինք,
Չորս կողմը դողաց, կորստյան ճիչերը
արձագանքվեցին:
Սիրտս թրթռում է, երբ ավարտին եմ հասցնում
տողերն այս:
Օ՛ լագուր երկինք, դու է՛լ ես վշտահար:
Եղերերգի պես խոր հուզախռով՝ հանգուցյալն
անհետացավ.
Արդյո՞ք խոտը կփոխհատուցի գարնան արեւի
սերը:
Յեռացավ իմ ծնողը, բայց նրա դեմքը այնպես
կենդանի է,
Թողեց մեզ ժառանգություն, որով դեռ պիտի
ապրենք տարիներ:

ՄԱՅՐԻԿԻ ԾՆՆԴՅԱՆ ՈՒԹՍՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԸ

Փետրվար 2004

Սկսեցիր ծառայել երկրիդ, երբ դեռահաս էիր⁶⁵,
Ութուն տարի անց փորձառու վետերան դարձար:
Հիմա ութունամյա բարետես կին ես,
Աշխուժանում ես, երբ ինչ-որ բան ես հորդորում
զավակներիդ:

⁶⁵ 1924 թվականին ծնված մայրս ընդամենը տասնչորս տարեկան էր, երբ ընդգրկվեց Չինաստանի կոմունիստական կուսակցության շարքերը:

ԱՌԱՋԻՆ ԺԱՍԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- «Ջրի պար» (*Սուլ Սուլ ժե*)

Մայիսի 2, 1973

Լուսնի տակ մեղմիկ
Չանգեր էին զնգում:
Չեփյուռն էր սահում անշշուկ,
Իսկ սիրտս անիմաստ դեգերում էր:
Ազգային պալատում, սոճիների ներքո
Քեզ տեսնել էի փափագում, մինչդեռ վարանում էի:
Մի՞թե արթմնի երագում էի ես:

Չքոսայգում թափառում էինք մենք՝
Մոռացած հոգևություն ու խոնջանք,
Քաղցր անեությունը հոսում էր թեթեւ
Խոխոջուն առվակի պես:
Գիշերը թանձրացել էր, քունը՝ ուշացել:
Թող լուսաբացը շտապի,
Որ վերապրեմ կատարվածը:

ՀԱՐՍԱՆՅԱՑ ՕՐԿԱ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵՂԱՐՁԸ⁶⁶

Դեկտեմբեր 29, 1975

Ծանր էր ձմռան սառնությունը անցյալ տարվա այս
նույն երեկոյան,
Բայց մեր փոքրիկ տնակում մոմով լուսավորված
գարունն էր ծորում:
Ոչ մի մատիտ չի նկարի այն, ինչ զգում էի,
Բայց մեր շաղկապված սրտերը համաչափ են
զարկում:
Խմած գինու ամեն մի կաթիլ քաղցր ցող է բերում
ներկա պահին.
Երբ սերը ծաղկում է հոկտեմբերին, ուրախությունը
հետո է հասունանում:
Այն օրը, երբ մեր դուստրը վերափոխվի նրբագեղ ու
համեստ օրիորդի,
Հանց հաղթական ծիծեռնակն է պարում, այդպես
ուրախությունը կհագենա⁶⁷:

⁶⁶ Այդ տոնական օրը 1975 թվականի դեկտեմբերի 29-ն էր՝ իմ ամուսնանալուց ճիշտ մեկ տարի անց:

⁶⁷ «Ծիծեռնակ», «հաղթանակ» և «ուրախություն» բառերը համապատասխանաբար չինական *յան* 燕, *քայ* 凯, և *լե* 乐, նշաններն են, որոնք զարմանալիորեն կնոջս, իմ ու դստերս անուններն են:

ԱՐԾԱԹԵ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՏԱՐԵՂԱՐՁԸ⁶⁸

- «Փյունիկ-հերակալ» (Չայ տու ֆենգ)

1999

Ձեռք ձեռքի տված՝
Միասին կենաց ենք ասում,
Ծիլերը քնքուշ են, ծաղկունքը՝ արծաթափայլ⁶⁹,
Ուռիները՝ թեթեւ:
Բողբոջները ծաղկաթերթեր են տալիս,
Սոճիները կանաչ երանգ են հագնում:
Երդումը հնչել է,
Ափսոսանք չկա:
Ոչ, ոչ, ոչ:

Կապվածությունն անխախտ է,
Սրտերն՝ անփոփոխ,
Ջերմությունը թափանցում է մեր փոքրիկ
կացարանի պատուհաններից:
Գարնանը գետը հոսում է,
Լավ երազանքը՝ իրականանում:
Երբ ոսկե աշունն⁷⁰ է գալիս,
Ոստերը կախվում են մրգերի ծանրությունից:-
Սիրուն, սիրուն, սիրո՛ւն:

⁶⁸ Իմ հարսանիքի 25-րդ տարեդարձը 1999 թվականի դեկտեմբերի 29-ին էր:

⁶⁹ Արծաթե հարսանիքի փոխաբերություն

⁷⁰ Թե՛ բերքահավաքի, թե՛ ոսկե հարսանիքի փոխաբերություն, որը մեր դեպքում կլինի 25 տարի անց:

ԿՆՈՋՍ ՅԵՏ ԵՐԶՈՒՄ ԵՄ ԲՈՒՐՄՈՒՆՔԻ ԲԼՐԻՆ

Յոկտեմբեր 2000

Երբ սառնամանիքը տեղի է տալիս, կարմիր են
ներկվում անտառները:
Քամին բարձրանում է, դեղին տերեւները
թափվում են արահետներին:
Արեւը սփռվում է բլրի փեշերին, շառագույն
ամպերով երիզված՝
Երկու լոտոս է առկայծում լճակում:

ՍՊԱՍՈՒՄ

«Թիրթռները սիրում են ծաղիկներ» *(Դիտ լիան հուա)*

Փետրվար 2001

Լուսինը մեծանում ու փոքրանում է դանդաղ,
Դարձյալ ուրախ ճաշի ժամ է
Պատուհանի երկու կողմի ընտանիքների համար:
Ափսեներն, ինչպես միշտ, լցված են համեղ
խորտիկներով,
Բայց դռան զանգն իզուր է սպասում. ոչ ոք չի
վերադառնա⁷¹:

Տոները գալիս են գարնան հետ:
Դարձյալ արձակուրդի ժամանակն է,
Ընտանիքները շրջագայում ու հանգստանում են:
Բայց նա հեռու է իր մշտական գործով՝
Ստիպում է, որ սպասեմ իր լուրջ ձայնին⁷²:

⁷¹ Ես հաճախ անկատար էի թողնում ճաշի ժամին տուն գնալու խոստումներս՝ ստիպելով, որ կինս բազում անգամներ իզուր սպասի ինձ:

⁷² Երբ գործուղման եմ մեկնում, անպայման օրական մեկ անգամ զանգում եմ կնոջս:

ՄԱՐԳԱՐՏԵ ՀԱՐՍԱՆԻՔ

«Փյունիկ հերակալ» (Չայ թու ֆենգ)

Դեկտեմբեր 2004

Խաչած ձեռքերով՝
Նոր կենաց ենք խմում,
Գարնան զեփյուռում ուռենու ճյուղերը կամաց
ճոճվում էին:

Մեր զգեստապահարաններն աղքատիկ էին,
Բայց մեկտեղ հաղթահարեցինք բոլոր խութերը:
Այսօր՝ ուղիղ երեք տասնամյակ անց,
Սերը նույնքան քաղցր է, ինչպես երեկ:
Յե՛՛յ, հե՛՛յ, հե՛՛յ:

Ճյուղերը չեն չորանում,
Քանի դեռ արմատը հողում է,
Բողբոջելիս ուժգնանում է բույրը նրանց:
Եթե կռած է լավ հատիչներով,
Ապա սեպը կհարմարեցվի փորվածքին:
Թող որ մենք հարգենք իրար,
Որ հարատեւի այս սիրո միությունը:-
Քա՛ղցր, քա՛ղցր, քա՛ղցր:

ԿՆՈՋՍ ՎԱԹՍՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Սեպտեմբեր 29, 2006

Գիտու գավաթները ձեռքին՝ իրար ենք նայում.
Մեր սրտերը բաբախում են խոսքերից առաջ:
Ուս ուսի տված⁷³՝ միասին վին ենք նվագում,
Երանի՝ մեր կապն ավելի վաղ հաստատվեր:

⁷³ Հայտնի քսանհինգլարանի երաժշտական գործիք հին Չինաստանում: Երգերի գիրք. Ժուի ու Հարավի ներքողներ. «Համեստ, գուսպ, առաքինի, երիտասարդ կին: Վիներով՝ փոքր ու մեծ, եկեք սիրավիր ողջունենք նրան»: Երգերի գիրք. Թանգ Դի. «Սիրո միությունը կնոջ ու երեխաների հետ /Նման է վիների երաժշտության»:

ՔՆԱԾ ԴՈՒՍՏՐԸ

Օգոստոս 1979

Գիշերը թանձրացավ, բամբուկը ճռնչալով բացվեց⁷⁴,
Զրերն ալեկոծվեցին, բայց ոչ քամուց:
Ոտքերիս մատների վրա ներս մտա՝
մոծակին քշելու,
Որ չանհանգստացնի քնածին երազի մեջ:

¹ Խաղաղ ամառային գիշերակեսին բամբուկն այնքան արագ է աճում, որ նրա ճռռոցը կարող է անընդհատ լսվել:

ԿԱՐԴԱԼՈՎ ԴՍՏԵՐՍ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ⁷⁵

«Յարավային երկրի հիշողություններ»
(Յի ջիան Լան)

Յոկտեմբեր 1998

Ոչինչ ինձ այնքան չի ուրախացնում,
Որքան փթթող այգին:
Պատուհաններից վեր շարժվող լուսինը ձյան պես
պայծառ է.
Լուսամփոփի տակ ստեղնաշարը հանց ամպրոպ
չխկչխկում է:
Տեսնես՝ դուստրս ինչի՞ կհասնի:

⁷⁵ Դուստրս՝ Լեյեն, վերջերս էր ավարտել Պեկինի համալսարանի Տնտեսագիտության բաժինը: Նոր աշխատանքում նրա առաջին առաջադրանքն էր՝ ուսումնասիրել Չինաստանում փեյջերների ծառայությունը: Ամեն գիշեր տանը երկար աշխատելուց հետո նա ի վերջո համարյա երկու ամսում գրեց մի երկարաշունչ գեկույց: Չեկույցը, որ լի էր ճոխ նկարագրություններով, բազմիցս վերահրատարակվել ու մեջբերվել էր, խոր ազդեցություն թողել նրա գործընկերների վրա:

ԴՍՏԵՐՍ I⁷⁶

Օգոստոս 1998

Ուրախ եմ տեսնել, որ պատրաստ ես բարձր
առազաստով ծով դուրս գալ⁷⁷,
Բայց ես՝ խեղճ հայրս, չեմ զսպում հորդորս.
Թող արժանիքդ առատաձեռն լինի
հանդուրժողությամբ,
Ցած դիր գեներդ ու առաջնորդվիր լայնախոհ
մտածողությամբ:
Թող հաստատակամությունը հասցնի իմացությանս,
Իսկ միտքն իր էությունը գտնի խաղաղության մեջ:
Թող առաջնագծի նավադրոշը փայփայվի,
Բայց «գագաթից գագաթ անցնելիս» երբեք
չմոռացվի⁷⁸:

⁷⁶ Այս բանաստեղծությունը գրել եմ՝ դստերս աշխատանքային գործունեության մեկնարկի պատվին:

⁷⁷ Այս մեջբերումը Լի Բայի «Բարդ ուղի» բանաստեղծության առաջին քառատողից է. «Մի օր երկար քամի կբարձրացնեմ ու կկտրեմ ծանր ալիքները, /Կբացեմ իմ երկնառաք առազաստը ու կկտրեմ կանցնեմ մոլեգին ծովը»:

⁷⁸ Չինարենում «սարից սար» և «երկնքից երկինք» տարածակա- նությունը հաճախ նշանակում է, որ անկախ նրանից, թե ձեր կարծիքով որքան լավն էք դուք, միշտ կա մեկը, ով ավելի լավն է:

ՂԱՏԵՐՍ II⁷⁹

Նոյեմբեր 2000

Բազում են փշերը չանցած ճանապարհի,
Սակավ են վարդերը գառիվերի վրա:
Չաճախ ճանապարհի վերջը Նորի սկիզբն է.
Մշուշից մաքուր՝ պարզ երկինքն է մարդուն
թագավորում:

⁷⁹ Այս բանաստեղծությունը գրվել է հատուկ դատերս համար՝ նկատի ունենալով նրա նոր աշխատանքային գործունեության բազմաթիվ դժվարություններն ու արգելքները:

ԴՍՏԵՐՍ ՀԱՐՍԱՆԻՔԸ

«Գետամերձ քաղաքի մարդ» (Ձիան չենգ գի)

Յոկտեմբեր, 2005

Լապտերների, ծաղկաշղթաների ու երջանիկ
դեմքերի մեջ,
Ես ընկնում եմ տխուր սքանչանքի մեջ,
Իսկ քաղցրահառը իմ սիրտը տակնուվրա է լինում:
Մի ակնթարթում երեկվա թոթովախոս մանուկը
Վերածվեց գեղեցիկ օրհորդի, որ կնության է գնում:
Արդյո՞ք պիտի իմանաս հայրական խղճի խայթերը,
Երբ պատրաստվում ես թերթել նոր էջը կյանքիդ:
Այցելությունները երբեք շատ չեն լինի,
Հիշիր, հանդիպումները կթեթեւացնեն մեզ:

Տիեզերքում ոչ ոք չգիտի՝ որն է սահմանը,
Ամուսնությունը ճակատագրի ուրախ
աշխատանքն է,
Որ ձեզ երկուսիդ այստեղ է բերել ձեռք ձեռքի տված:
Թող հարգանքն ու աջակցությունը ալքիմիկոս լինեն
Ու հրաշք գործեն մեկ բուժիչ ումպից,
Մինչ «դառնաք ծեր, սպիտակ ու քնկոտ»⁸⁰:
Խարիսխը զցվում է, սկսվում է հարսանեկան
ուղեւորությունը:

⁸⁰ Ուիլյամ Բաթլեր Յիթսի (1865-1939) «Երբ ծերանաս» հայտնի բանաստեղծության առաջին տողը:

ՄԱ ՔԱՅ

Եղեք սիրահար թռչունների պես՝ ու հենց
մեկնարկից՝ թռեք մի թելի վրա⁸¹,
Եվ հիշեք վերցնել ձեզ հետ «ուխտավորի ոգին»:

⁸¹ «Բարձրում կլինենք երկու սիրահար թռչուն, որ թռչում են թև թևի,
/Երկրի վրա երկու ծառ՝ ճյուղերով/ Գարունից գարուն ընդմիջտ
միմյանց միահյուսված»: Այս տողերը մեջբերված են Բայ Ջուլիի
հայտնի «Անավարտ վշտի երգ» բանաստեղծությունից, որոնք ցույց են
տալիս հավերժ միմյանց հետ լինելու սիրահարների ցանկությունը:

ՊՏԴԻ ՍՐՏԻ ՏՐՈՓՅՈՒՆԸ⁸²

Կես խանդավառ, կես հռետես՝ ականջներս սրած
լսում եմ,

Թե ստետոսկոպը երբ կսկսի աղմկել:

Օ՛, սրտիկ, ինչու՞ ես այսպես տենդագին տրոփում:

Փոքրիկն անհամբեր սպասում է պապի հետ
հանդիպմանը:

¹ Երբ դուստրս հղիության չորրորդ ամսում էր, փոքրիկի սրտի տրոփյունն արդեն լավում էր հատուկ ստետոսկոպով: Նրա սրտի զարկերի արագությունը՝ ընկած 140-160 էր, ինչն անհավանական էր ինձ թվում:

ԹՈՌԱՆ ԾՆՈՒՆԴԸ⁸³

Փետրվարի 21, 2007

Այս Նոր տարվա օրը հրավառության աղմուկը

Միանում է Ջիջիային ու շտապում թակել դեռ

փակ դուռը:

-Ահա եւ ե՛ս,- փխրուն ձայնով մեկեն ճչում է նա.

Ներս է գալիս փոքրիկը՝ աքացի տալով ու առողջ:

⁸³ Իր ծննդյան սպասված օրից շատ առաջ թռռնիկս՝ Ջիջիան, այլևս չէր կարող սպասել: Փետրվարի 15-ին նա այնպիսի խուճապ առաջացրեց, որ փետրվարի 18-ին դատերս տեղափոխեցին հիվանդանոց, և այդ օրը համընկավ լուսնային Նոր տարվա հետ, երբ երկնքում մեկը մյուսի ետևից հրավառության կրակներ էին: Փետրվարի 20-ին՝ ժամը 23:48-ին, ծնվեց Ջիջիան, համարյա 3.5 կիլոգրամ քաշով:

ՏՈՒՆ՝ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՀԵՏՈ

Նվիրում եմ թոռնիկիս ծննդյան երկրորդ տարեդարձին

Փետրվար 2009

Հագիվ եմ տվել զանգը, ոտքերս ծանրացել են
հոգևած ոսկորներից,

Նա մոտենում է դռանը՝ պապիկ կանչելով:

Հոգևությունս անցնում է, երբ հողաթափերս եմ
տեսնում փոքրիկի ձեռքին.

Ոգեւորվում եմ՝ լսելով մանկական ոտանավորների
քաղցր հնչերանգները:

Նրա խզրզանքների մեջ գրավիչ պատկերներ եմ
գտնում.

Մոռանում եմ տարիքս, երբ մասնակցում եմ նրա
մանկական խաղերին:

Քնի մեջ աղոտ զգում եմ՝ մորուքս պոկում են, ձգում,
Ու անկախի ինձնից՝ արթնանում եմ առույգ քրքիջով:

ՋԻՋԻԱՆ ԴԱՌՆՈՒՄ Ե ԵՐԵՔ ՏԱՐԵԿԱՆ

Փետրվար 2010

Երեք կիլոգրամ երեք հարյուր գրամ, երեք
նոտաչափ երկարությամբ,
Ամեն օր տղան զբաղված է դրոշ բարձրացնելով:
Երգում է ազգային օրհներգը, զարմացնում է
բոլորին,
Եվ գերազանցում է բոլորին իր երեւակայությամբ:
«Թիթեռնիկ սիրահարներից»⁸⁴ հետո հաջորդը
«Էյ Բի Սին»⁸⁵ է:
Ֆուտբոլ է խաղում՝ տեգեր ու փայտեր
քարշ տալով:
Չետաքրքիր է՝ ո՞վ է արթնանում վաղ լուսաբացին:
Ոչ ոք, միայն նա՝ երեքամյա փոքրիկը մեր:

⁸⁴ Խոսքը «Թիթեռնիկ սիրահարները» ջութակի համերգի մասին է, որը 1959 թվականին գրել են Չեն Գանգն ու Հե ժանհաոն, ինչը թոռնիկիս սիրելի երաժշտական դասերից է:

⁸⁵ Սա էլ անգլերենի դասն է:

ՋԻՋԻԱՅԻ «ՑԱՍՈՒՄԸ»

Փետրվար 2011

*Ջիջիան հիմա չորս տարեկան տղա է, բայց
ժամանակ առ ժամանակ իր մեղմ շարժումների համար
Նրան սխալմամբ աղջիկ են կոչում: Երբ այդպես
ծաղրում են, նա հոնքերը կիտում ու խոժոռվում է,
որովհետեւ դա նրա համար սարսափելի է:*

Գեղեցիկ դեմք, ավելի գեղեցիկ մաշկ, ավելի
թարթիչներ,
Դրա համար էլ Նրան աղջիկ են համարում:
Փայտը ձեռքն առած՝ ճչում է զայրացած.
-Ո՞վ է համարձակվում ինձ աղջիկ կոչել:

ԿՐՏՍԵՐ ԹՈՌԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Հոկտեմբեր 2011

I. Ուրախ լուրեր

Երբ աշնանը քամու զովությունը լցվում է այգին,
Վայրի ինձորներն ու արմավները կախվում են
ծառերից:

Ու՛մ են ողջունում շաղակրատող կաչաղակները:
-Ես արդեն գիտեմ,- երջանկությունից շողում է
ավագ եղբայրը:

II. Աղջիկ թե տղա, երկուսին էլ՝ բարով գան

Աղջիկ էր սպասվում, բայց եւս մի տղա ծնվեց:

Ձիջիան շողում է ուրախությունից, իսկ մայրիկը
խաղաղ է:

Քանզի իր կողքին սրանք կհեծնեն բամբուկի ձիեր,
Ծեր հասակում նա կունենա օգնական:

III. Անվանման երկընտրանք

Ավա՛ղ, նրան անուն տալն ավելի բարդ է, քան
դիմանալը:
Փնտրեցինք բառարաններում ու գրքերում,
եւ ոչ մի օգուտ:
Բոլորը փորձում են անուն հորինել, բայց
չի ստացվում:
Միայն եղբայրն է պնդում, որ Թիանթիան
կոչեն նրան:

IV. Ծնվեց ճիշտ ժամանակին

Դեռ ժամանակը չէր, բայց էլ չէր կարող սպասել,
Երբ իրարանցում առաջացրեց, հաստատեց դա:
Մինչդեռ սրտում գիտեր, թե ինչ է լինելու.
Ճիշտ ժամանակին ճշալով՝ նա ասես քրքջաց:

V. Ու՛մ է նման

Խիտ մազեր, ճերմակ դեմք,- ու՛մ է նման:
Եղբորը՝ գլուխն ուղիղ, նուրբ հոնքերով:
Քսան տարի անց հրաշալի գույգ կլինեն
Ու թեւ թեւի տված՝ կսավառնեն նրանք
անհուն երկնքում:

ՄԻՋԱՇՆԱՆԱՅԻՆ ՏՈՆԸ՝ ԱՐՏԱՍԱՅՄԱՆՈՒՄ

I. Տևից «կտրված»⁸⁶

Սեպտեմբեր 21, 2002

Տևից շատ հեռու՝ սառն էր գիշերը.
Տրտում Դանուբի մոտ լիալուսինը նման էր գրոյի:
Երաժշտական քաղաքում⁸⁷ «Նոստալգիան»
համր էր.

Գրչածայրից կարոտս էր ծորում:

⁸⁶ Միջաշնանային չինական ավանդական փառատոնի գաղափարը ընտանիքի վերամիավորումն է: 2002 թվականին փառատոնը սեպտեմբերի 21-ին էր, ու իմ ընտանիքն իր պատմության մեջ առաջին անգամ լրիվ բաժան-բաժան էր: Կինս Թայուանում էր՝ Շանսի նահանգում, դուստրս մենակ էր տանը՝ Պեկինում, իսկ ես Վիեննայում էի՝ որպես Չինաստանի կառավարական պատվիրակության անդամ:

⁸⁷ Խոսքը Վիեննայի մասին է, որ հայտնի է՝ որպես Ավստրիայի և թերևս ամբողջ աշխարհի «երաժշտության մայրաղաք»:

**II. Միջամառային փառատոն՝
դարձյալ արտասահմանում**

Սեպտեմբերի 11, 2003

Լիալուսնի փառքը դարձյալ անօգուտ է⁸⁸.
Օտար երկրում լապտերը ստվերս է ուղեկցում:
Կարոտը քուլա-քուլա սահում է դեպ լուսին,
Կարո՞ղ է աստվածուհի Չանգ Էհը տեղ հասցնել
պատգամս:

⁸⁸ Այս բանաստեղծությունը գրել եմ 2003 թվականի սեպտեմբերի 11-ին՝ Միջամառային փառատոնի ընթացքում, Ռուսաստանում Չինաստանի դեսպանատանը, երբ գլխավորում էի Մոսկվա ժամանած չինական պատվիրակությունը՝ Էներգիայի մատակարարման ռուս-չինական բանակցություններին մասնակցելու նպատակով:

**ՄԻՋԱՇՆԱՆԱՆԱՅԻՆ ՄԻԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ
ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է**

- «Երկնքից մաքրված ավազներ» *(Տիան ջինգ շա)*

Սեպտեմբեր 2010

*Ընտանիքս երրորդ անգամ բաժանվեց, երբ
դարձյալ Միջաշնանային փառատունն էր:
Կինս մեր թոռնիկի հետ մնաց Պեկինում, դուստրս
մեկնել էր Միացյալ Նահանգներ, իսկ ես գործուղման
էի մեկնել Տիանշան սարեր: Երբ հեռախոսով խոսեցի
կնոջս ու դստերս հետ, կարոտաբաղձությունը նորից
համակեց սիրտս:*

Սառը լուսին, ավելի ցուրտ աշուն, հեռու
սահմաններ,
Միայնակ ամպեր, ավելի միայնակ կռունկ, դատարկ
տաղավարներ,
Ծաղիկները թռչնում են, ես կրկին հեռու եմ, բայց
հարատեւում է մեր սերը:
Երբ ողջույններ ես փոխանակում,
Ջերմությունը դեպի սիրտն է հոսում:

**ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ՄԵԿՆՈՒՄ ԵՆ ՆԵՐՔԻՆ
ՄՈՆՂՈՒԻԱՅ՝⁹⁰**

«Գետամերձ քաղաքի մարդ» *(Ձիան չենգ գի)*

Մարտ 1969

Գնում եք դուք՝ հյուսիս, հարավ, արեւելք,
արեւմուտք:

Լքում եք տունը,

Ծիծաղը կպակասի:

Այս աշխարհում սահմաններ չկան,

Դժվարությամբ առաջ շարժվեք ձերի պես:

Նույնիսկ եթե ավագահողմից ճակատ խորշումվի,

Կամ եթե ուղեւորությունը բյուր լիզեր տեւի,

Ուղին ձեր չեք կորցնի:

Ամենատարաշխարհիկը խոժոռված գագաթների
տեսարանն է:

Երկնային սանդուղք փոխ առեք

Երկնքի բարձրերը հասնելու համար:

Անսահման դյութիչ տեսարաններից վեր,

Լոկ արագիլներն են կարող լույս տալ երկնքի

բարձրությունից:

Այն օրը, երբ Յայրենիքն իր մոտ կանչի ձեզ,

Մի՞թե բարձրագույն հավատարմությամբ

Օժտյալները կսարսափեն գորշ արջերից:

⁹⁰ Այս բանաստեղծությունը նվիրված է իմ դասընկերներին, որոնք 1968 թվականի կեսերին հեռացան Պեկինի չորրորդ միջնակարգ դպրոցից՝ Ներքին Մոնղոլիայի ինքնավար շրջանի Արտադրության և շինարարության ջոկատներում ընդգրկվելու նպատակով:

ԱՄԱՌԱՅԻՆ ՊԱԼԱՏՈՒՄ՝ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ⁹¹
«Գետափնյա քաղաքի մարդը» (Ձիա չենգ գի)

Մայիս 1973

Մենք հավաքվեցինք, երբ հողը ողողված էր
կանաչով:
Բարձրաբերձ բլուրներ անուշահոտ,
Մենք գրուցեցինք, ու մեր զգացմունքները
միախառնվեցին:
Երկու անգամ դասընկերներ լինելով՝
Մենք երեքս արդեն ընկերներ էինք:
Եվս յոթ տարի անցավ անձրեւի ու քամու հետ,
Բայց ամուր բնի վրա
Տերեւները չեն թռչնում:
Գարնանային պատշգամբ, Գարնան
ազդարար-տաղավար,
Ծիծեռնակները երկշար պտտվում են,
Բազում նոր ուռենիներ են աճում:
Բողբոջներ՝ փոքր ու խոնավ,
Դուրս են գալիս անձրեւին ու շաղին:
Երբ վերամիավորվենք, ծվւլոցը կլցնի հին
հաճախավայրը,
Որտեղ տեսարանները նոր երանգներ կառնեն,
Եվ ծառերը կաճեն՝ վերածվելով ամուր
փայտանյութի:

⁹¹ 1973 թվականի մայիսի 26-ն էր, վայրը՝ Պեկինի ամառային պալատը: Երկու ընկերների հետ, որ սովորել էին ինձ հետ (համապատասխանաբար երեք տարի՝ կրտսեր դայրոցում և երեք տարի՝ ավագ դայրոցում), դարձյալ այցելեցի այս հին ապաստարանը, որտեղ մենք գնում էինք նավարկելու, բլուրներ էինք մագլցում, միասին հիշում էինք մեր անցյալը և նայում ապագային:

ՀԱՎԱՔ ԴՊՐՈՑՈՒՄ⁹²

Հոկտեմբեր 1995

Դարձյալ հանդիպում ենք երեք տասնամյակ անց,
Կյանքի ուղիներում մեր տաղանդը փթթել է:
Նորածեղությունը ծաղկում ու խամրում է,
Մինչդեռ դպրոցի ոգին⁹³ երբեք չի ջնջվում:

⁹² 1959-1965 թվականներին սովորել եմ Պեկինի Չորրորդ միջին դպրոցում: 1995 թվականի հոկտեմբերին Ավագ դասարանի նախկին առաջին դասարանի դասընկերները հավաքվել էին Միյուն ջրամբարի մոտ՝ անցյալի հիշողությունները թարմացնելու:

⁹³ «Ջանասիրություն-Խստություն-Պարզություն». սա Պեկինի չորրորդ միջնակարգ դպրոցի սկզբունքն է: Այսքան տարիներ են անցել, սակայն սկզբունքը պահպանվել է շրջանավարտների կյանքում և դեկավարում է հասարակության բոլոր փոփոխությունները:

ԸՆԿԵՐՆԵՐԻՆ⁹⁴

1997

Երեխա էինք, երբ առաջին անգամ հանդիպեցինք
դպրոցում,
Գիտության օվկիանոսում բարձրագույն փառքի
համար էինք մրցում:
Սրտի խորքում հետապնդում էինք նպատակը նույն,
Քաղցրադառն օրեր էինք կիսում քարոտ
ճամփաներին:
Մեր համակրանքը շարունակվում է, ջրի պես վճիտ.
Ամեն մի ակնարկ, երբ էլ որ անեն, անձայն
որսվում է:
Ամեն անգամ, երբ հայտնվում եմ
երկրնտրանքի դեմ,
Ձեր առաջ անվարան դատարկում եմ սիրտս:

⁹⁴ Պեկինի Չորրորդ միջնակարգ դպրոցի մի շարք դասընկերներ պահպանել են կապը միմյանց հետ՝ որպես ընկերներ կամ գործընկերներ: Վերջին երեսուն կամ ավելի տարիների ընթացքում մենք միասին անցել ենք դժվար ու հեշտ ճանապարհներ և պատրաստ ենք անվերջ օգնել իրար: Անշուշտ, մենք տղաներ ենք, որ անկեղծությամբ ու ջերմությամբ ենք վերաբերվում միմյանց:

ՀԵՏՃԱՇՅԱ ՉԲՈՍԱԼՔ⁹⁵

1998

Կանաչ ուռենիները, լճի փետրազարդ քամին.
Թեյը մպումից հետո ճանապարհ ենք ընկնում:
Իմաստուն խորհուրդները վերանայվում են
դասականներից մեջքերումներով,
Երբ խոր հոգոց ենք հանում օրվա հոգսերից:
Քամու մեջ զնգում է ծիծաղը եւ տեւում են սրտանց
գրույցները.
Հոսող ջրի հետ հեռանում է հոգևությունը:
Ճանկելով հանգստության այս մի պատառիկը՝
Վերադառնում ենք՝ մեր գրասեղանների
վրա հակվելու:

⁹⁵ 1998-2003 թվականներին Պետական խորհրդի գլխավոր գրասենյակի ղեկավարման ընթացքում ես ամեն օր՝ նախաճաշից հետո, գործընկերներիս հետ զբոսնում էի Ժոնգնանհայում՝ լճի մոտ, կեսօրին, աշխատանքը շարունակելուց առաջ հանգստանալու նպատակով:

ԸՆԿԵՐՈՋՍ⁹⁶

2002

Մաքուր հայելու միջով բացելով դուռը՝
Աչքերս հառում եմ մաքուր ու կոկիկ իմ տան վրա:
Ընդարձակ հյուրասենյակը ողողված է
արծաթագույն լույսով,
Մանուշակագույն ճառագայթները լիզում են
փորագրված դռան վարագույրը:
Իմ փոքրիկ աշխատասենյակը ննջում է հանգիստ.
Աղջկաս գարդախցի վրա կախված է քաղցր
մի բույր,
Արեւելքը հանդիպում է Արեւմուտքին իմ տան
մթնոլորտում.
Չետաքրքիր է՝ ո՞վ է հեղինակը:

⁹⁶ Այս բանաստեղծությունը նվիրված է իմ նկարիչ ընկերոջը, որն ինձ առաջարկեց բնակարանի ձևավորման պարզ, բայց նրբագեղ ծրագիր, երբ տունս ձևավոխելու ճիշտ ժամանակն էր:

Ի ՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐԻՍ

Լուսնային Նոր տարի 2003

Որպես գործընկերներ՝ հինգ տարի ազատ
զրուցում ենք.
Ժամանակի հետ ընկերությունը մեր հասունանում է
ալ խնձորի պես:
Երբ խորհում ենք աշխարհի մասին
անցյալ ու ներկա,
Սրամիտ ու կծու հումորի հետ հանգիստ հոսում է
ծիծաղը:
Ծարավի եմ ձեր խորհրդին, սիրում եմ մեր
երկարատեւ զբոսանքը,
Եվ չեմ սիրում հեռանալ, երբ բաժանման պահն է
մեկեն գալիս:
Ավա՛ղ, կլքեք դուք ինձ մարտյան քամու
մեջ անփոր⁹⁷,
Բայց ուր էլ գնաք, մեր գարունը չի լքի մեզ:

⁹⁷ 2003 թվականի մարտին իմ գործընկերները մեկնեցին տարբեր վայրեր՝ աշխատանքային նոր առաջադրանքներ կատարելու:

ՍՐԵԼՈՎ ՊՈՇՏԱԿԱՆ ԱՐՎԵՍԸ

-Ըստ Ժենգ Սինմիաոյի բանաստեղծության⁸⁸
«Լվանալով ծովախորշի ավազները» (Յուան սի շա)

Փետրվար 18, 2005

Ուշ եմ ժամանել ես արձակի թագավորություն,
Որտեղ ութ հնչյուն, հինգ ճաշակ⁹⁹ է արձագանքում
միտքս,
Լայնարձակ հայրենիքը՝ խոր փորագրված
երազներում:

Չաճախ ստիպված եմ սրել միտքս, որ ծիծաղեցնեմ
ուրվականներին.
Սոսկ անկեղծ զգացմունքներով կարող եմ ապշեցնել
քամուն ու անձրեւին:
Լարելով գրելաոճս՝ մի երրորդ անգամ
կարդում եմ նորից:

**ԿԱՐԴԱԼՈՎ ՔՈՒ ՅՈՒԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹⁰⁰**

Յունվար 2006

Կարդալով Քու Յուանի հանգերը՝ խորհրդածում եմ՝
Նրա հավատարմությունն ու վիշտը ստիպում են
երկնքին արտասվել:
Բանաստեղծը բախտավոր կլիներ Նրա մոտ,
Նրա համար կլուսավորենք ուղին, արեն
ընծայելով նրան:

¹⁰⁰ Այս բանաստեղծությունները տպագրված են չորս գրքում՝ չինական հրատարակություններով. «Ինը երգի» ընթացիկ թարգմանություն, «Ինը գլխի» ընթացիկ թարգմանություն, «Հրաժեշտի ողբի» ընթացիկ թարգմանություն և «Ոգու ժողովման» ընթացիկ թարգմանություն:

ՄԱԳՆՈԼԻԱՅԻ ՓԱՌԱՏՈՆ ԴԱԺՈՒԻ ՏԱՃԱՐՈՒՄ

Շեն Փենգի¹⁰¹ պոեզիային նվիրված գիտաժողովում

Մարտ 2006

Հին տաճարի մոտ լսելիքդ գոհանում է
վեհությունից,
Երբ մագնոլիայի բույրը արտացոլում է թարմ
բանաստեղծությունները:
Ինչու՞ են կանաչ շուքի մեջ հազարամյա ծառերը:
Քանզի գարնանային քամին սլանում է
դարերի միջով:

Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՇԵՆ ՓԵՆՂԻ

Մայիս 8, 2006

Այս չափածոն, որ գրվել է ըստ Շեն Փենգի՝ ինձ համար սիրով գրված բանաստեղծության հիման վրա¹⁰², ստեղծվել է նրա «Հատընտիր բանաստեղծություններ՝ գրված եռակի ազատ ժամանակ» գրքի ներշնչանքի ներքո:

Իմ սրտում հիացմունքն ու վախն են թեժանում:
Որքա՞ն եմ զղջում, որ ավելի շուտ չկարդացի ձեր
քերթվածները:
Անկեղծությունը ձեր, որ անվերջ հոսում է
թղթի թերթերից,
Շոյիչ անձրեւի պես տեղում է իմ հոգում:
Հառաչելով այս դարից՝ կանխատեսում եք
ապագայի վշտերը.
Արհամարհելով ունայնությունը՝ ուրիշների
համար եք ջանում¹⁰³:

¹⁰² Շեն Փենգի բանաստեղծությունը. «Շատ ուշ չէ՝ քեզ հետ ծանոթանալու համար, /Եվ գիրքը ձեռքին՝ գրուցել կյանքի մասին: /Երբ փոքրիկ գրույցը հոսում է մեր գրչածայրերից, /Լսելի են քամին ու անձրևն աշխարհում: /Քաղաքացիական ծառայողը գուցե հարյուր հոգս ունի, /Փառքը չնչին է, երբ սովորական է դառնում: /Միայն օրվա ընթացքում գրասեղանիդ մոտ ճգնելուց հետո, / Գրական ներշնչանքը մեծանում է, իսկ գիշերը՝ թանձրանում»:

¹⁰³ Շեն Փենգը երկար ժամանակ աշխատել է որպես արվեստի բաժնի խմբագիր: Ինչպես գրել է բանաստեղծության մեջ՝ «Մի րոտս ջերմանում է, երբ հարսանեկան կոստյումներ եմ կարում ուրիշների համար, /Կորցնում եմ իմ եսը, ու լայնանում եմ հորիզոններն իմ»:

Տեղավորված երեք հազար էջի վրա¹⁰⁴
Գրչածայրից վիշապներն են ողջ-ողջ դուրս նետվում:

¹⁰⁴ Շեն Փենգը հետևյալն է ասում մեկ ուրիշ բանաստեղծության մեջ. «Հազար էջը կարող է շատ քիչ բան ասել, /Իսկ չափածոյի կես տողը շատ բան է նշանակում»:

ԳԵՂԱԳԻՐ-ԲԱՆԱՍՏԵՂՆԵՐԻ ՀԱՎԱՔ

*Հանգուցավոր գրի վարպետների հավաքին
մասնակցելու մասին*

Նոյեմբեր 2006

Ճանապարհը հարցնելուց հետո՝ հասնում եմ
դահլիճ,
Եվ տեսնում եմ Ուայլդ Ժենգին, սարսափահար օձ,
արբած սուսերամարտիկ¹⁰⁵:
Հին թանաքի մեջ թաթախված նոր վրձինները
արբեցնող բույր են արձակում.
Իսկույն պոետական կենդանությունը դրոշմվում է
հանգուցավոր գրին:

¹⁰⁵ Այդ հավաքի ընթացքում ես իրականում տեսա հանգուցավոր գրի ցուցադրական աշխատանքներ, որոնք ձևավորված էին ըստ գեղագրության շինական դպրոցի երեք մրցակից գորուներին: Ուայլդ Ժանգը հենց ինքը Ժանգ Սուն է (675-750?), որը ստացել է Թանգ դինաստիայի «ուժ անդրանցական հարբեցողներից մեկը» մականունը՝ անդրանցիկ բանաստեղծ Լի Բայի հետ, բայց նա ավելի հայտնի է իր հանգուցավոր գրի համար, ինչի պատճառով էլ համարվում է այդ դինաստիայի «Երեք եզակի հրաշքներից» մեկը, իսկ մյուս երկուսը Լի Բայի պոեզիան և Փեյ Ուենի սուսերամարտն է: «Սարսափահար օձը» Թանգ դինաստիայի վանական-գեղագիր Շի Յալուի հանգուցավոր գրելաճճն է, որը, որպես այդպիսին, կարելի է համեմատել «Մավառնող թռչուններ, որ սուզվում են անտառի մեջ, /Սարսափահար օձեր, որ կռանում են մոլախոտի մեջ» տողերի հետ: «Արբած սուսերամարտիկը» Սոնգ դինաստիայի գեղագիր Սի Ֆուն է (1051-1107), որի վագող գիրը միավորում է շարժուն կետանկարչությունը սահող վրձնահարվածների հետ, որոնք ստեղծում են արբած սուսերամարտիկի մարտի տեսարանը:

Ի ՊԱՏԱՍԽԱՆ ՎԱՐՊԵՏ ՇԵՆ ՓԵՆՂԻ¹⁰⁶

Նոյեմբեր 2006

Թվացյալ դյուրանքի մեջ Շենի գլխարկը դրվեց
 իմ գլխին,
 Սխալ, որ անշուշտ, հանգիստ չի տալիս մտքին:
 Իր բարի եությամբ Շենը հարթեց հարցը¹⁰⁷,

¹⁰⁶ Անփութության պատճառով կրկնօրինակի խմբագիրը Շեն Փեն-գի բանաստեղծությունը շփոթել էր իմ բանաստեղծության հետ և հրատարակել այն Չինական պոեզիա ամսագրի՝ 2006 թվականի 10-րդ համարում: Երբ իմացա դա, թյուրիմացության մասին հայտնեցի Շենին, որը բարի գտնվեց ու հաջորդ օրը պատասխանեց ինձ բանաստեղծությամբ և երկտողով. «Ես հենց նոր հաղորդագրություն ստացա ընկեր Մա Քայից, որն ինձ անկեղծորեն ասաց, որ իմ բանաստեղծություններից մեկը տպագրվել է սխալմամբ իր անունով»: Նրա «Մա Քային, կատակով» բանաստեղծությունը. «Ուշադրության մի փոքրիկ սայթաքում ավարտվեց լավ պատմությամբ./*յու*-ին ու *յու*-ին պետք հատուկ ուշադրություն դարձնել: /Փոքրիկ թյուրիմացությունը կարող է հանգեցնել կոպիտ սխալի./ Մինչդեռ այս դեպքում կարծես նույն ջուրն է հոսում հարավից հյուսիս: (Երկրորդ տողում *յու*-ն և *յու*-ն նշանակում են համապատասխանաբար չինարենի 𠄎 և 𠄏 տառերը, որոնց նմանատիպ կառուցվածքն այնքան շփոթեցնող է, որ հաճախ հանգեցնում է սխալների. նույն սխալը հաճախ պատահում է նաև *հայ* 亥 և *չի* 豕 նշանների միջև: Վերջին տողը՝ «Հոսում է հարավից հյուսիս», նշանակում է, որ Շենը հարավցի է, մինչդեռ ես, չնայած բնիկ Շանհայից եմ, հյուսիսիցի եմ, որովհետև ծնվել եմ Շանսի նահանգում:

¹⁰⁷ Շենի վերոնշյալ բանաստեղծությունը՝ «Գիշերը ընթերցելիս», որն ընդգրկվել է Չինական պոեզիա ամսագրում, հետևյալն է. «Երբ հեռու եմ ձանձրալի իրարանցումից, /Նստած, այս մալլ անձրևոտ գիշերով /Միայն մի լամպի ներքո կարդում եմ, /Պիտի շատ արագ կարդամ: /Մինչև ծաղկեփնջերը կթափվեն կիսահալ ձյան մեջ./ Ամուր հանգույցներից կաճեն սխտորներ: /Փարթամ ու վայրի խոտը տան ետևում/ Սփոփում է թափառաշրջիկիս քիչ թե շատ:

ՄԱ ՔԱՅ

Ինչպիսի երջանիկ սխալ էր ճակատագրի կողմից,
պիտի ասեմ¹⁰⁸:

¹⁰⁸ Սայթաքունը հետաքրքիր է, այն իմաստով, որ հեղինակը կարծում է, թե բանաստեղծությունը նաև իր մտքի արտացոլումն է: Հեղինակի անվան սխալը կարելի է մեկնաբանել՝ որպես Երկնի կամքով թույլ տված «երջանիկ սխալ»:

Աշխարհի հեղեղուկության միջով

3. ՀԵՂՅԵՂՈՒԿՈՒԹՅՈՒՆ



ԵՐԿԱՐ ՃԱՆԱՊԱՐՅ ԴԵՊԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

-«Բոսորագույն գետի միջով» (Ման ջիան հոնգ),
նվիրվում է Ժողովրդական Հանրապետության
վաթսուներորդ տարեդարձին

Հունիս 2009

I. Վերածնունդ

Հեղեղուն Միլուոն, մենակ,
Լսում է երկնային հարցը¹⁰⁹,
Շարունակ հոսում ու հոսում է:
Մաքուր եւ տեղյակ էր Վեն-Ջինգի կարթածողը¹¹⁰,

¹⁰⁹ Միլուո գետի մատույցներում, աքսորի ընթացքում հայրենասեր բանաստեղծ Քու Յուանը գրել է «Ողբ», «Հարցրու երկնքին» և մի շարք այլ լեզունդար բանաստեղծություններ: Նրա «Ողբ» բանաստեղծության հետևյալ տողը հետագա սերունդներին ներշնչել է Չինաստանը դարձնել ուժեղ և քարգավաճ երկիր. «Ճանապարհը երկար է ու թվում է՝ թաղված է խավարի մեջ /Բայց ես գնում եմ իմ անհետացած երազի ետևից»:

¹¹⁰ Իրենց թագավորության ընթացքում կայսր Ուենը (թագավորել է մթա. 179-157թթ.) և կայսր Ջինը (թագավորել է մթա. 156-141 թթ.) վարում էին ցածր հարկերի քաղաքականություն, որպեսզի երկիրը վերականգնվեր պատերազմի ու խառնաշփոթի երկար տարիներից հետո: Այդպես մեկնարկեց մաքուր կառավարման ու տնտեսական աճի ժամանակաշրջանը Արևմտյան Հան դինաստիայի վաղ շրջանում (մթա. 206-մթ.25): Երկու թագավորների թագավորության ժամանակահատվածը սովորաբար նմանեցվում և կոչվում է «Ուենի ու Ջինի կառավարում»:

Ժենգուանի թագավորությունը¹¹¹ գերազանցեց մյուս
թագավորություններին,
հշխանության գլխին Քանգն ու Քիանը¹¹²
անզուգական էին:
Արեամուտին բոլոր փառքերն անհետացան, երբեք
հետ չեն դառնա,
Լուսինը ծխամշուշի մեջ՝ ավելացնում է թախծալի
խավարը,
Աչքերը հառած դատարկ երկնքին,
Ոտքերը աստանդականի պես քարշ տալով,
Իսկ սիրտը՝ սառած ու ցավոտ:
Հարյուր օր տեսած Բարեփոխումը¹¹³ ձախողվեց,

¹¹¹ Ժենգուանի ժամանակաշրջանը (627-649) Թանգ դինաստիայում կայսր Թայզոնգի թագավորության օրոք (թագավորել է 627-649թթ.) իսկական ջրբաժան էր Չինաստանի պատմության մեջ և նշանավորվեց աննախադեպ քաղաքական, տնտեսական ու մշակութային բարգավաճմամբ: Պատմության մեջ հիշատակվում է՝ որպես «Ժենգուանի կառավարման շրջան»:

¹¹² Քինգ դինաստիայի (1616-1911) այս 130-ամյա ժամանակաշրջանը սկսվեց կայսր Քանգսիի օրոք՝ երեք հեռավոր պրեֆեկտուրաներում բռնկված ապստամբություններով, և իր գագաթնակետին հասավ կայսր Քիանլոնգի կառավարման օրոք (1736-1795), երբ երկիրն առաջատարն էր աշխարհում տնտեսական հագեցվածությամբ, տարածքով, որ զգալիորեն մեծացել էր, բնակչությամբ, որը գերազանցում էր 100 միլիոնը, և ծաղկող տնտեսությամբ: Այնուամենայնիվ, այդ ժամանակաշրջանը համընկավ, այսպես կոչված՝ «փակ դռան» քաղաքականության մեկնարկի հետ, և երկրի բարգավաճումը դադարեց, ինչը նաև ֆեոդալական Չինաստանի «կարապի երգն» էր:

¹¹³ Չախողված մշակութային, քաղաքական ու կրթական բարեփոխումը մեկնարկեց 1898 թվականի հունիսի 11-ին, կայսր Գուանքսուի նախաձեռնությամբ (կառավարել է 1875-1908 թթ.), այնպիսի բարեփոխողների աջակցությամբ, ինչպիսիք են Քանգ Յուվեյը (1858-1927) և Լիանգ Քիչաոն (1873-1929), և ավարտվեց 103 օր անց՝ 1898 թվականի սեպտեմբերի 21-ին, հեղաշրջմամբ, որը կազմակերպվեց հզոր պահպանողականների կողմից՝ կայսրուհի Դովագեր Սիբսիի ղեկավարությամբ (1835-1908):

II. Հիմնաքար

Արելը ծագեց արելելքում.
Քանդված պատեր ու ավիրված հող,
Նրանք սպասում էին վերակառուցման:
Մեծ նախաձեռնությունն ընթացքի մեջ էր,
Ոմանց համար՝ օրհնություն,
Ոմանց համար՝ աղետ:
Սալորենու ծաղիկները հրաշալի էին ձյունածածկ
ոստերի վրա,
Դրոշները ծածանվում էին մեղմ, չնայած ավող
արեւմտյան քամուն:
Բոլոր աղեղները մեկի պես կորացան,
Աշխարհը կրկին լցվեց եռանդով,
Իսկ ամպերը նոսրացան դարձյալ:

Աղքատությունը հեղափոխական իղձեր
արթնացրեց,
Բլուրներ քանդելը կոչից վերածվեց տենչի:
Կարիքը ծնեց նվաստացում,
Բայց ազգային վերածնունդը պարտադրեց
պայքար:

Սևկի ամպերը¹¹⁷ բարձրացան երկինք՝
Գերելով մի ամբողջ ազգ:
Մեկ տասնամյակ տեւած քառսն ավարտվեց
որոշումներով սխալ ու ճիշտ,

¹¹⁷ Խոսքը առաջին ատոմային ռումբի մասին է, որ Չինաստանը փորձարկեց 1964 թվականի հոկտեմբերի 16-ին, իսկ առաջին ջրածնային ռումբը՝ 1967 թվականի հունիսի 17-ին:

Գարունը եկավ որոտալով, երբ հրոսակախումբը¹¹⁸
գլխիվայր շրջվեց:
Նոր ուղեգծով
Վիթխարի նավը գնում է առաջ՝ քամին
հաղթահարելով:
Ռ՞վ կարող է խանգարել նրան:

¹¹⁸ Հրոսակախմբի անդամներն էին՝ Վան Հոնզվեն (1935-1992), Ժան Չունքիտոն (1917-2005), Յյան Քինգը (1914-1991) և Յաո Վենյուան (1931-2005), որոնք ձերբակալվեցին 1976 թվականի հոկտեմբերի 6-ին, Ժոնգնանհայում, իսկ 1980 թ. նոյեմբերի 20-ից մինչև 1981 թ. հունվարի 15-ը Պեկինում ընթանում էր նրանց դատավարությունը: Ըստ 1977 թվականի հուլիսի 21-ին հաստատված, Կուսակցության տասներորդ կենտրոնական կոմիտեի երրորդ լիակազմ նիստի հայտարարության՝ հրոսակախումբը «կարիերիստների հակահեղափոխական խառնախումբ էր, որը դեմ էր հիմնական սկզբունքին՝ հետևել մարքսիզմին, ոչ ռեվոլյուցիոնիզմին, խրախուսել համախմբվածությունը, ոչ մասնատվածությունը, լինել բաց ու բարձր, չլինել կարիերիստ», և մտադրվել էր մասնատել կուսակցությունն ու զավթել նրա ղեկավարությունը:

III. Մեկնում

Գարունը երկիր է վերադառնում.
Սառցե երկինքը դանդաղ հալչում է,
Ուժը հավաքվում է գետերում:
Յեղեղներն ավեկոծվում են,
Շղթաները՝ փշրվում,
Յազար լաստանավեր ետուառաջ են նավում:
Փախուստը հուշում է՝ օրենքները պիտի շտկվեն
արդարորեն.
Յամակարգային փոփոխությունը պահանջն է
ժամանակի:
Կրկին բարձրանում է առագաստը՝
Ուղիղ դեպի երկինք,
Երկնային հսկա թեւերի վրա:

Դարի նվաստացումը
Պատմության աղբաման է նետվում:
Երազը ձմեռում է
Լուսաբացի արթնության մեջ:
Թող տեսնենք մարդկանց հարուստ ու երջանիկ,
երկիրը՝ բարգավաճ,
Նոր դարում ներդաշնակություն ակնկալել:
Մոռանալ երեք քայլի ռազմավարությունը¹¹⁹,
Եվ պատմության մեջ մտնելու առաջադրանքը:
Ամեն ինչ պարտական է նրան՝
Երկնային ուղուն,
Որ կարմիր դրոշներ է դյուլթում:

¹¹⁹Դենգ Միաոփինի «երեք քայլի» առաջարկի հիման վրա Կուսակցության տասնվեցերորդ համաժողովում (2002թ. նոյեմբերի 8-14, Պեկին) հաստատված այս ռազմավարությունը յուրահատուկ հասարակական-տնտեսական նպատակներ է դնում երկրի արդիականացման ոլորտում երեք շրջադարձային տարիների համար՝ 2010, 2020 և 2050:

ՆՈՐ ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ ՍԿԻՉԲԸ¹²⁰

- «Մազնուլիայի ծաղկի կրճատ երգ»
(Ջիան գի մու լան հուա)

Դեկտեմբերի 31, 1999

Երբ թխագուլն ամպերը հրաժեշտ տան օրվան,
Մի էջ էլ կթերթվի նախորդ հազարամյակից:¹²¹
Երբ իրադարձություններով լի նախօրեն արթնացնի
ծիրան արելը,

Լուսաբացին կազդարարվի նոր դարը:

Ծաղիկներ փթթող եւ ծաղիկներ թափվող,
Չնայած վերելքներին ու վայրէջքներին՝ Երկինքը¹²²
հանդարտեցնում է ճոճքը:

Չանգեր զևագող, զանգեր շառաչող,
Այս փոխված աշխարհում ճանապարհը նույնքան
երկար ու դժվարին է:

¹²⁰ 1999 թվականի դեկտեմբերի 31-ի գիշերը ես միացա մի խումբ ընկերների և միասին դիտեցինք հրավառությունը Պեկինի Թիանանմեն հրապարակում ու լսեցինք հին տարվա, նոր տարվա ու նոր հազարամյակի զանգերի դողանջը:

¹²¹ Երբ իմ՝ 1999 թվականի օրացույցից պատռեցի դեկտեմբերի 31-ի էջը, հասկացա, իհարկե կարոտաբաղձությամբ, որ մի ամբողջ հազարամյակն անցյալ դարձավ՝ մատիս մի թեթև հպումով:

¹²² Այսինքն՝ երկնքի ճանապարհը: Չնայած անցյալ դարում տեղի ունեցած վիթխարի փոփոխություններին, բնության օրենքը երբեք չի փոխվի, ինչպես չի փոխվի նաև ցածրից դեպի բարձր մակարդակ մարդկության զարգացման ուղղությունը:

ՀԻՍՈՒՆԵՐՈՐԴ ԱԶԳԱՅԻՆ ՕՐ¹²³
-«Հարավային երգ» (Նան գե գի)

Յոկտեմբեր 1, 1999

Աշխարհը Նոր տեսք է ստանում, երբ թեքվում է
Մեծ արջը,
Սարերը հեռացել են, մարդիկ միմյանց հետ
Ներդաշնակ են հիմա:
Սևկի ամպերը¹²⁴ բարձրանում են, եւ թշնամիներին
հ՞նչ է մնում, այո, միայն զարմանալ:
Մակընթացություն՝ ընդդեմ հոսանքի, ծիծաղով
Նայում եմ՝ գիշերաթիթեռները կրակն են նետվում:

Կառույցը պատրաստ է, մնում է վերացնել
Ժամանակի չարիքները,
Այս քաղաքականությունը Նոր ուղի է բացում:
Արագ սլանում ենք դեպի բարգավաճում,
Նոր երգեր ենք երգում գարնան զեփյուռի մեջ:

¹²³ 1999 թվականի հոկտեմբերի 1-ին, Պեկինի Թիան՝անմեն հրապարակում մասնակցելով ռազմական ու քաղաքացիական շքերթների՝ ի նշանավորումն Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հիմնադրման, ես գրեցի այս լիրիկական բանաստեղծությունը՝ ներկայի լույսի ներքո հիշելու իմ երկրի անցյալը:

¹²⁴ Ատոմային և ջրածնային ռումբերի հիշատակում: 1950-ականների վերջին և 1960-ականների սկզբին Արևմուտքը տնտեսական և տեխնոլոգիական պատժամիջոցներ կիրառեց Չինաստանի նկատմամբ, և Խորհրդային Միությունը հետ կանչեց բոլոր փորձագետներին, որոնք ուղարկվել էին օգնելու նպատակով: Ազգային տնտեսությունն, արդյունքում, կանգնեց հսկայական մարտահրավերների առաջ: Ինչևէ, Չինաստանը հաղթահարեց դժվարությունները՝ 1960 թվականին արձակելով առաջին հրթիռը, 1964 թ. հոկտեմբերի 16-ին՝ առաջին ատոմային ռումբը, իսկ 32 ամիս անց՝ առաջին ջրածնային ռումբը, ինչը զգալիորեն բարձրացրեց չին ժողովրդի բարոյական ոգին և երկրի ներկայությունը համաշխարհային հանրության մեջ:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒԹՍՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ
-«Առաջին ծաղիկն արեւելքում»
(Դոնգ Ֆենգ դի յի ժի)

Յուլիս 2001

Հսկայական վրձնով գրված Չինաստանի
տարեգրություններ,
Ութսուն հատորի մեջ է խտացված
ստեղծագործությունը,
Անվերջ դյուցազներգեր, անհամար հերոսներ:
Փոքրիկ նավի վրա¹²⁵ մի լապտեր ահա
ցրեց խավարը,
Քաղաքում ապստամբները¹²⁶ անցան իրենց բոլոր
սահմանները:
Պատերազմի բոցի հետ մեկտեղ Ցզինգանգում¹²⁷
Երկար երթի¹²⁸ կայծերը հրդեհում են անծայր
տափաստանը:

¹²⁵ Տես ծ. 51:

¹²⁶ 1927 թվականի օգոստոսի 1-ին զինված հեղաշրջում Նանչանում՝ Ցզյանսի նահանգում, որով նշանավորվեց հեղափոխական պատերազմի մեկնարկը Կուսակցության ղեկավարության ներքո:

¹²⁷ 1927 թվականի հոկտեմբերին Աշնանային հեղափոխության գորքերը, Մաոյի ղեկավարությամբ, շարժվեցին դեպի Ցզինգանգ սարը Ցզյանսի նահանգում, որտեղ հիմնեցին երկրի առաջին գյուղական հեղափոխական բազան: Հաջորդ տարվա ապրիլին բանակը, ժու Դեի ու Չեն Յիի գլխավորությամբ, միացավ Մաոյի գորքերին:

¹²⁸ 1934 թվականի հոկտեմբերին Կենտրոնական կարմիր բանակը Մաոյի գլխավորությամբ լքեց իր բազայի տարածքը Ցզյանսի նահանգում՝ սկսելու 25,000 լի երկարությամբ իր էպիկական Երկար երթը, և հաղթահարելով թշնամու շրջափակումները, հետապնդումներն ու արգելքները՝ 1935 թվականի հոկտեմբերին հասավ Շանսի նահանգ, որտեղ նրանք հիմնեցին Հյուսիսային Շանսիի հեղափոխական բազայի տարածքը:

Ուղարկելով ճապոնացի ներխուժողներ¹²⁹
Եվ փոթորկելով դեպի Նանկին¹³⁰ ճանապարհը,
Չինվորները ծածանեցին հինգ աստղանի դրոշները
իրենց երկրի վրա:
Վերակառուցումը բուռն ընթացքի մեջ է,
Սպասում է գարնան գալստյանը:
Արդիականացման քառյակ ուժերը թափով
սլանում են առաջ¹³¹,
Նոր ուղի է մեզ վերստին ընծայված:
Օգոստոսյան երկու ահարկու ռումբերը¹³²
ցնցեցին երկիրը,
Մինչ լուսնի արբանյակը սլանում էր բարձր,
փյունիկի նման¹³³:

¹²⁸ 1934 թվականի հոկտեմբերին Կենտրոնական կարմիր բանակը Մաոյի գլխավորությամբ լքեց իր բազայի տարածքը Ցզյանսի նահանգում՝ սկսելու 25,000 լի երկարությամբ իր էպիկական Երկար երթը, և հաղթահարելով թշնամու շրջափակումները, հետապնդումներն ու արգելները՝ 1935 թվականի հոկտեմբերին հասավ Շանսի նահանգ, որտեղ նրանք հիմնեցին Հյուսիսային Շանսիի հեղափոխական բազայի տարածքը:

¹²⁹ Խոսքը ճապոնիայի դեմ Դիմադրողական պատերազմի մասին է (1937-1945):

¹³⁰ 1949 թվականի ապրիլին Չինաստանի ժողովրդական ազատագրական բանակի մեկ միլիոն զինվորներ գրոհեցին Յանգցե գետի երկայնքով: Ապրիլի 23-ի գիշերը նրանք վերցրին Նանկինը և գահընկեց արեցին 22-ամյա Չիան Կայ-շեկի վարչակարգը:

¹³¹ Չինաստանի արդիականացման շարժումը սոցիալիստական զարգացման շրջանում կոչ է անում արդիականացում գյուղատնտեսության, արդյունաբերության, ազգային անվտանգության և գիտության ու տեխնոլոգիայի ոլորտներում:

¹³² Տես ծ. 60:

¹³³ 1970 թվականի ապրիլի 24-ին տիեզերք թռավ Չինաստանի առաջին արբանյակը՝ Դոնգֆանհոնգ I-ը:

Անպատվությունը վերացավ, երբ երկու մարգարիտ
վերադարձան երկիր,¹³⁴
Ազդարարելով բարգավաճման դարաշրջանը՝
Ժողովուրդը՝ երանության, իսկ երկիրը
առատության մեջ է:
Չենվելով Երկնքի բարձր սյանը՝
Անշարժ դիտում են պտտվող ու գալարվող ամպերը,
Եվ Էպոսն են հեգուսն՝ գինու բաժակը ձեռքիս:

¹³⁴ Չինաստանը վերականգնեց իր իշխանությունը Հոնգ-Քոնգում 1997 թվականի հուլիսի 1-ին, իսկ Մակաոյում՝ 1999 թ. դեկտեմբերի 20-ին:

ՄԱՌՅԻ ՄԱՅՎԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԼԻՑԸ¹³⁵

-«Գարունը Քին այգում» (Քին յուան չուն)

Սեպտեմբեր 9, 1977

Դեռ նոր էր երկնքի տանիքի հեծանը կոտորվել¹³⁶,
Երբ մի վիթխարի աստղ գահավիժեց -
Մղձավանջ հարյուր միլիոնավոր մարդկանց
համար:

Լուսնի Աստվածուհին տարածում է թելերը,
Իր արցունքներով թրջելով երկինքը:
Վու Գանգն առաջարկում է փառքի պսակ,
Նրա վիշտը հիմա երկնքի չափ է:
Մարքսն ու Էնգելսը ոտքի են կանգնում,
Լենինն ու Ստալինը իրար ձեռք են սեղմում,
Միև ժողուն ու ժուն¹³⁷ նրան ուղեկցում են
աստղաշատ երկինք:

Յանգն ու Լիուն¹³⁸ գործընկերներն են նրանց,
Այսպես հավաքվում են մեծ ուսուցիչները՝
Մեծ Ներդաշնակության շուրջ զրուցելու:

¹³⁵ Մառ Չեդոնգը մահացել է Պեկինում, 1976 թվականի սեպտեմբերի 9-ի առավոտյան:

¹³⁶ Ժոու Էնլայը մահացել է Պեկինում, 1976 թվականի հունվարի 8-ին:

¹³⁷ Ժոու. Ժոու Էնլայ, Ժու. Ժու Դե (1886-1976), մահացել է Պեկինում, 1976 թվականի հուլիսի 6-ին:

¹³⁸ Յանգ. Մաոյի առաջին կինը՝ Յանգ Կայիույը (1901-1930), ձերբակալվել ու մահապատժի է ենթարկվել Կուոմինթանգի կողմից, 1930 թվականի նոյեմբերի 14-ին, Լիու. Լիու Ժիսուան (1898-1932), կարմիր բանակի գեներալ, որը մահացավ Հուբեյ նահանգում, 1932 թվականին և 1945 թվականին հետմահու ճանաչվեց հեղափոխական մահատակ:

Ալիքներ, որ ելնում են երկինք՝ ճանապարհին
անցնելով հինգ երկիր:
Հարցրու. արդյո՞ք Մեծ գործը կիսատ կմնա:
Տես, վտարված են բոլոր որդերը¹³⁹,
Իսկ կարմիր դրոշը սավառնում է ազատ:
Հիմա, երբ հակառակ հոսանքներ չկան,
Բոլոր նավերը կարող են լողալ դեպի արեւելք,
Հավակնոտ ծրագրեր նախանշելով
Եվ նորով հինը փոխարինելով,
Երկիրը կձեւափոխվի, որ վիշապը հառնի:
Կհանգստանան նահատակների սուրբ հոգիները,
Վեհորեն կանգնած է մեր մեծ Աստվածային երկիրը
Իր հարյուր միլիոնավոր հերոսների հետ:

¹³⁹ Խոսքը Չորսի հրոսակախմբի անդամների մասին է:

ՄԱՌՅԻ ԾՆՆԴՅԱՆ 110-ԱՄՅԱԿԸ

«Թիթեռները սիրում են ծաղիկներ» *(Դի լիան հուլա)*

Դեկտեմբեր 2003

I. Հեղափոխություն

Երկար սպասված նախօրեին ուշացած եկավ
արշալույսը:

Որտե՞ղ փնտրել ելքը:

Մեծ արջի ներքո Յզինգանգը¹⁴⁰ հայտնվեց
տեսադաշտում:

Չորքերն այնքան սահուն ու խելացի էին կանգնած,
Ո՞վ գիտի՝ քանի համառ թշնամի էին խոցել:

Ութ տարվա մեջ վագրերն ու հովազները
քշվեցին հեռու,

Չինվորները գրոհեցին թշնամու որջերը
պայթյուններով,

Վերադարձնելով բոլոր սահմանները հին:

Վերելում երեք սարերը¹⁴¹ մասնատվեցին ահա.

Գարունը հաստատվեց, եւ օրը կիսվեց արելելքում:

¹⁴⁰ Տեւ ծ. 63:

¹⁴¹ Տեւ ծ. 52:

II. Վերակառուցում

Ժողովուրդն արթնացավ շեփորի ձայնից,
Կանաչը վերադարձավ դաշտին ու բլրին,
Մարդիկ խարխափելով բռնեցին ազգային
վերածնության ուղին:
Միացյալ ջանքերով միլիարդավոր մարդիկ
տքնաջան բանեցին,
Որ նոր դեմք պարգեւեն Աստվածային երկրին. սա էր
կամքը նրանց:

Թող քամին սլանա մոլեգնած, դրոշը չի տապալվի:
Այն օրից, երբ ռումբերը¹⁴² ցնցեցին աշխարհը,
Չարախոսները սսկվել են համակ:
Քամու ուղղությամբ գետը հոսում է դեպի արեւելք.
Մի քանի արեւաբծերը կարո՞ղ են լղոզել պայծառ
արեւը...

¹⁴² Տես ծ. 60:

III. Խարիզմա

Համարձակ հարցնում եմ՝ ո՞վ է առաջնորդում
 մարդու ճակատագիրը¹⁴³:
 Ռազմավարությունը, համակցելով պոետական
 ունակության հետ,
 Դու ցույց տվեցիր աշխարհը, որ մի ժամանակ
 խորապես ճնշված էր¹⁴⁴:
 Ապշած նայելով ճնշող մատներին¹⁴⁵՝ դեւերին
 ճնշեցիր,
 Որպես Ուսուցիչ՝ դու ժողովրդին ծառայեցիր¹⁴⁶:

 Ավելի անուշիկ ու մեղմ են սալորի ծաղիկները
 ձնամրրիկի մեջ¹⁴⁷:

¹⁴³ Մառ Յեթունգ. *Բանաստեղծություններ* (Օտարալեզու մամուլ, 1976), «Չանգզա - ըստ *Չին Յուսև Չունի*». «Մտորելով այս անսահմանության մասին՝ /Ես հարցնում եմ, այս անսահման երկրում /Ո՞վ է կառավարում մարդու ճակատագիրը»:

¹⁴⁴ «Մատնանշելով մեր սարերն ու գետերը, /Մարդկանց այրելով մեր բառերով, /Մենք հզորներին համարում ենք ոչ ավելի, քան կեղտե, «Պատասխան ընկեր Կոտ Մո-ջոյին - ըստ *Մաև Չիսև Հակոբ*». «Այս փոքրիկ տիեզերքում, /Որոշ ճանճեր իրենց խփում են պատին»:

¹⁴⁵ Լու Սուն (1881-1936). Ինքնաժողովանք. «Հոնքերս կիտած՝ անվրդով դիմակայում եմ բյուր տնկված մատների, /Գլուխս կախած՝ սիրահոժար եզի պես ծառայում եմ մարդկանց»:

¹⁴⁶ Ժուգ Լիան (181-234), «Դաշտ II-ը գրավելու խնդրագիր». «Ես կծառայեմ առաքելությանը և առավելագույնս ջանք կգործադրեմ, մինչ մահը կհեռացնի ինձ»:

¹⁴⁷ Մառ Յեթունգ. *Բանաստեղծություններ* (Օտարալեզու մամուլ, 1976), «Ձմեռային ամպեր - լու շի»: 1962 թ. դեկտեմբերի 26. «Սալորի ծաղիկները ողջունում են պտտվող փաթիլներին, /Փոքրիկ ճանճերը սառչում ու մեռնում են», «Ներքող սալորի ծաղիկին - ըստ Պու Սուան Յուի», դեկտեմբեր 1961 թ. «Սառցապատ ժայռի վրա բարձր ու անթաքույց, /Ծաղիկ է ծաղկում՝ քաղցրորեն ու մեղմ»:

ՄԱ ՔԱՅ

Քո անզուգական չափածոյից
Քանի՞ մարդ է հոգով հմայված, չգիտեմ:
Քո սխալի ու ճշմարտության վեճը գուցե հարթվի,
Մարդկանց անկեղծ համակրանքը քո հանդեպ
հավերժ է:

ՎԱՐՉԱՊԵՏ ՉԺՈՈՒԻ ԴԻՇԱՏԱԿԻՆ

-«Կախարդական գրավչության հուշեր» *(Յի քին էի)*

1977

Մաքրամաքուր Պայծառությունն¹⁴⁸ է ժամանում,
Մինչդեռ վիշտը գրված է ամենքի դեմքին,
Մարդիկ շնչահեղձ են հեկեկոցից:
Շատերի սրտում
Յուշարձանն ընդմիշտ ապրում է:

Յովհարի պես՝ փյունիկը¹⁴⁹ երկինքն է կարկատում,
Ինչպես որ դու ես մեծ ծրագրի համար չարչարում
միտքը:

Յավակնոտ ծրագիր,
Միայն Թայ սարն է մրցում նրա վսեմության,
Իսկ լուսինը՝ գերազանցության հետ:

¹⁴⁸ Մաքրամաքուր Պայծառության օրը, որը նշվում է ապրիլի 4-ին, 5-ին կամ 6-ին. սա գերեզմանները մաքրելու և մեռյալների հիշատակը հարգելու օրն է:

¹⁴⁹ Չժուրին մտերիմները կոչում են Դալուան:

ԴԵՆՊԻ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԸ

Օգոստոս 2004

Չինաստանը փրկելու համար դու հեռացար
երիտասարդ տարիքում,
Եվ վերադարձար՝ որպես Բայսի
ապստամբության¹⁵⁰ ղեկավար:
Ճապոնական թշնամիներին հեռացրիր
Կենտրոնական դաշտավայրից,
Ապա հանգուցալուծեցիր Հուայիայի¹⁵¹
քաղաքացիական պատերազմի հարցը:
Մի ձեռքով կանգնեցրիր քառսը, վերադարձրիր
կարգուկանոնը երկրին,
Եվ նորոգեցիր հին համակարգը՝ երկրին մի նոր
փառք նվիրելով:
Չնայած վերելքներին ու վայրէջքներին՝
պահպանեցիր հավատարմությունդ.
Արյունը եռում էր կրծքավանդակում, եւ դու երկրի
համար էիր ջանում գիշեր ու տիվ:

¹⁵⁰ 1929 թվականի դեկտեմբերի 11-ին Դենգի և մյուսների ղեկավարությամբ Կոմունիստները զինված ապստամբություն կազմակերպեցին Բայս կոմսությունում, Գուանսի նահանգում, ինչը եզրափակվեց Չինաստանի բանվորների ու գյուղացիների Յոթերորդ կարմիր բանակի հիմնադրմամբ:

¹⁵¹ Դենգը 65 օր տևողությամբ Հուայիայի արշավի հրամանատարն էր 1948 թվականի նոյեմբերի 6-ից մինչև 1949 թվականի հունվարի 10-ը՝ երեք խոշոր արշավներից մեկը, որ գլխավին ջախջախեց Չիան Կայ-շեկի զորքերը Ազատագրության պատերազմի ընթացքում (1946-1949)

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՆՍՏՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԸ

- «Ավագը մաղող ծփանքներ» *(Լանգ թառ շա)*

Յունիս 2011

Ազգային վերածնունդը առաջնորդում էս
իսնսուն տարի,

Եռուն ամիսների ու օրերի միջով:

Քշելով ամպերը, ճեղքելով մակընթացությունը,

դեկավարում էս ուղեւորությունը:

Երկու ափերին այրող կարմիր են նազվարդերը,

Անմոռանալի են նահատակների վեհ հոգիները:

Ահագանգերն անկանգ հնչում են ունկերում,

Մինչ քամին ոռնում է, իսկ անձրեւը՝ մաղում:

Երկար երթի առաքելությունը դեռ պիտի կատարվի:

Ինչպե՞ս կարելի է հետաձգել այդ մեծ գործը:

Ճանապարհն անցնում է մարդկանց միջով:

ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՎ ԱՄՆ-Ի ՎԱՅՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ¹⁵²

Մայիս 1999

Մի երկիր, որ զայրացել է իր դրոշի արյան շիթերից,
Չի հանդուրժում ոչ մի բռնակալի պոռթկում:
Դեպի երկինք մռնչում է Աստվածային հողը,
Արհամարհանքը կանխել կարելի է, բայց
սաստիկ ուժով:

¹⁵² 1999 թվականի մայիսի 7-ին ՆԱՏՕ-ի կողմից նախկին Հարավսլավիայի ռմբակոծության ընթացքում ամերիկյան չորս ռումբ հարվածեց Բելգրադում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանատան շենքին՝ ավերելով շենքն ու դառնալով երեք լրագրողի մահվան պատճառ: Հաջորդ օրը Պեկինում անցկացվեցին լայնածավալ ցույցեր՝ ընդդեմ վայրագությունների, և բողոքի ցույցերը տարածվեցին երկրի այլ մասերում:

ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՅԱՆՆԵՐ¹⁵³

«Երկնքից մաքրված ավազներ» *(Թիան ջինգ շա)*

Օգոստոս 1999

I. Գիշերային տեսարան

Լապտերի բոցը խառնվում է արծաթ լուսնալույսին.
Մեղմ զեփյուռն արծազանքում է քնքուշ մեղեդուն:
Կանաչ տերեւների տակ բողբոջները թաքցնում են
իրենց դեմքը:

Ինչի՞ համար է այս լուռ նինջը:

Բույրեր հավաքել, որ վաղվա դափնեկիրները
վայելեն դրանք:

¹⁵³ «Մարդ և բնություն. Երթ դեպի 21-րդ դար» թեմայով Աշխարհի այգեգործական ցուցադրությունը տեղի ունեցավ Կոնստանդուպոլիսում՝ Յունան նահանգում, 1999 թվականի մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը: Ես այնտեղ էի օգոստոսի 11-ին՝ դիտելու ցուցադրության գիշերային տեսարանը, իսկ հաջորդ օրն այցելեցի Չինական տաղավար:

II. Չինաստանի տաղավարի օրը¹⁵⁴

Կախարդիչ են բլուրները կանաչ եւ ջրերը՝ սուտակ,
Չմայլող են ծաղիկները տարաշխարհիկ, բույսերը՝
յուրահատուկ:

Մրցելով բարեհաճության համար՝ արտանետում են
հմայքներ ու բույրեր բազում,
Ո՞վ կհայտնվի համակ ուշադրության կենտրոնում:
Քաջվարդն արդեն շրջապատված է սիրով:

¹⁵⁴ Կունմինչի այգեգործական համաշխարհային ցուցահանդեսի՝
Չինաստանի տաղավարի օրը 1999 թվականի օգոստոսի 12-ն էր:

ԼՃԱԿՆԵՐ ԲԱԶԺՈՆԳՈՒՄ¹⁵⁵

«Երկնքից մաքրված ավազներ» *(Թիան ջինգ շա)*

Մարտ 2001

Գարնան քամի, սարի արահետ, գյուղացու տուն,
Վարդագույն դեղձ, դեղին հասուն բերք,

Փոքրիկ այգիներ, կղմինդրե տանիքներ, սլացիկ
սպիտակ սալոր,
բամբուկներ:

Լոտուսի լճակի մեջ անձայն լողում է լուսինը,
Ճգնավոր Տաոն¹⁵⁶ ոչինչ չի անում, միայն տեսչում է
գորտի կռկռոց:

¹⁵⁵ Բաշժոնգում՝ Միչուան նահանգի հյուսիս-արևելյան պրեֆեկտուրայում, ձկան լճերի և ջրամշակույթի զարգացումը տեղի գյուղաբնակների զբաղմունքն է, որոնք փորձում են դուրս գալ աղքատությունից և ապրել ավելի բարեկեցիկ կյանքով:

¹⁵⁶ Տաո Յուանմինգը (365-427) ճգնավոր է, հայտնի է իր հովվերգական մամակներով ու կենսակերպով և ապրել է ուշ Արևելյան Ջին (265-420) և վաղ Սոնգ (420-479) հարավային դինաստիաների ժամանակաշրջանում:

ՄԻՆԻՆ-ԼՅԱՍԱ ԵՐԿԱԹՈՒՐԻ

- «Գետամերձ քաղաքի մարդ» *(Զիանգ չեն գի)*

Յունիս 2001

Յորիզոնից հորիզոն է հասնում լազուրը,
Սպիտակ ամպերը խռնվում են իրար,
Կարմիր արեւը հրկիզվում է:
Ուրախությունը եռակի է¹⁵⁷,
Երբ թագադրությունները երկու քաղաքում են¹⁵⁸:
Յազար տարվա երազանքը պիտի հատուցվի.
Երկնամերձ ճանապարհին
Պողպատե վիշապ կխոյանա:

Մինչդեռ ճանապարհը լի է վտանգներով:
Անցնելով գետակ գետակի ետեւից,
Ցատկելով սար սարի ետեւից,
Քնելով ցողի մեջ, ճաշակելով քամին,
Յպարտ շինարարները ծիծաղում են սառցապատ
հողի վրա:

¹⁵⁷ 1956 կիլոմետր երկարությամբ Մինինգ-Լհասա երկաթուղու՝ 814 կիլոմետր երկարությամբ Մինինգ-Գոլմուդ հատվածը կառուցվել է երեք խոշոր իրադարձությունների համար՝ Չինաստանի կոմունիստական կուսակցության հիմնադրման 80-րդ տարեդարձ, Յինհայի ու Տիբեթի խաղաղ ազատագրման 50-րդ տարեդարձ և Տիբեթին նվիրված Չորրորդ ազգային աշխատանքային գիտաժողովի եզրափակում:

¹⁵⁸ Երկաթուղու կառուցման նախագծի մեկնարկի արարողությունները տեղի ունեցան միաժամանակ Յինհայում՝ Գոլմուդում, և Տիբեթում՝ Լհասայում:

ՄԱ ՔԱՅ

Եթե այստեղ է, արքայադուստրը¹⁵⁹ թափում է
արցունքները.

Նոր դարը մոտենում է՝
Լի եռանդագին հերոսներով:

¹⁵⁹ Խոսքը արքայադուստր Վենչենգի մասին է (623-680), որին Թանգ դինաստիայի կայսր Թայզոնգը 640 թվականին ամուսնացրեց Սոնգատան Գամբոյի հետ (617-650): Այս քայլը նպատակ ուներ խաղաղեցնել արքային ու նրա Տուբո թագավորությունը (629-840), որտեղ գտնվում է այսօրվա Տիբեթը:

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՀԱՅՏԸ ՇՆՈՐՀԱԾ Է

Հուլիս 2001

Երկրի երազանքն իրականանում է,
Երբ Պեկինը շահում է հայտը:¹⁶⁰
Մուրճի հարվածների պես բարձրանում են ուռայի
ալիքները,
Կարմիր դրոշի վրա կոնֆետների անձրեւ է,
արցունքների հեղեղ:
Ներքող են երգում ոսկեդարին՝ մեղմ ու առինքնող
մեղեդիներով,
Գինին պռնկեպռունկ լցվում է, երբ առյուծ
պարողներն են տոնում:
Հարյուր զգացմունք է ալեկոծում սիրտս,
Պեկինի խաղերը պիտի աշխարհում
լավագույնը լինեն:

¹⁶⁰ 2001 թվականի հուլիսի 13-ին, ժամը 22:08 Պեկինն իրավունք ստացավ հյուրընկալել 2008 թվականի XXIX Օլիմպիական խաղերը՝ ի մեծ ուրախություն ողջ ժողովրդի: Պեկինի Չանգա՛ն ակումբում հեռուստացույցով ակամատես լինելով այդ մեծ պահին՝ կինս, դուստրս ու ես իմ գրասենյակից վերցրինք հինգաստղանի կարմիր դրոշներ և միացանք Չանգա՛ն պուրակի տոնակատարությանը մասնակցող բազմությամբ:

ՊԵԿԻՆԻ ՊԱՐԱՕԼԻՄՊԻԿ ԽԱՂԵՐԸ

Սեպտեմբեր 2008

Մեկդարյա երազանքն իրականացավ,
Արցունքները հոսում են զմայլված այտերն ի վար:
Մղոն մղոնի ետելից՝ ձեռքից ձեռք է անցնում կերոնը,
Նկարի գլանակը փառքով բացվում է:
Ներդաշնակությունն է տիրում սլացող

մեքենաներին,

Պատվանդանի վրա հաղթողները տոնում են:
Իր փայլով ամաչկոտ լուսինն է ծիկրակում,
Երկինք ու երկիր կիսում են նրա լույսը:

089

ՊԱՏՆԵՇԵԼՈՎ ԵՐԵՔ ԿԻՐՃ¹⁶¹

«Յանդիպման ուրախություն» (*Սիանգ յիան հուան*)

Նոյեմբեր 2002

Գետի մեջ՝ կիրճերն¹⁶² ի վար,
Նետված էին բազում գլաքարեր,
Դեպի երկինք է սլանում ջրի շիթը:
Ուղիղ կոկորդից են բռնել գետը:

Բռնատարները հերթափոխում են միմյանց,
Որ կառուցեն ամբարտակը հսկա՝
Իրենց թեւերով գրկելով գետը:
Յենց որ հրամանն արձակվեց,
Վիշապը կանգ առավ. հիմա գլխիկոր է նա:

¹⁶¹ Առանցքային նշանակություն ունեցող Երեք կիրճի նախագիծը, որն ավարտին հասավ երեք ժամկետում, մինչ այժմ ամենամեծ ջրաբաշխիչ և ջրապահպան նախագիծն է աշխարհում: Կառուցման առաջին ժամանակահատվածը սկսվել է 1997 թվականին և ավարտվել 1997-ին՝ Յանգցե գետի վրա ամբարտակի կառուցմամբ: Դրան հաջորդել է 3.7 կիլոմետր երկարությամբ և 350 մետր լայնությամբ ջրբաժան ջրանցքի փորումը, որը հեշտացնում է նավերի երթևեկությունն ու ջրի հոսքը և ավարտվել է այս ջրանցքում ջրամբարի կառուցմամբ: Երկուսն էլ էական նշանակություն ունեին շինարարության երկրորդ ժամանակահատվածում, որն ուներ երեք խոշոր նպատակ. սկսել ջրի ամբարումը, բացել նավերի երթևեկության խցանումը և հանձնարարել էներգիա արտադրող համակարգերի առաջին խմբի տեղադրումը: Ջրբաժանը արգելափակելու աշխատանքը սկսվեց 2002 թվականի հոկտեմբերի 25-ին և ավարտվեց, երբ ամբարտակը պատրաստ էր՝ նոյեմբերի 6-ի առավոտյան:

¹⁶² Երեք կիրճերը Քութանգ, Ուսիա և Սիլինգ կիրճերի հավաքական անունն է, որոնք կազմում են Յանգցե գետի թերևս ամենասարսափելի հատվածը:

ՆԵՐՔՈՂ SARS ՍԱՐՏԻԿՆԵՐԻՆՆԵՐ¹⁶³

«Մաքրելով թթենու տերեւներ» (Քայ սանգ գի)

Մայիս 2003

Չգիտես՝ որտեղից է դժբախտությունը վազում,
Սանձագերծելով պատերազմ ու վառողի ծուխը
բարձրացնելով:

Քանի դեռ ծուխը կա,
Մոմեր են վառվում երկնքում¹⁶⁴ ամենուր:

Սպիտակի մեջ են զինվորները քաշ:
Նրանց իրավ դեմքերն անճանաչելի են,
Բայց փայլում են նրանց սրատես աչքերը.
Պատրաստ են իններորդ աղբյուրին հասնել¹⁶⁵
հանուն ժողովրդի:

¹⁶³ 2003 թվականի գարնանը տարածքին բնորոշ SARS հիվանդության (Ճայրահեղ սուր շնչառական համախտանիշ) բռնկում եղավ Գուանգժոնգ նահանգում և արագորեն տարածվեց Չինաստանի մյուս հատվածներում: Ոչինչ չիմանալով նրա պատճառների, տարածման, բուժման ու կանխարգելման մասին՝ երկիրը ներքաշվեց նրա դեմ պայքարի մեջ:

¹⁶⁴ Մաո Յեթունգ. *Բանաստեղծություններ*: (Օտարալեզու մամուլ 1976), «Հրաժեշտ ժանտախտի Աստծուն - երկու լու շիշ բանաստեղծություն. «Մենք հարցնում ենք Ժանտախտի Աստծուն./ Ու՞ր ես դու: Թղթից լսարանավերն այրվում են, և մոմի լույսը լուսավորում է երկինքը»:

¹⁶⁵ Ամենամեծ միանիշ թիվը՝ «ինը», գերադրական ածական է չինական մշակույթում: Այսպիսով, «իններորդ երկինք» արտահայտությունը նշանակում է ամենաբարձր երկինք: Նույն իմաստով էլ «իններորդ աղբյուր»՝ նշանակում է ամենախոր աղբյուրը, որին կարող են հասնել հանքափորները: Գեղնավուն ջրերի պատճառով նաև «դեղին աղբյուր» կոչվող «իններորդ աղբյուրը» այն վայրն է, որտեղ թաղվում են մեռյալները: «Գնալ դեղին աղբյուր (կամ իններորդ աղբյուր)» նշանակում է մեռնել: Ռուան Յու (165-212), «Վշտի յոթ տեսակ». «Երբ լավ ժամանակներն անցնում են, /Մարմինը դառնում է հող ու փոշի: /Խոր, խորն է իններորդ աղբյուրի խոռոչը, /Երկար, երկար է երեկոն եկեղեցում»:

ՄԱՐԴՈՒ ԱՈԱԶԻՆ ԹՈՒՉՔԸ¹⁶⁶

«Հանդիպման ուրախություն» (Միան ջիան հուան)

Հոկտեմբեր 2003

Քշված ամպերից, տարված վիշապից,
Աստվածային նավակը կտրում-անցնում է
հեռուներում:

Ազգը աչքերը հառած նայում է համերաշխորեն,
Ուրախությունը լուսավորում է բյուրավոր դեմքեր:

Բազում սերունդների ցանկությունը
Մի առավոտ ահա իրական է դառնում,
Տասնմեկ տարի անց «սուրը» կռեցին¹⁶⁷:
Երբ կարմիր դրոշը բարձրանա լուսնին,
Ավելի հպարտ կլինեն մեր քաջ եղբայրները:

¹⁶⁶ 2003 թվականի հոկտեմբերի 15-ին, ժամը 09:00, առաջին անգամ մարդը հաջողությամբ տիեզերք թռավ Չինաստանից: Հաջորդ օրը՝ 06:23-ին, Շենչժոու V-ը վայրէջք կատարեց՝ երկրի շուրջ տասնչորս պտույտ տալուց հետո: Այս սխրագործության շնորհիվ Չինաստանը դարձավ երրորդ երկիրը Խորհրդային Միությունից և Միացյալ Նահանգներից հետո, որը մարդ ուղարկեց տիեզերք: Թռիչքի մասին այս բանաստեղծությունը գրել են տիեզերակայանից Պեկին վերադառնալիս՝ ինքնաթիռում:

¹⁶⁷ «Սուրը» մարդու մասնակցությամբ տիեզերական թռիչքի ծրագիրն է, որը Չինաստանի կառավարությունը հաստատեց 1992 թվականի սեպտեմբերին: Միայն 2003 թվականին կամ ուղիղ տասնմեկ տարի անց այս ծրագիրն իրականություն դարձավ, երբ տիեզերք թռավ մարդը՝ Շենչժոու V տիեզերանավով:

ՈՂՋՈՒՆԵԼՈՎ «ՇԵՆՉԺՈՈՒ- 7-ը»

-«Հանդիպման ուրախություն» *(Միան ջիան հուան)*

Սեպտեմբեր 2008

Արեւելյան քամին մի աստվածային նավ է
ուղարկում¹⁶⁸

Դեպի տիեզերք ուղեւորության համար:
Մարդը¹⁶⁹ տեսնում է երկիրը, որ այնքան փոքր է,
Երբ ուրախ-զվարթ զբոսնում է:

Խցից դուրս գալով՝
Նա սեղմում է աստղերի սառը ձեռքերը,
Ծածանում դրոշը, որ նշանավորում է իրական
դարձած երազանքը:

Չինաստանի ոտնահետքերը
Մխրճվում են անհուն երկնքում:

¹⁶⁸ 2008 թվականի սեպտեմբերի 25-ին, ժամը 21:14-ին, Շենչժոու-7-ը տիեզերք թռավ. սա երրորդ անգամ էր, որ մարդը տիեզերք թռավ Չինաստանից:

¹⁶⁹ 2008 թ. սեպտեմբերի 27-ին, ժամը 16:30-ին, տիեզերագնաց Չժայ Չժիյանգը Չինաստանի պատմության մեջ առաջին անգամ դուրս եկավ բաց տիեզերք: Նախկինում միայն Խորհրդային Միությունն ու Միացյալ Նահանգներն էին կարողացել իրականացնել նման սխրագործություն:

ՄՏՔԵՐ ԿՈՐԱԾ ԳԱՆՁԵՐԻ ՇՈՒՐՉ¹⁷⁰

«Լուսնի լույսով ողողված աշնանային գիշեր»
(Քիու յուե յե)

Օգոստոս 17, 2010

Քսաներորդ դարի առաջին կեսին Պեկինի կայսերական պալատը բազմիցս թալանվել է կողոպտվել է: Նրա թանգարանի նմուշների մի մասն այդ ժամանակից ի վեր կորել է, իսկ մի քանի ամբողջական հավաքածուներ տարվել են Թայվանյան նեղուց: Սիրտս ցավում է ամեն անգամ, երբ մտածում եմ այդ ամենի մասին, եւ այդ ցավն իր արտահայտությունն է ստացել այս բանաստեղծության մեջ:

Ճերմակ երկինք, լիալուսին, առասպելական տներ,
Բայց քունը ձգձգվում է:
Անթիվ-անհամար կորած գանձերը
Ձգում են երազկոտ սրտի լարը:

¹⁷⁰ «Անիմաստ կողոպուտն ու ավերածությունը, որ կազմակերպեցին Ութերորդ դաշնակից զորքերը 1900 թվականին Պեկինի ավերման ընթացքում, հսկայական կորուստներ պատճառեցին Արգելված քաղաքի գանձերին ու մյուս կայսերական պալատներին: Մինչ այն տարիները (1906-1967), երբ Փու Յուն արքայի ավերված Արգելված քաղաքից, գահընկեց արված վերջին Քինգ կայսրը կազմակերպեց մեկ այլ աղետաբեր ծրագիր՝ դրանք բաժանելով որպես ընծաներ կամ պարգևներ, գրավադրելով, մաքսանենգելով և բացահայտ գողությանը: Պալատի քանդարանի նմուշների հավաքածուն երրորդ անգամ զգալիորեն նվազեց 1948-1949 թվականներին, երբ անկայուն Կուոմինթանգ կառավարությունը 2972 սնդուկով, երեք խմբաքանակով նմուշները տեղափոխեց Թայվան: Արդյունքում ամբողջական հավաքածուների մի մասը առանձնացվեց ու տեղափոխվեց Թայվանյան նեղուց:

«Մարգարիտը»¹⁷¹ դուրս է մնացել իր շքեղ տուփից, Առանձնացվել է «գեղագրության եռյակը»-ը,¹⁷² Բաժանված է «աստվածային կտավը»¹⁷³:

¹⁷¹ «Մարգարիտը» վերաբերում է Ինքնակենսագրական գրառմանը: 777 թ. թվագրված այս արագագիր արձանագրությունը, որ կազմված է 698 գրանշանից ու գրված է 126 սյունակով, Թանգ դինաստիայի վանական-վայելչագիր Հուայսուի կողմից (725-785), հայտնի է իր գերազանց վայելչագրական արժեքի և իր տեսակի մեջ միակ, հազվադեպ փայտե արկղի համար: Մոտ 60 տարի անց այն տեղափոխվեց Պալատի թանգարանից, որպեսզի չընկնի նվաճող ճապոնական զորքերի ձեռքը, սակայն արկղը մնաց թանգարանում: Այսօր այն «Ազգային պալատի թանգարանի» տիրապետության տակ է, Թայփեյում, մինչդեռ արկղը մնացել է Պալատի թանգարանում՝ Պեկինում:

¹⁷² «Եռյակը» երեք ականավոր վայելչագրական աշխատանքների հավաքածու է, որ նախկինում Քինգ դինաստիայի կայսր Քիանլունգը պահում էր Երեք բացառիկ իրերի սրահում՝ Արգելված քաղաքի Բարոյական զարգացման բաժնի արևմտյան թևում. 1) Պարզ օր կարճատև ձյունից հետո. վայելչագրության հայտնի գիտակ Վանգ Սիչժիի (303-361) աշխատանքն է, 2) Միջաշնանային ծանոթագրություն, Մի Ֆուի (1051-1107)՝ Տասներկուերորդ լուսանային ամսի (մասնակի) նմանակումն է վազող արագագրով, որի հեղինակը Գիտակի որդին է՝ Վանգ Սիանչժին (344-386), և 3) Բոյուանի գրառումը, որի հեղինակը Գիտակի զարմիկն է՝ Վանգ Սուն (349-400: Այսօր «Պարզ օր կարճատև ձյունից հետո»-ն պահպանվում է Թայփեյի «Ազգային պալատի թանգարանում», իսկ «Միջաշնանային գրառումը» և «Բոյուանի գրառումը» Պեկինի պալատի թանգարանում են:

¹⁷³ 32 սանտիմետր բարձրությամբ, 848 սանտիմետր լայնությամբ բնապատկերը, որ կոչվում է Ֆուչան սարերում բնակվելիս, և ավարտին է հասցվել 1350 թվականին, Յուան դինաստիայի նկարիչ Հուանգ Գոնգուանգի (1269-1354) կողմից, համարվում է Չինաստանի «թիվ մեկ աստվածային աշխատանք»: 1650 թվականին այն հուղարկավորության առարկա դարձավ սեփականատիրոջ՝ Վու Հոնգյուի ձեռքում, որը մահից առաջ այն նետեց կրակը: Երբ նրա զարմիկը փրկեց կտավը, այն արդեն բաժանվել էր երկու մասի: Նրա առաջին հատվածն ունի 51.4 սմ լայնություն և հայտնի է՝ «Մարի կտավի մնացորդ» անունով: Այժմ այն պահվում է Չժեջիանգի նահանգային թանգարանում: Իսկ 636.9 սանտիմետր լայնությամբ երկրորդ հատվածը, որ կոչվում է «Վարպետ Վույոնգի (Ժենգ Չուի ծաղրանունն է) հատոր», հայտնվել է Թայփեյի «Ազգային պալատի թանգարանում»:

Երբ գա նրանց վերամիավորման օրը,
Ժպիտը կլուսավորի բոլորի դեմքերը:

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՐԵՎՍՈՒՏԸ¹⁷⁴

«Առաջին բողբոջն արեւելքում (Դոնգ ֆենգ դի յի ժի)

Ապրիլ 1999

Վերադարձը գարուն չափազանց ցուրտ էր,
Շուտով սառցակեղեւը դուրս եկավ, եւ սառույց
կապեց:
Թանաքագույն ամպերը սպառնում են ցած բերել
երկինքը:
Չիմանալով՝ արդյո՞ք կվերադառնանք նպատակն
իրագործած,
Առանց մի կաթիլ տազնապի գնացինք առաջ:
Դեպի արեւմուտք ուղեւորության հաջողությունը
Մեր երկրի քաջությունից էր կախված:
Մեր ազգին արժանի լինելու համար
Գործնական քայլեր յուրացրեցինք՝
Լավ մտածված ծրագրին համապատասխան:
Մարտավարական նրբությունը միախառնվել է
սկզբունքային տեսակետի հետ:

Անկեղծ ժպիտների մեջ՝
Խնդիր խնդրի ետեւից լուծվում է:
Երբ գործը հասավ սրամտությանը,
Անհամար ունկնդիրներին գերազանցեցինք մենք:
Խորն է սերը մեր հայրենիքի հանդեպ,
Տաք են արցունքները օտարների աչքերում:

¹⁷⁴ Այս բանաստեղծությունը գրեցի, երբ 1999 թվականի ապրիլի 6-14-ը Միացյալ Նահանգներում այցելության ընթացքում ուղեկցում էի վարչապետ Չժու Ռոնգչիին:

Ձյունը հալվեց, իսկ սառույցը դանդաղ
ջուր դարձավ,-

Անշուշտ,

Արեւելքից են հոսում գարնանային վարար ջրերը:

Թեեւ ալիքները կարող են սողկալի դառնալ,

Ո՞վ կարող է խանգարել համառ լաստանավին:

Անհաղթելի է օրվա մակընթացությունը:

ՄԱ ՔԱՅ

ՔԱՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՁ

Օգոստոս 2007

Ալիքներ է բարձրացնում սուրճը, իսկ գինին
հոսում է,
Երբ բանակցողներն անցնում են մուրճի ու արքանի:
Շահը կախված է խելացի նվիրելուց եւ խիզախորեն
վերցնելուց է կախված:
Ապագան բաղկացած է փոխադարձ շահերից ու
հաղթական արդյունքից:

ՓՈԹՈՐԿՈՒՆ ԼՈՒԴԻՆԳ ԿԱՍՈՒՐՋԸ

Յունիս 2001

Վսեմ երկինք է հասնում բարձր ժայռը.

Ներքեւ՝ լեռնագոգ են թափվում սպառնազին

հեղեղները:

Գետի վրա շղթայակապ կամուրջն¹⁷⁵ է կախված,

Արժիվները կարծում են՝ քայքայված է կամուրջը:

Այս նեղ անդունդների դաժան հողաշերտում

Յին ժամանակների¹⁷⁶ մեկուսացած բանակը

մոխրացավ:

Չգիտես՝ որտեղից եկան աստվածային

ռազմիկները,

Յանդգնեցին լռեցնել թշնամիների

սին գառանցանքը¹⁷⁷:

¹⁷⁵ Լուդինգ կամուրջը, որ գտնվում է Սիչուան նահանգի Լուդինգ շրջանում, անցնում է 'Դադու գետի վրայով'՝ 13 հաստ երկաթե շղթաներով, որոնք բաղկացած են 12,164 օղակներից:

¹⁷⁶ 1863 թվականին Թայփինգի երկնային թագավորության (1851-1864) բանակի մի մասը, գեներալ Շի Դակայի (1831-1863) գլխավորությամբ ջախջախվեց անհաջող փորձից հետո, երբ նրանք ջանում էին կտրել-անցնել Դադու գետը Լուդինգ կամջից հարավ ընկած մասից հատվածից:

¹⁷⁷ 1935թ. մայիսին կոմունիստների ղեկավարած Կարմիր բանակը իր էպիկական Երկար մարտի (1934-1935) ընթացքում անցավ Ջինչա գետը Սիչուանի հյուսիս-արևմուտքում ու Շի Դակայի ճանապարհով շարժվեց դեպի Դադու գետը: Կոմունիստանգի գեներալներին ուղղված հեռագրում Չիանգ Կայ-շեկը կանխատեսել էր. «Դադու գետի բնական արգելքն այնտեղ էր, որտեղ Թայփինգի երկնային թագավորության Շի Դակայը վախճանվեց: Կոմունիստական բանակը դատապարտված է, որովհետև ստիպված է կրկնել Շիի սխալները»:

ՄԱ ՔԱՅ

Դրոշները ձեռքերին՝ արդարություն տարածելու,
Ազատության համար հրենց կյանքը կորցրին:
Վախենալու ոչինչ չիք, մանավանդ ալիքներից,
Կարելոր չէր՝ շղթաներն ամուր էին, թե ոչ:
Մռնչալով անձրեւող գնդակների ու ռումբերի տակ՝
Փոքր տանկերը նրանք ոչնչացրին գրոհով:
Սեղմված մահվան զառիթափին՝ թշնամուն
Ոչինչ չէր փրկի, նույնիսկ հզորագուն
ամուր ամրոցը:
Արդարության պաշտպան բանակն այս
անհաղթելի է:
Մահվանը դիմակայող հերոսությունը աշխարհն է
ցնցում,
Չավերժ հիշվում է Կարմիր բանակը:

ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱԼԱՏՈՒՄ ՇՐՋԵԼԻՍ

Սեպտեմբեր 2001

Մթնշաղի անձրեւի տակ, Ձմեռային պալատում¹⁷⁸
թափառում եմ,
Եվ խոր հառաչում իմ տեսածից՝ լայնացած
աչքերով:
Գրանիտե սյուները պահում են կայսերական
գմբեթը.
Մարմարե սանդուղքները դեպի ճակատամուտք են
տանում:
Ճոխ ոսկին ու նեֆրիտը իսկական խրախճանք են
աչքերի համար,
Արծաթագույն ջահերը հմայում են տարբեր
ծելվածքներով:
Փորագրված հավերժահարսերը պատրաստ են
քայլել տանիքի հեծանների,
Սյուների և կարված նժույգները գուցե արշավեն,
Եթե խնդրես:
Չարդարված նեֆրիտներով ու թանկարժեք
քարերով զարդեր,
Ասեղնագործ կարմիր շրջագգեստներ՝
մարգարտապատ:
Միջանցքները լցված են արժեքավոր կտավներով ու
քանդակներով,
Պալատներում ոսկու ձուլակտորներ ու
հազվագյուտ քարեր են կիտված:
Արեւելքից ու արեւմուտքից արշավախմբերը

¹⁷⁸ 18-րդ դարի կեսին առաջին անգամ Ռուսաստանի Սանկտ-Պետերբուրգ քաղաքում կառուցված Ձմեռային պալատը ցարերի պաշտոնական նստավայրն էր 1732-1917 թթ.:

ավերածություններ թողին,
Հարավում ու հյուսիսում պատերազմներից
վասալներ մնացին:
Բաղձալի գահը կախարդեց անթիվ
ազնվականների,
Նրանց դաշույն-կացիները ներկվեցին շարքային
քաղաքացիների արյամբ:
Հրանոթների¹⁷⁹ թնդյունն արձագանքում է օդում,
Նոր դարաշրջան է սկսվում, երբ դրոշը բարձրանում է
տանիքներից վեր:
Երբ գերմանացի նվաճողները ցնցեցին աշխարհը,
Մեր երկիրն արժանացավ հիացմունքի:
Նրա տիեզերանավերը հմայում են աշխարհը:
Ատոմային ռումբերն ավելացնում են
համաշխարհային գերիշխանությունը:
Այս ամենը չքացավ մի երեկո¹⁸⁰,
Որտե՞ղ է այս երկրի փառքն անցյալի:
Երկրի տկարացող մկանների վրա հառաչում է
քամին,
Երկար է դեպի երիտասարդացում նրա
ճանապարհը:
Բազրիքին հենված՝ հիշում եմ նրա անհամար
վերելքներն ու վայրէջքները,
Ճակատագիրը նրա կախված է ճիշտ ուղի ընտրելուց:

¹⁷⁹ 1917 թվականի նոյեմբերի 7-ին Ավրորա ռազմանավը, որ մոտեցել էր Նեւա գետի նավամատույցին, ռմբակոծեց Սպիտակ պալատը՝ Վլադիմիր Լենինի ղեկավարած ապստամբության ծրագրի համաձայն: Այսպես հռչակվեց համաշխարհային պատմության մեջ առաջին սոցիալիստական երկիրը, որը մարդկության պատմության մեջ նշանավորեց նար դարաշրջանի սկիզբը:

¹⁸⁰ 1991 թվականի օգոստոսի 19-ը նշանավորվեց որպես Միացյալ Մովետական Մոցիալիստական Հանրապետությունների անկման սկիզբ, որի հիմնադիր-հայրը Լենինն էր:

ՀՈ ՇԻ ՄԻՆԻ¹⁸¹ ՂԱՄԲԱՐԱՆԸ

Նոյեմբեր 17, 2006

Ես դանդաղ դուրս եկա սգասրահից,
Նրա հոնքերը մի ժամանակ աղվամազով էին
ծածկված, իսկ միտքը սուր էր:
Տեսնելով մարդուն խաղաղության մեջ քնած՝
Այնքան տխուր էի, որ արցունքներով ողողված էր
կրծքավանդակս:
Որպես ընկերներ, եղբայրներ ու հարեաններ՝
Մեր ազգերը հզոր օգնում էին իրար:
Նախորդ դարերից քաղած դասերով՝
Եկեք հանուն սերունդների առազաստ պարզենք:

¹⁸¹ Հո Շի Մին (1890-1969)՝ Վիետնամի Աշխատավորական կուսակցության և Վիետնամի Գեմոկրատական Հանրապետության հիմնադիր, որի նախագահն էր 1946-1969 թթ.

ՄԱՐՏՆՉՈՂ ՀԵՂԵՂՆԵՐ

Հոկտեմբեր 1998

I. Սրտի լարերը ձգող հեղեղներ¹⁸²

Փոթորիկը սուրում է,
Ալիքները՝ մռնչում,
Գետերը ուռչում են,
Լճերը՝ հորդում:
Մի դար անց դա պատահեց եռակի՝¹⁸³ միայն մեկ
անգամ¹⁸⁴,

¹⁸² 1998 թվականին Չինաստանում գրանցվեցին դարի ընթացքում ամենավատ եղանակային պայմանները, երբ Յանգցե, Սոնգհուայանգ, Փըրլ, Սինյիան և որոշ այլ խոշոր գետեր դուրս եկան ափերից: Ողջ ժողովուրդը ներքաշվեց ակտիվ պայքարի մեջ՝ ընդդեմ զանգվածային հեղեղների: Հեղեղների կանխարգելման և հակաերաշտային պետական վարչության մյուս անդամների հետ ես ևս շրջայցեր էի կատարում վնասված տարածքներում և ականատես եղա, թե ինչ էր կատարվում այնտեղ: Այդ օրերին սիրտս ակեկոծում էին ամեն տեսակ զգացմունքներ, որոնք գազաթնակետին հասան այս տասը բանաստեղծության մեջ:

¹⁸³ 1998 թվականին Յանգցե գետը ողողեց ափերը, իսկ խոշոր փոթորկից հետո դուրս եկավ ափերից ավելի ցածր հատվածներում: Հեղեղներին միացան Հունան հյուսիսային մահանգի Դոնգքինգ լճի և Յիանսի հյուսիսային մահանգի Փոյանգ լճի արտահոսքերը, ինչի պատճառով հեղեղները արագ հաջորդում էին մեկը մյուսին: Արդյունքում Յանգցի գետի ջրի մակարդակը բարձրացավ ու հասավ ամենասահագնացող չափերի:

¹⁸⁴ Երեք խոշոր հեղեղներն այս երկրում տեղի ունեցան 20-րդ դարում. նախ 1998 թվականին հեղեղները ողողեցին Յանգցե գետի հովիտը: Սա իր մասշտաբով երկրորդն էր 1954 թվականին Սոնգհուայանգ գետի ավազանի վարարումից հետո: Արագությամբ ու ծավալով երկրորդը 1998 թվականին Սինյիան գետի հեղեղներն էին, որոնք ամենասարսափելին էին այդ ժամանակահատվածում, իսկ երրորդը Սինյիան գետի վարարումն էր, որ հեղեղեց Փըրլ գետի հովիտը:

Վիշապների պես փրփրում էին գետերը,
երկինքները թափվում էին ցած:
Յագիվ հարավային գետը¹⁸⁵ մեղմել էր անեծքը,
Երբ երկու հյուսիսային գետերն¹⁸⁶ անսանձ հոսեցին:
Ավելի ու ավելի էին բարձրանում ջրի ալիքները,
Անթիվ-անհամար պատնեշված գյուղեր
կործանվեցին:
Յեղեղներն անգույթ էին. մարդիկ՝ կարեկից:
Յեռուստացույցից կառչած աչքերով՝ շատերի
սրտերն ուժգին ցավում էին:

¹⁸⁵ «Հարավային գետը» վերաբերում է Յանգցեին, որը 1998 թվականին մեկը մյուսի ետևից ութ անգամ վարարեց:

¹⁸⁶ «Հյուսիսային գետերը» վերաբերում են Սոնգհուայան ու Նենյի-ան գետերին: 1998 թվականի ջրերի բարձրացման շրջանում Նենյիան գետը վարարեց միանգամից ութ հատվածում, ինչը կարելի է համեմատել սանձը պոկելուց հետո սլացող ձիու պատկերի հետ:

II. Կամքի անառիկ միություն

Կարմիր դրոշներն են դյուրում,
Շեփորները՝ կանչում,
Բաճկոններ կարմրանարնջագույն¹⁸⁷,
Ճակատամարտի խորին հոգևություն:
Կույտեր, քշված դեպի պատնեշները, քարշ տված
ավազապարկեր,
Պողպատե պատեր կառուցելու համար
համախմբված զինվորականներ ու քաղաքացիներ:
Կյանքի ու մահվան հմայիլները¹⁸⁸ նետելով
հոգիներին,
Խողովակաշարեր¹⁸⁹ ամրացրին իրենց
կրծքավանդակներին:
Չեղելների վախից պատնեշները մեկեն
բարձրանում էին:
Ալեկոծությունը ստիպեց, որ մարդն ու պատնեշը
գոյակցեն:

¹⁸⁷ Այն է՝ փրկարար բաճկոններ:

¹⁸⁸ Հակահեղեղային պայքարի առաջին գծում կառավարության տարբեր մակարդակի ղեկավարներից յուրաքանչյուրը պայմանագիր կնքեց, ըստ որի պիտի ապահովեր իր պատասխանատվության տակ գտնվող տարածքների անվտանգությունը: Նրանցից ոմանք երդվեցին ապրել կամ մեռնել իրենց պատասխանատվության տակ գտնվող պատվարների տակ:

¹⁸⁹ Հեղեղվող ջրաշերտերի պատճառով սկսված ենթամակերեսային քայքայումը հաճախ հանգեցնում է նրան, որ գետի ամբարտակում առաջանում են անցքեր: Եթե գործընթացը չկանգնեցվի ճիշտ ժամանակին, դրանց թվերը և չափսերը կարող էին բազմապատկվել այնքան, մինչև ամբարտակն ամբողջությամբ ողողվի ու փլվի: Այս հեղեղումների ընթացքում բազմաթիվ վայրեր ողողվեցին ջրով, որովհետև անցքերով պատված պատվարը կամ քայքայված ափը չէր դիմանում հեղեղներին և փշրվում էր:

Դեպի լուսին էին ձգվում լապտերների շարքերը,
Միս ու արյան պատերից մեղմացան գետերը:

III. Փրկության գործողություն Փայջժուում¹⁹⁰

Հիմքերն ընկան կապալարերից,
Պատնեշները փլվեցին:
Վայրի հեղեղները թափով
Ցած էին սուրում:
Լաստանավերը սլացան փոքրիկ այգու
տանիքի եզրով,
Որտեղ ծառերի կատարների պես բարձր
կանգնած էին մարդիկ:
Անձնուրաց գինվորները փրկարար բաճկոններ
հագցրին մարդկանց,
Ու նրանց փոխադրեցին անվտանգ վայրեր:
Այնքան շատ ընտանիքներ վերամիավորվեցին,
Բայց փրկիչները երբեք չվերադարձան:
Կյանքի հույսը թողնելով ուրիշներին՝
Հերոսները հուզեցին երկիրը, եւ երկինքն
արտասվեց:

¹⁹⁰ Փայջժում՝ Հուբեյ նահանգի Ջիալու կոմսության շրջանը այն հատվածում էր, որտեղ Յանգցեն վտանգավոր շրջադարձ է կատարում: 1998 թվականի օգոստոսի 1-ին, ժամը 20:00-ին այդ հատվածի պատվարն անակնկալ կերպով պատվեց անցքերով և արդյունքում փլվեց՝ անօգնական վիճակում թողնելով 50,000 տեղի բնակիչ: Անմիջապես սկսվեց փրկարար գործողությունը:

IV. Ձիույինգի պատվարը նորոգելի¹⁹¹

Ձիույինգ գետ,
Ջրարգելակի Չորրորդ դարպաս.
Խողովակաշարի անցքերը փակվում են,
Ամբարտակները քանդվում են:
Երբ հզոր հեղեղները եւս մի անգամ ճեղքեցին
ափերը,
Քանդելով շավիղներն ավելի արագ, քան ձիերը
վարգուն:
Յեղեղումները ընդհատելու համար քարերն
անիմաստ էին,
Նավերը սուզվեցին, որ արգելափակեն այն,
բայց՝ իզուր:
Մինչդեռ մարդիկ փորում էին, նորից ու նորից
շարում քարերը,
Պողպատե սուզարկղ կառուցելու համար
դասավորել էին կույտ առ կույտ:
Ճեղքը փակ էր հինգ օր տեւած ծանր աշխատանքից
հետո,
Բազմությունը մռնչում էր հաղթանակից,
իսկ արցունքները հեղեղում էին:

¹⁹¹ Ձիույինգ գետը Յանգցեի մի մասն է: 1998 թվականի օգոստոսի 7-ին նրա մի հատվածը, որ գտնվում է երկու ջրարգելակների արանքում, ողողվեց հեղեղներից՝ ամբարտակի մեջ թողնելով 30 մետր լայնությամբ ճեղք: Հինգ հազար սպա ու զինվոր շտապեցին դեպքի վայր, որտեղ միացան տեղի բնակիչներին և հինգ օր անդադար վերահսկում էին գետը: Որպես շինարարական կադապարներ օգտագործելով պողպատե ու փայտե արկղեր, որոնք լցված էին մեծ քարերով, նրանք կառուցեցին երեք ամբարտակ և ի վերջո արգելափակեցին ճեղքը:

V. Ետ պահելով Յինգյիանի հեղեղները

Երկինքը թշնամաբար նվաղում է¹⁹²,
Անձրեւի կաթիլները խրվում են հանց դաշույն,
Ջուրը շեշտակի բարձրանում է¹⁹³,
Շեղման մակարդակը տազնապեցնում է:
Երբ քամին ոռնում է, գետի մոտ են դառնում
գինվորները¹⁹⁴,
Վճռական հանձնագրով, սարի պես ծանր:
Նրանք ծանրութեթեւ են արել տարբերակները.
Ճիշտ ժամանակին գտել են հուսալի լուծում:
Տեղակայված գործերը¹⁹⁵ խելացիորեն վարում են
բարձրացող հեղեղը,

¹⁹² Յանգցե գետի հեղեղները գազաթնակետին հասան երրորդ անգամ, բայց ապահով նահանջեցին մինչ հուլիսի ավարտը: Սակայն մարդիկ դեռ չէին հասցրել հանգիստ հոգոց հանել, երբ օգոստոսի սկզբին փոթորիկների մի նոր ալիք վրա հասավ:

¹⁹³ Ջրի շեղման մակարդակը Յինգյիան գետի՝ Յանգցեի ճյուղի պատվարների համար, սահմանվել է 44.67-45 մետր: 1998 թ. օգոստոսի 16-ին այն 44.95 մետրից հասավ 45.2 ցուցանիշին:

¹⁹⁴ «Ջինվորները» իրականում Հեղեղների կանխարգելման և հակահեղեղային պետական բաժնի ղեկավարներն էին, որոնք շտապ վերադարձան վարարած գետի մոտ՝ Չինաստանի հյուսիսում: Բայդայիեում քաղբյուրոյի հանդիպումից անմիջապես հետո՝ հատուկ հանձնարարությամբ, որ երբ գետում ջրի մակարդակը սպառնա անցնել անվտանգության սահմանը, Գլխավոր բաժինը պիտի որոշի՝ արդյո՞ք պետք է շեղել հավելյալ ջուրը:

¹⁹⁵ Ջինվորների ութ դիվիզիա ուղարկվեց Հունան նահանգ՝ վարարումների դեմ պայքարի առաջնագիծ՝ Յանգցե գետի ամբարտակի անվտանգությունն ապահովելու նպատակով, իսկ մինչ այդ ջրարգելակի դարպասները գետի վերին հատվածներում փակ էին, որպեսզի արգելեն ավելցուկային ջրերի հոսքը՝ փորձելով նվազեցնել հոսանքով ի վար իջնող վարարումների ծավալը:

Պատնեշներն ուսումնասիրվում են, երկրի
անվտանգությունը երաշխավորված է:
Երբ հեղեղները շարունակ ալիքվում են նրանց
ուսերի վրա,
Ուշ չեն դարձնում զինվորները ծպտված
վտանգներին:

VI. Ի պաշտպանություն Դաքինգի¹⁹⁶

Ջրից հառնում է վիշապը,
Վագրը գալիս է բլուրն ի վար¹⁹⁷,
ԻՆչ անսահման է երկինքը:
Ավելի անսահման են ջրերը:
Պատնեշների շերտերը մեկը մյուսի ետեւից
ճեղքվում են¹⁹⁸,
Թողնելով նավթահանքի երեք կողմերը
պաշարված¹⁹⁹:
100,000-անոց հզոր բանակը դասավորվել է՝
սահման կառուցելու,
Ինչպիսի՞ մարդկային ալիք ու նավադրոշների ծով:
Մարդիկ չեն դողում, թեեւ շրջապատված են
արագահոս ջրերով.
Գլուխները գուցե սուզված են, մեջքները
ուղիղ են մնում:

¹⁹⁶ Դաքինգում է գտնվում Չինաստանի խոշորագույն նավթահանքը: Օգոստոսի կեսին փոթորկոտ Նենյիան գետը վարարեց Դաքինգում, և 300,000 մարդ շտապեց դեպքի վայր՝ նավթահանքը պաշտպանելու:

¹⁹⁷ Արտահայտչամիջոց, որը հեղեղուն Նենյիան գետը նմանեցնում է վիշապի և վագրի:

¹⁹⁸ Օգոստոսի 15-ին Նենյիան գետի վարարումը քանդեց Լահայ շրջանի Դաքինգի նավթահանքի պատնեշը՝ հեղեղը կանխարգելող առաջին պատնեշը, իսկ հաջորդ օրը՝ երկրորդ պատնեշը:

¹⁹⁹ Որոշ ժամանակ Դաքինգի նավթադաշտի հյուսիսային, արևմտյան ու հարավային կողմերը շրջապատված էին հեղեղներով, որոնք գալիս էին համապատասխանաբար Նենյիան, Սոնգհուայիան և Շուանյանգ գետերից:

Կանչելով Երկաթե մարդուն²⁰⁰, ասես նա դեռ
մոտակայքում է,
Մինչեւ գոտկատեղ խոնարհվող մեքենաները²⁰¹
շարունակ գվկում են:

²⁰⁰ Վանգ Յինսիի (1923-1970)՝ Գափինգ նավթահանքի համառ ու աշխատասեր աշխատակցի կեղծանունը, որը մինչ այժմ էլ համարվում է Չինաստանի օրինակելի քաղաքացիներից մեկը:

²⁰¹ Նավթահանքի գայլիկոնների պատկերավոր նկարագրություն:

VII. Գիտության ուժը

Յիդդուլոգիական ջոկատ,
Եղանակի կայան,
Կարգավորողի հրահանգ,
Թե որտեղ է պատերազմը:
Լուր է ստացվում, որ վիշապը խնդիրներ է
ստեղծում²⁰²,
Աղեղները սուզված են, նետերը գործի են անցնում
այս վաղ գարնանը:
Ուսումնասիրելով ջրի արագությունն ու անձրեւի
հավանականությունը՝
Տեղակայման ծրագրերն ու պայքարի դիրքերը
գծված են:
Փորձագետները պատնեշների մոտ փնտրում են
թաքնված վտանգներ,
Որ հեռացնեն ճեղքերն ու պաշտպանեն
պատնեշները:
Յեղեղները կանխելու համար բլրի գագաթները
հավասարեցվում են:
Եվս մի աղետ կանխվեց. փրկված է օրը:

²⁰² Վիշապը վերաբերում է հեղեղներին: 1998 թվականի գարնանը Չինաստանի օդերևութաբանական վարչությունը կանխատեսեց, որ խոշոր վարարում է սպասվում Յանգցե գետի ավազանի երկայնքով՝ նույն ծավալով, ինչ պատահեց 1954-ին: Հետևաբար, Վարարումների կանխարգելման, երաշտի ու երկրաշարժերի դեմ պայքարի պետական վարչությունը նախազգուշական միջոցներ ձեռնարկեց, և գետի տեղական վտակները նույնպես պատրաստ էին պայքարի:

IX. Ստոր եր աղետից հետո

Չեղեղները հետ քաշվեցին,

Քունը խուլս է տալիս,

Չետ նայելով՝

Ամաչու՞մ ենք մենք:

Պատնեշված տեղերում²⁰⁵ աղտոտված էր

Դոնգթինգ լիճը,

Բուսականությունը Յանգցեի ակունքներում

Նոսրացել է²⁰⁶:

Տիղմով լի բազմաթիվ ակունքներ քայքայում են

հողը,

Փաթաթվող վիշապներն ափ են նետվել,

ի սարսափ մեզ:

Թող սուզված դաշտերը վերադառնան ջրուղիներին,

²⁰⁵ Մեծ թվով պատնեշների պատճառով Դոնգթինգ լճի ջրային մակերեսը 1949 թվականին 4350 քառակուսի կիլոմետրից 1984 թվականին կտրուկ նվազեց 2691-ի, իսկ ջրի պահուստավորման տարողությունը 29.3 միլիարդից իջավ 17.4 միլիարդ խորանարդ մետրի: Տեղական էկոհամակարգն ու լճի հակավարարային համակարգն արդյունքում մեծ վնասներ կրեցին:

²⁰⁶ Առանց պատճառի ծառահատումները լուրջ վնասներ հասցրին բուսականությանը Յանգցե գետի վերին ու միջին հոսանքներում: Ըստ 1957 թվականի վիճակագրության՝ ամբողջ Յանգցե գետի ավազանի անտառածածկույթը կազմում էր 22%, իսկ հողի քայքայված հատվածը 363,800 քառակուսի կիլոմետր էր, կամ այդ ավազանի ընդհանուր տարածության 20.2 %-ը: 1986 թվականին կամ 30 տարի անց անտառածածկույթը կիսով չափ նվազեց՝ հասնելով 10%-ի, մինչդեռ հողի քայքայումից (էռոզիայից) տուժած տարածքը հասավ 739,400 քառակուսի կիլոմետրի՝ կազմելով ամբողջ ավազանի 41%-ը:

Եվ ազարակները վերադառնան անտառներ՝
կանաչ բլուրներով²⁰⁷:
Պետություն ղեկավարելու մեջ ամենակարեւորը ջրի
պահպանությունն է.
Երկնքի ու մարդկության համար էականը
ներդաշնակությունն է:

²⁰⁷ Այս հեղեղումների սկզբնական շրջանում գլխավոր պաշտոնյաները որոշ քայլեր ձեռնարկեցին՝ «երկրագործությունից անտառապահության անցնելու, մշակովի հողերը լճերի վերածելու, դաշտերի մակարդակը բարձրացնելու և գյուղերը նոր քաղաքների վերածելու ուղղությամբ»: Այդ ընթացքում նախագծեր ձեռնարկվեցին Յանգե գետի վերին և միջին տարածքներում, և անտառանյութի մթերումն այս անտառներում արգելվեց:

ԾԵԾՈՂ ՁՆԱԲԵՐ

Մարտ 2008

I. Սառցե հարձակում²⁰⁹

Եղանակը սաստկացավ,
Յարավային Չինաստանը մեկեն ցրտեց,
Ձյունը օդում պտույտներ տվեց,
Յողը պատվեց սառցե բոժոժներով:
Բոլոր բլուրները հառաչեցին ծանր
սառցալեզվակներից,
Ամեն ինչ անհետացավ արծաթե ծածկոցի տակ:
Ութ հազար ցանցապատ աշտարակ ընկավ²¹⁰,
Խցանված ճանապարհ, մղոններ ձգվող
երկաթուղի²¹¹:
Միլիոնավոր հեկտարներով չորացած բերք²¹²,

²⁰⁹ 2008 թվականի հունվարի կեսից մինչև փետրվարի սկիզբը հարավային Չինաստանի մեծ մասը կաթվածահար եղավ ամենասաստիկ ցրտից և ձնաբքից, որ առաջինն էր կետարյա, իսկ որոշ մասերում՝ մեկդարյա պատմության մեջ: Յուրտն անտվոր երկար տևեց: Տուժեց քսան մահանգ, որի բնակչության ընդհանուր թիվը հասնում էր 100 միլիոնի: Այս բնական աղետի դեմ ակտիվ պայքարը սկսվեց անմիջապես կենտրոնական կառավարության ղեկավարությամբ:

²¹⁰ Ընդհանուր թվով 8381 պողպատե աշտարակ փլվեց ցանցերի վրա նստած սառույցի շերտի ու նրանց վրա ամրացված բարձր լարումով հոսանքագծերի քաշի պատճառով:

²¹¹ Երբ աղետը հասավ գագաթնակետին, այն կաթվածահար արեց 387 գնացք, 700,000 ավտոմեքենա և անելանելի դրության մեջ գցեց միլիոնավոր զբոսաշրջիկների:

²¹² Աղետից տուժեց 178 միլիոն մու (մեկ մուն հավասար է հեկտարի մեկ տասնհինգերորդին) գյուղատնտեսական բերք և հանգեցրեց 25.36 միլիոն մու բերքի փչացման:

ՄԱ ՔԱՅ

Ամեն կացարանում՝ աղոտ լապտերներ²¹³:
Ամբողջ երկրով մեկ մարդիկ տազնապած են,
Չժոնգլանհայում²¹⁴ մարդիկ մոռացել են քսել:

²¹³ Հունանի, Գուիչժուի ու որոշ այլ նահանգների 170 շրջաններ հոսանքազրկվեցին:

²¹⁴ Չժոնգլանհայը, որը Պեկինի անցած-գնացած օրերի Արգելված քաղաքի մի մասն էր, Չինաստանի կենտրոնական կառավարության նստավայրն է:

II. Շեփորի կանչ

Լուռ կարգուկանոն հաստատվեց,
Կուսակցության դրոշը կանչում է,
Չանգվածները համախմբվեցին
Ու քայլեցին դեպի ծանր պայքար:
Կուսակցությունը վագոնում էր²¹⁵, ոգեւորությունն
աճում էր,
Հարյուր հազարավոր մարդիկ ի գործ էին ձգտում:
Թափվող ձյուն, հաստ սառույց. ոչինչ
սարսափելի չէ,
Ոռնացող քամին, հորդացող անձրեւները
կարելուր չէին:
Օգնությունն իսկույն վրա հասավ ձնաբքից հետո,
Ուս ուսի տված՝ բազմությունը տքնում էր:
Երթեւեկությունը, ուժը, առօրյա կյանքը
պահպանելու համար²¹⁶
Հայտարարված պատերազմ էր՝ ընդդեմ
դժբախտության²¹⁷:

²¹⁵ Վճռական պահին նախագահ Հու Յզինթաոն և այլ առաջնորդներ շտապեցին դեպի վայր՝ փրկարար գործողությունները դեկավարելու, դրանով մեծապես բարձրացնելով փրկարար ջոկատների և տեղի բնակչության բարոյական ոգին:

²¹⁶ Կենտրոնական կառավարության կարգախոսն էր՝ «ապահովել կապի ու երթևեկության միջոցները, հոսանքի մատակարարումն ու մարդկանց ապրուստը»:

²¹⁷ Փրկարար և հակաձնաբքային գործողությունների ընթացքում արտակարգ իրավիճակների հինգ գործողություն կազմակերպվեց՝ համապատասխանաբար ճանապարհները նորոգելու և երթևեկությունը վերականգնելու, էլեկտրացանցերի աշխատանքը վերականգնելու, էլեկտրակայաններում քարածխի մատակարարումն արագացնելու, աղետից տուժածների առօրյա կյանքի կարգուկանոնը վերականգնելու և ձնաբքից տուժած տարածքներում ապրանքների մատակարարումն ապահովելու նպատակով: Այս ամենն օգնեց վերականգնել կարգուկանոնը տուժած տարածքներում:

III. Ճանապարհ հարթոցները

Երկաթուղու երթեւեկությունը կանգ է առնում,
Բազմությունը ծանր կացության մեջ է,
Մայրուղիները՝ հաստ սառույցի տակ,
Բյուր մեքենաներով խցանված²¹⁸:
Կարոտաբաղձ ճամփորդները երեկոներ են
անցկացրել անհանգիստ հեռվում,
Թավաները դատարկ են. բրնձի պաշարը խցանված է
ճանապարհի կեսին:
Փրկարարները, դժբախտության դեմ մարտնչելով,
Պայքարում էին՝ ձյան պատնեշ բարձրացնելու եւ
սառցապատ բլուրները հալեցնելու:
Մարդկանց ուղարկում էին տուն²¹⁹՝ զարտուղի

²¹⁸ 2008 թվականի հունվարի 25-ից սկսած՝ Պեկին-Գուանգչժու և Շանհայ-Կունմինգ երկաթգծի երթևեկությունը կանգ առավ հոսանքազրկման պատճառով. Պեկին-Չժուհայ և որոշ այլ բեռնատար ճեպընթաց ուղիներ, որոնց ընդհանուր երկարությունը մոտ 20,000 կմ էր, կաթվածահար եղան: Ընդհանուր առմամբ 220,000 կմ երկարությամբ մայրուղի խցանված էր մեքենաներով. և զգալի քանակով օդանավակայաններ փակվեցին: Միլիոնավոր կարոտաբաղձ ուղևորներ հայտնվեցին ծանր դրության մեջ՝ օդանավակայաններում, երկաթուղային կայարաններում և ճանապարհին:

²¹⁹ Ընդհանուր թվով 557 դիգելային շոգեքարշեր փոխարինեցին կաթվածահար եղած էլեկտրական շոգեքարշերին, որպեսզի սպասարկեն զբոսաշրջիկներին այն երկաթուղիների վրա, որոնք դեռ գործում էին: Լուսնային Նոր տարվա նախօրեին, որ 2008 թվականի փետրվարի 5-ին էր, անհաջողության մեջ հայտնված բոլոր ուղևորներն արդեն հասել էին իրենց նպատակակետերին:

ճամփաներով²²⁰,
Քամին սառեց, բայց տաք էին բոլոր
ճանապարհորդները:
Երբ երթեւեկությունը բնականոն իր հունը
վերադարձավ,
Երկինքն արցունքներով արձագանքեց շեփորների
հեռվում փողհարած²²¹:

²²⁰ Երկաթուղային բաժինը կաթվածահար եղած էլեկտրական շոգե-
քարշերը փոխարինեց 557 ներքին այրման շարժիչներով՝ դեռևս գոր-
ծող երկաթգծերի վրա երթևեկությունը վերականգնելով կամ շրջանցե-
լով ձնաքից կաթվածահար եղած երկաթգծերը: Մինչ այդ, երկաթուղու
աշխատակիցները, ոստիկաններն ու նրանց ընտանիքի անդամները
միացան գնացքի կայարաններում մնացած ուղևորներին ծառայելու
գործին:

²²¹ Թեք լանջերը պատած սառույցի և ձյան շերտերը լրջորեն խցա-
նել էին Պեկին-Չժոուիայ ճեպուղու հյուսիսային Գ-ուանգդոնգ և հարա-
վային Հունան հատվածները, և երբ իրավիճակը սաստկացավ, ավելի
քան 10,000 ավտոմեքենա մնաց ճանապարհներին: 2008 թվականի
փետրվարի 4-ին, երբ այս հատվածներում երթևեկությունը վերա-
կանգնվեց, ճանապարհի երկայնքով վարորդները միաժամանակ սեղ-
մեցին ձայնային ազդանշանները՝ իրենց երախտագիտությունը հայտ-
նելու տեղաբնակ քաղաքացիական ծառայողներին, զինվորներին ու
քաղաքացիներին, որոնք ամբողջ գիշեր աշխատել էին՝ ճեպուղին ձյու-
նից ու սառույցից մաքրելու համար:

VI. Լույսի պատվիրակներ

Ձողերը փլված,
Ցանցապատ աշտարակները՝ ծավլած մեջքի վրա,
Էլեկտրացանցերը սաստիկ վնասված են²²²:
Յոսանքը միացնելու համար տասը հազար մարդ²²³
ժամանեց աղետի վայր,
Ծառեր հատեցին ձևաձածկ բլուրներին ու
ճանապարհներ հարթեցին:
Յյուսիսային աշտարակների վրա ճաքճքում էր
Նրանց դեմքի մաշկը,
Մարմինը սառչում էր ցանցերից պողպատե:
Ուների վրա քարշ տալով պողպատե ձողերը, որ
կախված են օդում,
Մերկ ձեռքերով, ողջ երկրով մեկ, նրանք հանգուցում
էին հոսանքալարերը:
Երբ ընտանիքներում լամպերը դարձյալ
վառվեցին²²⁴,
Պատուհանների վրա ուրվագծվեցին կանայք,
որ հանդարտ հարդարում էին իրենց մազերը:

²²² 36,700 էլեկտրալարերի հոսանքազրկումը կաթվածահար արեց առօրյա կյանքն ու քիզմեսը 13 նահանգում:

²²³ Որոշ ժամանակ վարպետներն աշխատում էին կաթվածահար եղած էլեկտրացանցերի վրա, որոնց թիվը հասնում էր 420,000-ի:

²²⁴ Մինչև մարտի 12-ը էլեկտրացանցերի արտահերթ նորոգումը հիմնականում ավարտված էր, քանի որ վնասված հոսանքագծերի 95%-ը և կաթվածահար եղած հոսանքափոխարկիչ ենթակայանները վերագործարկվեցին:

V. Քարածուխ՝ ձյունից տուժած տարածքներին

Երբ Նոր Տարվա հրավառությունը ճայթեց,
Յանքափորները դադար առան²²⁵,
Երկիրը փակված էր սառույցով,
Քարածուխն արագորեն սպառվեց:
Շտապ հաղորդում հաղորդման ետեւից. ձյուն էր
տեղում,
Մի հոսանքի գեներատոր մյուսի ետեւից
թուլանում էր²²⁶:
Յանգիստ ու համոզված էին հանքափորները²²⁷:
-Յենց հիմա՛, գևա՛նք, Տղանե՛ր²²⁸:
Այս կողմում Նոր տարին տոնողներն են հավաքվել,
Այն կողմում՝ գայլիկոնները դղրդում են, բրիչները՝
գնգում:

²²⁵ Քարածխի փոքր հանքերը, որոնք կազմում են տուժած տարածքների ընդհանուր քարածխի արտադրանքի 40 %-ը, փակվել էին Գարնան փառատոնի առթիվ:

²²⁶ Երբ աղետի ժամանակահատվածում քարածխի մատակարարումը կիսով կրճատվեց ու հասավ բոլոր ժամանակների ընթացքում իր ցածրագույն միջին, շուրջ 42 միլիոն կիլովատ էլեկտաէներգիա արտադրող էլեկտրակայանները կանգ առան՝ ստիպելով, որ 19 մահանգները օգտվեն հոսանքի մատակարարման քվոտաներից:

²²⁷ Երբ հակաաղետային և փրկարար գործողությունները հասան ճգնաժամային վիճակի, նախագահ Հու Յզինթաոն միացավ հանքափորներին, որոնք աշխատում էին Շանսի նահանգում՝ Դաթոնգում, գետնի տակ՝ 400 մետր խորության վրա:

²²⁸ Գարնան փառատոնի ընթացքում արտադրությունը սովորականի պես էր 2280 պետական ածխահանքերում, ինչը նպաստում էր ածխի արտադրանքի 30 % ավելացմանը:

Չարահոս գծերից դուրս սեւ ոսկին էր հոսում²²⁹,
Չաղթանակով էլեկտրակայանները դայլայլեցին²³⁰:

²²⁹ Երկաթուղու և տրանսպորտի վարչությունների կազմակերպած արշավի ընթացքում, որի նպատակը տարբեր էլեկտրակայաններին շտապ կարգով քարածուխ հասցնելն էր, երկաթուղային տրանսպորտով տեղափոխվելիք քարածխով բեռնված վագոնների միջին օրական թիվը 43,000 էր, այսինքն՝ 53.9%-ով ավելի, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում. Դաթոնգ-Քինգուանդաո երկաթուղով տեղափոխված քարածխի քանակը աճեց 22 %-ով և հասավ օրական միջինը 1 միլիոն տոննայի: Իսկ Քինհուանդաո և երեք այլ խոշոր հյուսիսային նավահանգիստները տեղեկացնում էին, որ ամեն օր նավերը բեռնում են 1.3 միլիոն տոննա քարածուխ, ինչը 24 %-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածից::

²³⁰ Մինչեւ 2008 թվականի փետրվարի 24-ը քարածխի պահուստները ընդհանուր քանակը տեղի էլեկտրակայաններում 27.7 միլիոն տոննա էր, ինչը բավարար պաշար է 14 օրվա համար, իսկ հունվարի 26-ին այն հասավ բոլոր ժամանակների ամենաբարձր ցուցանիշին:

VI. Չինվորները եռանդով աշխատում են

Տագնապի ազդանշանները
Լազուրի անդորրը փշրեցին,
Ներս եկան աստվածային զինվորները,
Նրանց դրոշները կարմիր ներկվեցին²³¹:
Ուղղվեցին այնտեղ, ուր վատթար վիճակ էր,
Նրանց ոսկե շքանշանները սառցե կատարի վրա
շողշողում էին:
Ձնածածկ գեներով՝ խիզախ էին նրանք ու
պայծառատես,
Նրանց քաջությունը եռում էր սառցալեզվակով
պատված սաղավարտի տակ:
Աշխույժ փորում էին նրանք ճանապարհներ ու
ձողեր էին տնկում,
Մխրանքներ էին գործում՝ օգնելով վշտացյալներին:
Մարդկանց կյանքն առնելով իրենց ուսերին՝
Ժողովրդի զինվորներն արթնացնում են քնած
հիմնաժայռը:

²³¹ Ժողովրդի ազատագրման բանակն ու Ձինված ոստիկանությունը վճռական ու վտանգավոր փրկարարական ու հակաադետային առաքելությունների ուղարկեց 1.16 միլիոն մարդ, իսկ Ժողովրդական ոստիկանությունը՝ 5.94 միլիոն մարդ:

VII. Փոխադարձ օգնություն

Տները կորան²³²,
Վերջույթները ցրտից քարացել էին.
Հացահատիկն ու վառելիքը՝ լրիվ սպառվել,
Հոսանքն անջատվել էր:
Մինչդեռ հորդող սերը հուզում էր երկնքին
արտասվելու չափ²³³,
Իսկ ձնաբուքը պատանդել էր երկիրը:
Նոր ապաստաններում տաք են վերաբնակեցված
ընտանիքները,
Ամեն խոհանոցից սննդի բույրն է գալիս:
Հյուրընկալ դիմավորում էին օտարականներին,
Նրանց աչքերը վառվում էին, ասես
տուն էին դարձել:

²³² Աղետից տուժած տարածքներում 485,000 տուն քանդվեց: Շուրջ 1.66 միլիոն անօթևան բնակիչ վերաբնակեցվեց ժամանակավոր կացարաններում:

²³³ Հակաձնաքային պայքարի առաջին առաքելության նպատակն էր՝ «ուտելիքով, հագուստով ու ապաստանով ապահովել տուժածներին և բուժել հիվանդներին»: Կենտրոնական կառավարությունն առանց ժամանակ կորցնելու հատկացրեց 1.824 միլարդ յուանի օժանդակություն, շտապ տրամադրեց 4.31 միլիոն վերմակ, 5.58 միլիոն բամբակե վերարկու, 20.85 միլիոն տոննա արագ սնունդ և 10 միլիոն մոմ, էլեկտրական լապտեր ու լամպ հասցրեց տուժած տարածքներ: Սրան ավելացան նաև նվիրատվությունները երկրից և նրա սահմաններից դուրս, որոնց թիվը հասնում էր շուրջ 2.275 միլիարդ յուանի:

Յեռուստատեսային հանդեսը²³⁴ սկսվեց, երբ տները
լուսավորվեցին,
Կենացների պահին արցունքները թրջում էին
մարդկանց հագուստը:

²³⁴Գարնան ամենամյա փառատոնի հանդիսությունը, որ ուղիղ եթերով հեռարձակվում է Չինաստանի կենտրոնական հեռուստատեսությամբ և լուսնային Նոր տարվա նախօրեին սահմանված կարգով դիտվում ըստ էության Չինաստանի բոլոր ընտանիքների կողմից, շուրջ է, որը գրավում է ավելի մեծ թվով հեռուստադիտողների ուշադրությունը, քան այս մոլորակի վրա որևէ այլ իրադարձություն: Երբ վարչապետ Վեն Յզիաբաոն Հունան և Գուիչժու նահանգներում ղեկավարում էր հակաաղետային գործողությունները, նա պահանջեց, որ հոսանքի մատակարարումը վերականգնվի աղետից տուժած տարածքներում ամենամյա հեռուստատեսային միջոցառումից առաջ: Փետրվարի 6-ին էլեկտրամատակարարումը վերականգնվեց 170 բնակավայրերում ու ձմաքբից տուժած քաղաքների ու գյուղաքաղաքների 87 %-ում ամենահայտնի հեռուստատեսային շոուից անմիջապես առաջ:

VIII. Հայրենիքը վերակառուցված է

Ծառերը գլխատված են,
Բամբուկները՝ առանց տերեւների²³⁵,
Սերմաբույսերը²³⁶՝ գլխիվայր,
Տնային կենդանիներն²³⁷ անկենդան ընկած են:-
Սակայն սառած գետնին կանգնած էին մարդիկ,
Որ չէին խոնարհվել սառնամանիքից:
Վերականգնվեցին բանջարեղենի ջերմոցները,
Կանաչը նորից դարձավ բլուրներիս:
Խառատահաստոցներ, աքցաններ, ռանդա՝
աղմկում են

Ի ուրախություն մարդու,
Խոշոր եղջերավորները, ձին ու խոզերը ուրախ
աղմկում էին:

Գարունը չի ուշացել սառցակեղեւի մեջ,
Եվ հողն աչքերին լիություն է տալիս:

²³⁵ Չնաքքից հետո 340 միլիոն մու անտառածածկ տարածքների ծառերն ու բամբուկները կորցրին սաղարթը՝ իրենց վրա նստած սառույցի պատճառով:

²³⁶ Աղետից տուժած տարածքներում վնասված հասուն բերքի ու բանջարեղենի մակերեսը կազմում էր համախառն արդյունքի համապատասխանաբար 48 և 34 %-ը:

²³⁷ Ըստ Գյուղատնտեսության նախարարության վիճակագրության՝ մինչև փետրվարի 14 սաստիկ ցրտի ու ձնաքքի ընթացքում անհետացավ շուրջ 74.552 միլիոն ընտանի կենդանի, այդ թվում 4.447 միլիոն խոզ, 435.000 խոշոր եղջերավոր անասուն, 1.683 միլիոն ոչխար և 67.385 ընտանի թռչուն:

IX. Անուրջ Լուսնի տակ

Կատաղի ձյունը հալվեց,
 Սառցակեղեւը հոսուն ջուր դարձավ,
 Յոդը լուռ էր,
 Միայն միջօրեի կոչնակն էր խփում:
 Կախելով գինվորական հագուստս՝ գրիչ վերցրի,
 Միախառնված զգացմունքների համս էի զգում
 Զարունակ:
 Անորսալի մտքի թելերից մարդ զգում է՝
 ինչ է պատրաստվում²³⁸,
 Յամերաշխ գործող երկիրը²³⁹ աշխարհը կբերի
 Երկխոսության:
 Փոքրիկ շեղումս աղետի է վերածվում
 անտարբերությանից,
 Զափազանց ուշ չէ՝ նավթահոր փորել՝ ծարավը
 հագեցնելու համար:
 Այս աշխարհում հավիտենական են
 փոփոխությունները,
 Ըհշտ չէ՞՝ նորոգել տները մինչ անձրեւ գալը:

²³⁸ Հիմնվելով Չինաստանի օդերևութաբանական վարչության կան-
 խատեսումների վրա՝ 2007 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև 2008
 թվականի հունվարի 21-ը Պետական խորհուրդն արձակեց միանգա-
 մից երեք նախազգուշացում սաստիկ ցրտի ու ձնաքբի դեմ՝ պահանջե-
 լով, որ շահագրգռված վարչությունները պատշաճ միջոցներ ձեռնար-
 կեն վերահաս բնական աղետների դեմ պայքարելու ուղղությամբ:

²³⁹ Հիմնարկը, որի շուրջ ամբողջ ազգը կարող է հավաքվել արտա-
 կարգ իրավիճակներում, հիանալի աշխատեց 2008 թվականի հակաա-
 դետային և փրկարար գործողությունների ընթացքում:

X. Ներբող Չինական I-ին

Չինգ հազարամյակ անցավ
Բազում դժբախտությունների մեջ,
Բայց մենք շարունակում ենք տքնել,
Ձախողումները ետ չեն պահում մեզ:
Մինչ ծով հասնելը Դեղին գետը ինն անգամ
ոլորվում է,
Իր բազում գագաթներով Թայ սարը
նեցուկ է երկնքին:
Միաձայն ազգը մռնչում է, երբ վտանգն է ցցվում
Նրա առաջ,
Ոչնչից, անգամ դժվարություններից պետք է
վախենալ:
Նահատակները նվիրեցին իրենց կյանքն ազգի
ամբողջականությանը,
Միայն դեւերին ընտելացնելուց հետո կարող ենք
հաղթանակ տոնել:
Ինքնավստահության շնորհիվ է երկինքն
ուժեղանում²⁴⁰,
Մարդկայնությունն ու ազնվությունը շրջում են Նրա
ակոսող նավերում:

²⁴⁰ *Փոփոխությունների գիրք*. «Երբ Երկինքն աշխույժ շարժման մեջ է, ջենթլմենը պիտի պայքարի հանուն ուժի: Երբ երկիրն անբարենպաստ վիճակում է, ջենթլմենը պիտի նվիրվի աշխարհին արժանիքով»:

ԵՐԲ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ՀԱՐՎԱԾԵՑ

Հունիս 2008

I. Ձյունահյուս²⁴¹

Երկիրը դողում է,
Քամին՝ ոռնում,
Գետահուները լայնարձակվում են,
Սարերը՝ տեղաշարժվում:
Երկնքից գլխիվայր թափվեցին ցեխ ու քարեր,
Փոշու ամպի մեջ անհետացան շենքերը²⁴²:
Մի ակնթարթում գյուղերը համրացան²⁴³,
Ճանապարհները քանդվեցին, փլվեցին
կամուրջները²⁴⁴:

²⁴¹ 2008 թվականի մայիսի 12-ին ավերիչ երկրաշարժը ցնցեց Ուենչուան շրջանը, Սիչուանի նահանգը՝ վնասելով ընդհանուր առմամբ 45.6 միլիոն բնակչություն և 440,000 քառակուսի կիլոմետր տարածք, այդ թվում և Սիչուանը, Գանսուն, Շանսին, Չոնգքինգը և 12 այլ նահանգ ու համայնք: Ռիստերի սանդղակով 8.0 բալանոց երկրաշարժն ամենավերիչն ու լայնամասշտաբն էր իր տեսակի մեջ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում:

²⁴² Մինչև 2008 թվականի հունիսի 24-ը ընդհանուր առմամբ 7.789 միլիոն տուն մնացել էր հողի տակ, իսկ 24.592 միլիոն տուն տարբեր աստիճանի վնաս էր կրել:

²⁴³ Հեռահաղորդակցության ծառայություններն ընդհատվեցին 109 քաղաքատիպ ավաններում ու քաղաքներում, երբ երկրաշարժի ընթացքում կաթվածահար եղավ 35,091 կմ երկարությամբ օպտիկական մանրաթելային մալուխ և 30,109 կայան:

²⁴⁴ Երկրաշարժը կաթվածահար արեց երթևեկությունը 15 ճեպուղիների և բեռնատար մայրուղիների վրա, վնասեց երեք երկաթուղի, 53,295 կմ երկարությամբ մայրուղիներ և քանդեց 6140 կամուրջ:

ՄԱ ՔԱՅ

Վիթխարի վթարի մեջ հարցնում եմ՝ որտե՞ղ է
տունը:
Միայն նվնվոց է լսվում ավերակներից:
Որտե՞ղ եք, մարդի՞կ ջահել ու ահել:
Մեկ միլիարդ երեք միլիոն սիրտ արնահոսում է:

II. Մարտակոչ

Երկինքը ցնցվում է,
Շտապ հրամաններ ձյունների մեջ²⁴⁵,
Արծիվները ճոճվելով սլանում են օդում,
Նետերը զրնգոցով սլանում են:
Կայծակի պես սրընթաց ու քամու պես արագ՝
Փրկարարները ջանում են վաղ հասնել
ավերակներին:
Միմյանց փոխարինող ուժերը տեղակայվեցին²⁴⁶,
Չնայած հորդ անձրեւին ու հետցնցումներին:
Յազարավոր փրկարարներ շտապեցին Սիչուան,
Յեռվից, մոտիկից ու երկրի ծագերից:
Երկիրը ճգնաժամի մեջ է, մարտի կոչ է հնչել,
Յավաքվում են մարդիկ Կարմիր դրոշի տակ
հինգաստղանի:

²⁴⁵ Երկրաշարժի ցնցումից անմիջապես հետո նախագահ Հու Յզին-թաոն հրաման արձակեց «Ժամանակ չկորցնել փրկության հասնելու վիրավորներին եւ պահպանելու մարդկանց կյանքն ու անվտանգությունը աղետից տուժած տարածքներում»: Այդ գիշեր նա նախագահում էր քաղբյուրյոյի անդամների հավաքում և բազմակողմանի պայմանավորվածություններ հաստատեց՝ երկրաշարժի դեմ պայքարելու և մարդասիրական գործունեության համար: Երկրաշարժից չորս ժամ անց վարչապետ Ուեն Յզիաբաոն ինքնաթիռով ժամանեց Սիչուան՝ երկրաշարժի էպիկենտրոն: Ինքնաթիռի մեջ նա արտահերթ ժողով էր անցկացրել՝ պետական հակաերկրաշարժային խորհուրդ, օգնության շտաբ և ութ փրկարար և օգնության թիմ կազմավորելու և պատշաճ տեղաբաշխումներ կատարելու նպատակով:

²⁴⁶ Երկրաշարժից չորս ժամ անց վարչապետ Ուեն Յզիաբաոն ժամանեց Սիչուանի՝ աղետի ենթարկված տարածք՝ փրկարար աշխատանքները ղեկավարելու նպատակով: Այդ օրը՝ 23: 40-ին, նա հայտնվեց ժամանակավոր կացարանում և գումարեց Հակաերկրաշարժային պետական խորհրդի ու օգնության շտաբի համաժողով՝ արտակարգ աշխատանքների ժամանակացույց կազմելու համար:

III. Կենաց ու մահու պայքար²⁴⁷

Գոտեպնդվե՛ք,

Մի՛ հանձնվեք:

Կանգնե՛ք,

Յայրենիքը ձեր օգնության կարիքն ունի:-

Չինվորներն արգելափակեցին դժոխքի դարպասը,

Կռվելով ժամանակի դեմ՝ դիմակայեցին մահվան

կանչերին:

Մանրագնիս փնտրելով գերանները, դիմադրելով

հետցնցումներին,

Նրանք կյանքի նշաններ էին փնտրում՝ փրկելու

ծուղակն ընկած մարդկանց:

Ծակում ու փորում էին նրանք անդադար²⁴⁸,

Երբ լույսի շող էր փայլատակում փլված

պատերի մեջ:

Դժոխքից ութսուն հազարը վերադարձավ²⁴⁹,

Նոր հրաշքներ են կատարվում մարդկային

աշխարհում:

²⁴⁷ Կառավարությունը շարունակ ընդգծում էր, որ փրկարարների կարևորագույն առաքելությունը տուժածներին անվտանգ վայրեր տեղափոխելն է, բայց նրանց գերագույն առաջադրանքը՝ մարդկանց կյանքը փրկելն է:

²⁴⁸ Փրկարարների կարևորագույն առաքելությունն է՝ անել հնարավոր ամեն բան՝ փրկելու համար նրանց կյանքը, ովքեր փակված են մնացել ավերակների տակ:

²⁴⁹ Ըստ վիճակագրության՝ 2008 թվականի հուլիսի 11-ին, մինչև ժամը 12:00 ընդհանուր առմամբ 84,017 մարդ էր փրկվել փլված շենքերի ավերակներից:

IV. Երկաթե բանակ

Շունչը պահած՝ քրքրելով քարափները,
Ուռցնելով անդադրում ալիքները,
Բեկումնային էին դժբախտությունները,
Արագ էին հնչում ոտնաձայները:
Հարկադիր երթն էր դա հարյուր հազարի²⁵⁰,
Նայում էին ճեղքվող ժայռերին ու նետվող
բեկորներին:
Հաղթահարելով մահը՝ նրանք իջան մեկուսի
տարածքներ²⁵¹,
Փորելով ավերակները, որտեղից լացի ձայն էր
լսվում:
Երբ ողջերին տեղափոխում էին ուսերի վրա²⁵²,
Ափի մոտ արցունքները ողողում էին սիրելիների
հագուստը:
Հեղեղն ու ձնախառն անձրեւը սանձեցին նրանք
իրենց ձեռքերով,
Երկինք կարկատողները չէին սարսում դժվար
ճամփաներից:

²⁵⁰ Ընդհանուր առմամբ 133,000 զինվոր ու զինված ոստիկան և 45,000 աշխարհագորային միացան փրկարարների գործողություններին, իսկ 7025 փրկարար բերեցին ամենատարբեր օդուժով:

²⁵¹ Երկրաշարժի ընթացքում բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր լիովին մեկուսացան՝ այդպիսով կորցնելով իրենց շփումն արտաքին աշխարհի հետ: Գործելով նախագահ Հուի հրահանգին համաձայն, ըստ որի՝ ոչ մի գյուղ կամ տուն չպետք է մոռացության մատնվի, փրկարար ծառայության աշխատողները դիմակայեցին հետցնցումներին ու սարսանջներից գլորվող քարերին՝ աղետից տուժած գոտիներում որոնելով ցանկացած «մոռացված վայր»: Մայիսի 14-ի՝ կեսօրին նրանք հասան բոլոր շրջաններ, մայիսի 15-ին՝ ժամը 24:00, բոլոր քաղաքներ, իսկ մինչև մայիսի 19-ի ժամը 14:00՝ բոլոր գյուղեր:

²⁵² 1.4 միլիոն ամօթևան մնացած մարդ տեղափոխվել էր անվտանգ տարածք մինչև հունիսի 12-ը:

V. Ազգային դրոշն իջեցված է²⁵³

Իջեցված դրոշները փողփողում են²⁵⁴,
Երկրները սգում են,
Սրտերը՝ ցավում,
Բարձրում քամիները հեծեծում են:
Ութսուն հազար մարդ անհետացավ մի
ակնթարթում²⁵⁵,
Ինչու՞ երկինքը մեզ հասցրեց անդունդի եզրին:

²⁵³ Պետական խորհուրդը մայիսի 19-21-ը հայտարարեց եռօրյա սուգ՝ զանգվածային երկրաշարժի զոհերի հիշատակին: Այս ժամանակահատվածում դրոշն իջեցված էր երկրի բոլոր անկյուններում և արտասահմանյան դիվանագիտական առաքելություններում, իսկ բոլոր հանրային զվարճալի միջոցառումները չեղյալ հայտարարվեցին: Մայիսի 19-ի ժամը 14:28-ից սկսած՝ ժողովուրդը հարգեց լռության երեք րոպե, իսկ ավտոմեքենաների, գնացքների ու նավերի շշակները համերաշխ սուլեցին:

²⁵⁴ Ուենչուանի երկրաշարժի զոհերի հիշատակին հայտարարված սուգը Չինաստանի պատմության մեջ առաջին ազգային հիշատակի արարողությունն էր՝ հիշելու այն քաղաքացիներին, ովքեր զոհվեցին ծանր բնական աղետից: Հանրային կարծիքը երկրի ներսում ու նրա սահմաններից դուրս միաձայն պնդում էր, որ ազգային սգի օրերին Չինաստանի կառավարությունը նպատակ ուներ հարզանքի տուրք մատուցել զոհերի հիշատակին և իր մտահոգությունն արտահայտել ողջ մնացածների հանդեպ: Սա մարմնավորում է այն գաղափարը, որ մարդը հիմնարար նշանակություն ունի բոլոր ոլորտներում:

²⁵⁵ Մինչեւ 2008 թվականի հունիսի 23-ը հաստատվեց, որ Ուենչուանի երկրաշարժի հետևանքով կա 69,181 զոհ, 374, 171 վիրավոր, 18, 189՝ անհայտ կորած: Քանի որ անհայտ կորածների մեծ մասը համարվում էր զոհված, զոհերի ընդհանուր թիվն անցնում էր 80,000-ը:

Արծիվը կոտրեց թելերը, որ ծածկի ձագերին²⁵⁶,
Ապահով էին փոքրիկները, մինչդեռ հավերժության
մեջ մայրն էր նիրհում²⁵⁷:
Ինչպես արձաններ, դուք սրտերում եք փորագրված,
Դեպի Դրախտ ձեր ճանապարհին մխիթարվեցի՛ք:
Ու՞մ համար են փչում փողերը երկար ու հնչեղ:
Կյանքից ու մարդկանցից առավել արժեքավոր ոչինչ
չկա այս աշխարհում:

²⁵⁶ Մինչեւ Միչուան նահանգի՝ Գեյանգի Գոնգֆանգ գազի տուրքինների շարժիչների գործարանի Միջնակարգ դպրոցի ուսուցչական շենքի փլվելը ռեկտոր Թան Քիանքիուն արագ բացում է թևերը, որ թաքցնի չորս ուսանողների: Ուսանողները ողջ մնացին, իսկ 51-ամյա Թանը մահացավ: Երբ փրկարարները գտան նրան, նրա մարմինը մնաց էր արծվի, որ տարածում է թևերը՝ ձագուկներին փրկելու համար:

²⁵⁷ Մայիսի 13-ի կեսօրին, Բեյչուան շրջանի փլատակներում որոնողական աշխատանքներ կատարող փրկարարները գտան երիտասարդ մոր դիակ՝ երեք ամսական փոքրիկի հետ, որը ողջ-առողջ էր նրա թևերի մեջ: Երեխային զննող բժիշկները պատահաբար դիպան բարորի մեջ դրված բջջային հեռախոսի էկրանին և արտասվեցին՝ տեսնելով հետևյալ տեքստը. «Իմ սիրելի, եթե ողջ մնաս աղետից, հիշիր, որ սիրում եմ քեզ»:

VI. Ցամաքեցևելով արգելալճերը²⁵⁸

Ժայռերը գլորվում են,
Գահավեժները՝ ետ կանգնում,
Գետերը՝ կանգնեցնում ընթացքը,
Կիրճերի վրա կախվում են լճերը²⁵⁹:
Երբ գետերը փրփրում են, ահարկու են հեղեղները,
Երբ ափերը փլվում են, հոսում է վազրատես հեղեղը:
Յոսանքն ի վար՝ կյանքը կախված է մազից,
Անեծքը պիտի վերացվի, բնակիչները՝ տարհանվեն:
Մարդկանց տեղափոխում են ապահով վայրեր,

²⁵⁸ Սահմանային լճերն առաջանում են փլուզումների մնացորդների պատճառով, որոնք փակում են հովիտը, գետը կամ գետի հունը: Երբ այդ պատճենը քանդվում է, արդյունքում հեղեղները կարող են լուրջ աղետներ բերել մարդկանց ու ունեցվածքին ավելի ցածր շրջաններում: Մայիսի 12-ին Ուենչուանի երկրաշարժից առաջացած երեսունչորս մմանատիպ լճերը սպառնում էին քանդել իրենց պատճենները:

²⁵⁹ Ամենամեծ սահմանային լիճը Ուենչուանում հայտնաբերվել է Թանգգգիաշանի սարը բարձրանալիս, որտեղ կար 250 միլիոն խորանարդ մետր հեղեղային ջուր, ինչը լուրջ վտանգ էր ներկայացնում հոսանքն ի վար ապրող ավելի քան մեկ միլիոն մարդու համար: Այս հանգամանքն իր վրա հրավիրեց կենտրոնական իշխանությունների ուշադրությունը, որոնք պահանջեցին, որ փրկարար-ինժեներների աշխատանքը կատարվի տեղի բնակիչներին ապահով վայրեր տեղափոխելու ծրագրին համապատասխան, և ամեն ինչ արվի՝ վտանգը հեռացնելու և կյանքի ու ունեցվածքի անվտանգությունն ապահովելու համար:

գյուղերը դատարկ են²⁶⁰,
Պետք է մի վայրկյան շուտ ցամաքեցնել լճերը²⁶¹:
Մարդիկ ձեռքերով նվաճում են դիվային հեղեղը²⁶²
Եվ ստիպում, որ հոսեն Բայով կամ Շուով:

²⁶⁰ Մինչ փրկարարները չարչարվում էին վտանգավոր Թանգգզիան-
շան սահմանային լճի վրա, արտակարգ իրավիճակների գործողու-
թյունն ընթացքի մեջ էր, որի ժամանակ սարալանջի մատույցներում
բնակվող ավելի քան 200,000 մարդ տարհանվեց 33 քաղաքային
ավաններից ու Միանյանգ քաղաքի 169 համայնքներից, իսկ ավելի
քան 5,300 զինվոր ու պահեստային ուղարկվեց՝ 252 ժամանակավոր
կացարաններ կառուցելու նպատակով, որտեղ պիտի տեղավորեին
տարհանվածներին: Երբ տարհանման գործողությունն ավարտված
էր, թիմերին ուղարկեցին՝ տարածքներում փնտրելու նրանց, ովքեր
պատահաբար դուրս էին մնացել ուշադրությունից:

²⁶¹ Մայիսի 22-24-ը անընդմեջ տեղացող անձրևների պատճառով
Թանգգզիանշան սահմանային լճի մակարդակը բարձրացավ օրական
երկու մետրով, և կանխատեսվեցին ավելի մեծ թվով հեղեղներ: Ջին-
ված ոստիկանական զորքերն աշխատեցին վեց օր անընդմեջ ու փորե-
ցին 475 մետր երկարությամբ, 50 մետր լայնությամբ և 12 մետր խորու-
թյամբ ջրանցք՝ հեղեղների ավելցուկային ջրերի հունը շեղելու համար:

²⁶² Հունիսի 10-ին հեղեղաջրերը թափվեցին սահմանային գետից
այնպիսի արագությամբ, որ գերազանցում էր վայրկյանում 6,420 խո-
րանարդ մետրը, սպա լիճն աստիճանաբար ցամաքեց: Այս գործողու-
թյան ընթացքում գոհեր կամ վիրավորներ չեղան:

VII. Սիրո ներդրումներ

Սիչուանի ներսում եւ նրանից դուրս,
Երկրորդ մեկ

Չողը քրքրվել է,

Բայց սրտերը կապված են իրար:

Օգնությունն առատորեն գալիս է ամեն

ուղղությունից,

Յուրաքանչյուր չինացի Դեդին կայսեր հետևորդ է:

Մայրական կաթով են որբուկները կերակրվում²⁶³,

Նայելով մահվանը՝ զինվորները հայտնել են

իրենց կամքը²⁶⁴:

Երկար են հերթերը արյան նվիրատվության

²⁶³ Յզիան Միաոյուանը՝ կին ոստիկան Սիչուանի Յզիանգյոու քաղաքից, իր վեց ամսական որդուն թողնում է սկեսրոջ խնամքին և որոշում կրծքով կերակրել երեխաների, որոնք երկրաշարժի ժամանակ կորցրել էին իրենց մայրիկներին: Այս արարքի համար նրան կոչեցին «Ոստիկան Մայրիկ»:

²⁶⁴ Մայիսի 13-ին բոլոր 4500 պարաշյուտիստները, Ջինուծի փրկարար ուժերի առաջին գործողության շրջանակներում, ժամանեցին Սիչուան և ճանապարհ ընկան դեպի երկրաշարժից տուժած տարածքներ: Դիմակայելով սարսափելի եղանակին՝ հաջորդ օրը նրանցից 15-ը ցատկեց ինքնաթիռներից մի քանի հազար մետր բարձրությունից և վայրէջք կատարեց սարալանջին, որտեղ սկսեց հետախուզական և փրկարար առաքելությունը:

հիվանդանոցների առաջ²⁶⁵,
Նվիրատվություն անելու համար մարդիկ
խոնավում են բլրի մոտ²⁶⁶:
Երկինքն անշուկ արտասվում է կարեկցանքից,
Երկիրն արտասվում է անձնուրաց սիրուց:

²⁶⁵ Ուենչուանի երկրաշարժից հետո արյան դոնորությամբ զբաղվող հիվանդանոցներն ամբողջ երկրում լեփ-լեցուն էին կամավոր դոնորներով: Բազմաթիվ վայրերում նրանք երկար հերթ էին կանգնում մինչև ուշ գիշեր, և արյան բանկերում այլևս տեղ չկար: Սա Հանրային առողջության նախարարությանը հուշեց՝ հնարավոր արյան դոնորներին կոչ անել գրանցվելու և օրեր նշանակելու: Արտասահմանյան լրատվական գործակալությունը հետևյալ կերպ մեկնաբանեց դա. «Մի երկիր, որտեղ վարչապետը դեպքի վայրում է հայտնվում աղետի վրա հասնելուց երկու ժամ անց, որտեղ հարյուր հազարավոր փրկարարներ անմիջապես ժամանում են, որտեղ ընկերություններն ու անհատները նվիրաբերում են տասնյակ միլիարդավոր դոլարներ, որտեղ կամավոր արյան դոնորներն ու փրկարարները, որոնք առաջարկում են իրենց ծառայությունները, տրանսպորտային խցանման պատճառ են դառնում, այսպիսի երկրին երբեք չես հաղթի»:

²⁶⁶ Մուն Ջին (313-238 մթա.) ասել է. «Կուտակելու դեպքում հողը դառնում է սար, իսկ ջուրը՝ խոր լճակ»: 2008 թվականի հունիսի 24-ի ժամը 12:00-ին երկրի ներսից ու արտասահմանից ուղարկված նվիրատվությունները կազմում էին 53.032 միլիարդ յուան կանխիկ, իսկ 51.727 միլիարդ յուանի արժողությամբ նմանատիպ նվիրատվություններ էլ արդեն հասցվել էին Միչուանի երկրաշարժից տուժածներին:

VIII. Նոր մեկնարկ

Արյունը մաքրելով,
Վերքերը լվանալով,
Արցունքներն աչքերին՝
Ուղեւորությունն սկսվում է:
Կրակից վերածնված՝ ավելի բարձր են գլուխները,
Երկինքն ընկնում է, եւ երկիրը՝ սուզվում, բայց
մեջքը չի ծռվում:
Նոր տներ են հայտնվում կիտված գետաքարերից,
Որտեղ պատերը փլվել են, սաճիլներն արմատ են
առնում:
Թռիչքները ճանապարհներից վերադառնում են
երկինք,
Նոր բնապատկեր են հյուսում վստահ ձեռքերը:
Ինքնաշեն վրանում մի լամպ ունեին աշակերտները,
Փյունիկը խաղաղվում է. մեծ փառքերի է
դատապարտված նա:

IX. Ստորումներ կյանքի մասին

Բռնված մահվան ճիրաններում՝
Ինչպե՞ս ես պահում քեզ:
Դժբախտությունից հետո
Կարո՞ղ ես վեհությունդ ետ բերել:
Առավել մեծ է վերադարձված կյանքի արժեքը,
Ողջ մնացածները պիտի իմանան՝ որքան ես
պարտական:
Յեղիևակությունն ու ունեցվածքը լավ է,
Բայց ոչինչ չի հաղթի սիրո արժեքին ու
ազգակցական կապին:
Ճշմարտություն է՝ միջակությունից մեծություն է
ծնվում,
Ոչինչ ավելի լավ չի ստուգում ոսկին, քան
կրակը:
Գնալիս քեզ հետ չես տանի ոչինչ, ոչ մի
ցանկություն,
Անձնուրաց լինել՝ ահա մարդու վեհագույն
հատկությունը:

X. Ներքոջ Չինական II-ին

Երկինք ու երկիր ապշեցին,
Ուրվականները հուզվեցին ու կամաց արտասվեցին,
Ամբողջ աշխարհից
Յիացմունքն է հորդում:²⁶⁷
Ինչու՞ է երկիրը հառնում այսքան շատ
դժբախտություններից:
Վտանգի առաջ բնակչությունը միշտ էլ մեկի պես
համախմբված է:
Վերականգնում են նրանք ծոված ողնաշարը
երկրաշարժից հետո,
Մեկը մյուսի ետեւից պատրաստ են անցնել
հրով ու ջրով:
Վճռականությամբ ու մարդասիրությամբ, որ
ազգի ոգին է,
Չինաստանը անցնում է բաց
քաղաքականությանը²⁶⁸:

²⁶⁷ Այն, ինչ պատահեց երկրաշարժի հետևանքների դեմ պայքարի, մարդկային կյանքերը փրկելու ու տուժածների վիշտը մեղմելու ընթացքում, մեծ արձագանքներ գտավ համաշխարհային հանրությունում: Չինական կառավարության արդյունավետ, կանոնավոր և հեռատես դեկավարումը, բոլոր չինացիների միավորումն ու վճռականությունը՝ անկախ ազգային պատկանելությունից, և այն արագությունն ու արդյունավետությունը, որով կատարվում էին փրկարարական և օգնության գործողությունները, մարմնավորում էր չինական արժեքները, ըստ որոնց՝ մարդը կենտրոնական դեր ունի ցանկացած գործունեության մեջ:

²⁶⁸ Համաշխարհային կարծիքի համաձայն՝ հակաերկրաշարժային արշավը մարմնավորում է մարդուն ժայռ համարելու չինական հասկացությունը, և արշավի պատշաճ կազմակերպումը, տեղեկատվության քափանցիկությունն ու օտարերկրյա փրկարար ջոկատների հետ աննախադեպ համագործակցությունը համընդհանուր տպավորություն ստեղծեցին, որ Չինաստանը մարդասիրական, ինքնաբավ ու ավելի բաց երկիր է արտաքին աշխարհի համար:

Ե՞րբ է ժամանում անսանձելի ոգին:
Արեւի ու Լուսնի պես պայծառ է
«ՍԱՐԴԸ» մեծատառով:

**«Բոլոր ջրերը հայելային-հարթ մակերես ունեն,
Բոլոր սարերը նման են պատրանքի»:**

4. ՏԵՍԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐ



ՅԵՏԱՉՈՏԵԼՈՎ ԽՈԼՈՐԶԻ ՏԱՂԱՎԱՐԸ²⁶⁹

Փետրվար 1999

Բանաստեղծները պայքարում են, որ խմեն վարար
անձրեւի տակ²⁷⁰,
Կիսաարբած իմաստունի տողերը առաջինն են
գրողական աշխարհում²⁷¹:
Նրա հարվածներն ասես սահող ամպեր լինեն,
սրեր, որ նետվում են,
Գետակներ, որ հորդում են, կամ կայտառ
վիշապներ, որ պտտվում են:

²⁶⁹ Լանչժու սարի լանջին՝ Չժեցզիան նահանգի Շաոսինգ քաղաքից հարավ-արևմուտք գտնվող Խոլորձի տաղավարի անունն արդեն իսկ հուշում է, որ սա այն վայրն է, որը, ինչպես գրել է Վանգ Սիչժին (303-361 կամ 321-379) կիսաարբած վիճակում, «Խոլորձի տաղավար» բանաստեղծությունների լիակատար ժողովածուի նախաբանում, առ այսօր համարվում է «Թիվ մեկ արագագիրը երկնքի տակ»:

²⁷⁰ 353 թվականին կամ Արևելյան Ցզին դինաստիայի Յոնգհե թագավորության իններորդ տարում (317-420), Վանգ Սիչժին Խոլորձի տաղավար բերեց 42 գրականագետ՝ խմիչքի մրցույթին մասնակցելու, Ջրի փառատունը նշելու: Շրջանաձև ծովախորշի ավերինն նստած, որտեղ զինու գավաթները մեկը մյուսի ետևից լցվում էին, տղամարդիկ սպասում էին իրենց հերթին: Երբ գավաթը մոտենում էր, ամենից մոտ գտնվողը պարտավոր էր խմել զինին ու ամմիջապես բանաստեղծություն հորինել: Այսպիսով, 26 մարդու կողմից հորինված 37 բանաստեղծությունները հայտնվեցին «Խոլորձի տաղավարի» բանաստեղծությունների լիակատար ժողովածուում:

²⁷¹ Ըստ «Խոլորձի տաղավարի արձանագրության», որի հեղինակը Սանգ Շիչանգն է Սոնգ դինաստիայից (960-1279), երբ Վանգ Սիչժին գրել է «Նախաբանը կիսաարբած վիճակում» բանաստեղծության մեջ, «Թվաց, թե Աստված էր միջամտել: Երբ Վանգը սրբափվեց զինուց, կրկնօրինակեց վայելչագրության նմուշը համարյա հարյուր անգամ, բայց ոչ մեկը նման չէր բնօրինակին»:

Բլուրները կանգնում են, ծառերը՝ պառկում կամ
հակառակը, զույգեր կազմելով²⁷²,
Տողերը գնում ու գալիս են²⁷³, ինչպես լճակի սագը²⁷⁴
պտտում է վիզը:
Յոնգիեի գրի աստվածային ռիթմն է²⁷⁵
Նույնիսկ անփորձ ձեռքը կարող է հանգիստ
պտտել վրձինը:

²⁷² Ուղիղ ու թեք գծերի համապատասխան զուգավորմամբ: Գրի պատկերավոր բանաձևը հետևյալն է. «Եթե ծառը կանգնում է, բլուրը պիտի պառկի. Եթե բլուրը կանգնում է, ծառը պիտի պառկի»:

²⁷³ Վանգ Սիչժիի արագագրի ոճի գեղեցկությունը մասամբ պայմանավորված է նրանով, որ բավական շատ վրձնահարվածներ են արվել մեկ շնչում՝ որպեսզի նրանք միաժամանակ անջատված ու միացած լինեն:

²⁷⁴ Ըստ լեգենդի՝ 𠄎 (սագ) նշանը, որ փորագրված է քարետախտակի վրա՝ տաղավարի ներսում, Վանգը արել է մի վրձնահարվածով: Քարետախտակի մյուս նշանը՝ 𠄎 (լճակ), պատկանում է նրա յոթերորդ որդու՝ Վանգ Սիանչիի (344-386) գրին: Հազվադեպ է պատահում, որ հոր ու որդու գրությունները միասին հայտնվեն քարե մակագրության մեջ:

²⁷⁵ «Խողորմի տաղավարի բանաստեղծությունների լիակատար ժողովածուի նախաբանըն սկսվում է հետևյալ բառերով. «Յոնգիե թագավորության իններորդ տարում...» Այդ պատճառով էլ արագագրի գլոխգործոցը նաև կոչվում է «Յոնգիե ձեռագիր»:

ԴՈՒ ՖՈՒԻ ԾՂՈՏԵ ՏՆԱԿԸ²⁷⁶

1995

Բացելով ծղոտե դուռը՝ փնտրում եմ ծուռտիկ
ճանապարհը²⁷⁷,
Գլուխս թեքած՝ լսում եմ՝ նա երգում է ծղոտե
խրճիթում²⁷⁸:
Բազմաթիվ են թշվառ գիտնականներն մարդկանց
այս աշխարհում,
Մեր կարեկից բանաստեղծը հավերժ ապրում է իմ
տառապյալ սրտում:

²⁷⁶ Թանգ դինաստիայի լեգենդար բանաստեղծ Դու Ֆուի (712-770) ծղոտից կացարանն է Հուանհուա վտակի մոտակայքում՝ Սիչուան նահանգի Չենգդու արևմտյան արվարձանում: Աքսորում անցկացրած երեք տարիների և ինը ամիսների ընթացքում նա գրեց 240 բանաստեղծություն:

²⁷⁷ Այս արահետը տանում է ուղիղ դեպի ծղոտե տնակ: Հատված Դու Ֆուի «Հյուր է գալիս» բանաստեղծությունից՝ «Ծաղիկների արահետը երբեք չի մաքրվել հյուրի համար, Իմ ծղոտե դարպասը բացվում է քեզ համար, բացվում առաջին անգամ»:

²⁷⁸ Դու Ֆու, «Իմ ծղոտ» տանիքը քանդվում է աշնանային քամուց»:
«Օ՛, ունենալ հարյուր հազար սենյակով մեծ առանձնատուն, /Մեծ տանիք՝ այս աշխարհի ամենաաղքատ ասպետի համար, մի վայր, որ կառաջացնի նրա ժպիտը: /Շենք, որ չի ցնցվի քամուց կամ անձրևից, սարի պես կարծր: /Օ, իմ աչքերով ե՞րբ կտեսնեմ մի այդպիսի բարձր տանիք: /Այդ դեպքում կապրեմ իմ ավերակ փոքրիկ խրճիթն ու ցրտահարված կղիմավորեմ մահն իմ»:

ՄԱՐԿԻՉ ՎՈՒԻ ՏԱՃԱՐԸ, ՆԱՆՅԱՆԳ²⁷⁹

1997

Ինչու՞ են Սիանհանգն ու Նանյանգը մրցում
վստահության համար²⁸⁰:
Չժուգե Լիանգն ու Կոնգմինգն իրականում նույն
մարդն են:
Խոնարհվող վիշապը թափանցիկ լճակն է
ուրվագծում,
Լուռ հովտի վրա նրա փետուրի շոշոցն է աղոտ
լսվում²⁸¹:

²⁷⁹ Մարկիզը ոչ այլ ոք է, քան Չժուգե Լիանգը (181-234), «Քոնգ-մինգ» կեղծանունով, Երեք թագավորությունների ժամանակաշրջանում եղել է (220-280) Շուի վարչապետ (221-236): Համարյա հարյուր տաճար է կառուցվել երկրում՝ ի պատիվ այս լեգենդար ռազմական ու պետական գործչի, բայց ամենահայտնիները Սիչուան նահանգի Չենգոու, Հուբեյ նահանգի Սիանգյանգ և Հենան նահանգի Նանյան քաղաքներում են: Այս բանաստեղծությունը գրել են 1997 թվականի օգոստոսին՝ Նանյանից վերադառնալուց հետո:

²⁸⁰ Երբ հարցնում են, թե Քոնգմինգը ո՞ր քաղաքում է հեռացել իր պաշտոնից ու դարձել ճգնավոր՝ Սիանգյանգ, թե՞ Նանյանգ, Սիանգյանգում ծնված և Քինգ դինաստիայի Նանյանգ քաղաքի քաղաքապետ Գու Ցզիագենգը (?-?), չցանկանալով նեղացնել քաղաքներից և ոչ մեկի բնակիչներին, պատասխանում է. «Նա հավատարիմ էր արքունիքին՝ անկախ նրանից՝ ծառայում էր հանգուցյալ կայսերը, թե նրա որդուն: Նա արդեն իսկ ազգային հերոս էր: Ինչու՞ պիտի անհանգստանանք այն հարցով, թե արդյոք բնակություն է հաստատել Սիանգյանգում, թե՞ Նանյանգում»:

²⁸¹ «Թափանցիկ լճակ» և «հանդարտ հովիտ» արտահայտությունները Չժուգե Լիանգի մտքի և հանգստության փիլիսոփայության հիմնական փոխաբերություններն են: Հատված նրա «Խրատ որդուս» բանաստեղծությունից. «Դու չես հստակեցնի ձգտումդ՝ առանց պարզ կյանքի/ Հեռատես չես լինի՝ առանց խաղաղ մտքի»:

Լոնգչժոնգի երկխոսությունը²⁸² նահանջում է
 գերագույն խորամանկության առաջ,
 Նրա երկու հուշարձանները²⁸³ հավանության են
 արժանանում ամբողջ երկրում:
 Չժուգեն հեռացնում է Չիբիին, որ դաշնակցում է
 գեներալ Չժուի հետ,
 Սիմա Յիին հետ մղելու համար նրա «դատարկ
 քաղաքը» լոկ հնարանք է:
 Կանոնների կարգով՝ նա արցունքներ է հեղում
 կորած Յիթինգի համար²⁸⁴,

²⁸¹ «Թափանցիկ լճակ» և «հանդարտ հովիտ» արտահայտությունները Չժուգե Լիանգի մտքի և հանգստության փիլիսոփայության հիմնական փոխաբերություններն են: Հատված նրա «Խրատ որդուս» բանաստեղծությունից. «Դու չես հստակեցնի ձգտումդ՝ առանց պարզ կյանքի/ Հեռատես չես լինի՝ առանց խաղաղ մտքի»:

²⁸² Բանակի գլխավոր հրամանատար Լիու Բեյը (161-223), որը 221 թվականին հիմնեց Շու թագավորությունը, երեք անգամ այցելեց Չժուգե Լիանգի՝ Սիանգյանգ նահանգի Լոնգչժոնգ քաղաքում գտնվող ծղոտե տնակ, որտեղ նրանք երկուսով վարեցին հանրաճանաչ «Լոնգչժոնգի երկխոսությունը» և մշակեցին գերիշխանության ծրագիր, որը, սակայն, ավարտվեց Ուեյ (220-265), Շու (221-263) և Վու (222-280) թագավորությունների՝ վեց տասնամյակ տևած հակամարտությամբ:

²⁸³ 227 թվականին Չժուգե Լիանգը ներկայացրեց «Հյուսիսային արշավի հուշագիր I» և «Հյուսիսային արշավի հուշագիր II»: Սոնգ դինաստիայի գեներալ Յուե Ֆեյի արագագրով գրված երկու հուշագրերի կրկնօրինակը ցուցադրված է Նանյանգում՝ Մարկիզ Վուի տաճարում:

²⁸⁴ Յզիթինգը Շուի թագավորության կարևոր ռազմական ուղեկալներից էր: Երբ Մա Սուն (190-228), Չժուգե Լիանգի մերձավորներից մեկը, մահացու մարտավարական սխալ թույլ տվեց ու կորցրեց ուղեկալը, ինչն էլ հանգեցրեց Շուի առաջին հյուսիսային արշավի պարտությանը, վարչապետը, արցունքն աչքերին, մահապատժի ենթարկեց նրան: Հետո նա կայսերը հանձնեց հուշագիր, որում մեղադրում էր իրեն պարտության համար և խնդրում հեռացնել վարչապետի պաշտոնից:

Եվ ազատում է թշնամուն յոթ անգամ՝ նրա
հավատարմությանն արժանանալու համար²⁸⁵:
Նա աշխատանքի չի վերցնում, ում չի վստահում,
վստահում է նրանց, ում վերցնում է:
Ինչ անում է, անում է զգուշությամբ:
Մարդկանց հուսախաբ չանելու համար՝ փոխում է
օրակարգը,
Հանուն բերքի՝ սանձահարում գետն ու
վերականգնում հողը:
Առաքինի վարչապետն իր ունեցածը նվիրում է
թագավորությանը,
Իր հավատարմության համար սերունդները հավետ
կհիշեն նրան:

²⁸⁵ 225 թվականին Չուգե Լիանգը սկսեց հարավային արշավ՝ Յու-
նանում խռովությունը ճնշելու նպատակով: Հետևելով ռազմավարու-
թյանը, որը նպատակ ուներ շահել ապստամբների վստահությունը՝
գրավելով նրանց ամրոցը, նա յոթ անգամ բռնեց ու ազատ արձակեց
ապստամբների հրամանատար Մենգ Հուոյին, որն ի վերջո հավա-
տարմության երդում տվեց Շուի թագավորությանը:

ՅՈՒ ԱՐՔԱՅԻ ԴԻՇԱՏԱԿԻՆ՝ ԳՈՒՅՈՒՄԱՆՈՒՄ²⁸⁶

1993

Ձերդ մեծության ձեռքով՝ Գուայն ու Վոն²⁸⁷
հանդիպեցին այստեղ,
Որտեղ Ցզինգ ու Թու սարերը²⁸⁸ բարձրանում են,
տեղավորվեց Գուայն այնտեղ:
Երեք անգամ տան կողքով անցնելով՝ դու բաց չես
թողնում թամբդ:
Վճռել ես հանդիպել ընտանիքիդ, միայն երբ
հեղեղ-վիշապը սանձահարվի²⁸⁹:

²⁸⁶ Յու արքան ընդունեց Շունի կարգադրությունն ընդամենը չորս օր այն բանից հետո, երբ նա ամուսնացավ Նյուցզիստ Թայսանգի հետ, ներկայիս Հուայյուան շրջանում, Անհույ գավառում: Վճռելով սանձել վարարող գետերը՝ հասարակ ժողովրդին օգնելու համար, նա թողեց իր հարսնացուին ու անհապաղ ճանապարհ ընկավ դեպքի վայր:

²⁸⁷ Յու արքան և նրա մարդիկ ստիպեցին, որ Հուայ և Վո գետերը միակցվեն Հուայյուանում՝ այդպիսով զգալիորեն նվազեցնելով խոշոր հեղեղների սպառնալիքը:

²⁸⁸ Հին օրերում Հուայ գետի վերին շրջանը արգելափակված էր բարձր սարով: Ըստ լեգենդի՝ Յու արքան այն բաժանեց երկու մասի, Ցզինգ սարը մնաց ձախ կողմում, Թու սարը՝ աջ կողմում: Նա նաև ջրանցք փորեց նրանց մեջտեղում, որը տանում էր Հուայ: Նրա պատվին պալատ կառուցվեց Տու սարի գագաթին, որը հիմա պատմական վայր է և հայտնի է «Յու թագավորական իմաստունի պալատ» անունով:

²⁸⁹ Ըստ Սարերի ու ծովերի գրքի ու Հուայնանգիի՝ Յու արքան այնպան նվիրված էր հեղեղները սանձելու ու գետերը հողահանելու գործին, որ երեք անգամ անցավ իր տան կողքով, բայց չմիավորվեց ընտանիքի հետ:

ՎԵՐՅԻՇԵԼՈՎ ԴՈՒՑՉԻԱՆՔԻ ԱՄՔԱՐՏԱԿԸ²⁹⁰

1997

Ամեն անգամ, երբ այցելում եմ Դուցգիանգի
ամբարտակ,

Սիրտս բաբախում է զգացմունքներից:

Չինաստանում կատարված այս սխրանքը

Յին քաղաքակրթության մի մասն է լուկ:

Մեր նախնիները բացառիկ խորաթափանցություն
ունեն,

Գործն արվում է, ասես աստվածային ձեռքով:

Ձկան երախից²⁹¹ ջուրը շեղում են նրանք,

Մարդու կամքով Մինգգիանը հոսում ու հետ է
քաշվում:

Այս ոռոգումն իրականացնում է ՇՉի բերանը²⁹²,

Ջուրը կամ ներս է թողնվում, կամ ցամաքեցվում:

²⁹⁰ Դուցգիանգ ամբարտակը, որը կառուցվել է Չենգոու հարթավայրում՝ Լի Բինգի կողմից, որին մթա 256 թվականին՝ Պատերազմական պետությունների ու շրջանում (մթա. 475-221 մթա.) նշանակվեց Քին պետության Շու շրջանի պրեֆեկտ, ջրի հունի շեղման աշխարհի հնագույն, առանց պատնեշի նախագիծն է, որը բաղկացած է ջրբաժան գծից, հունը շեղող ջրանցքից ու հեղեղը շեղող ամբարտակից:

²⁹¹ Խոսքը ջրբաժանի մասին է, որ երկու մասի է բաժանում Մինգգիանգ գետը. ներքին գետը, ուր ջուրն ուղղվում է՝ երաշտի շրջանում տեղի գյուղատնտեսական հողերը ոռոգելու համար, և արտաքին գետ, որը անձրևների ժամանակ ավելորդ ջուրը հեռացնում է ոռոգվող գյուղատնտեսական տարածքներից:

²⁹² Իրականում սա 20 մետր լայնությամբ բացվածք է, որը թույլ է տալիս, որ ոռոգման ջուրը հոսի գյուղատնտեսական տարածքներ և փակում է ավելորդ ջրերի մուտքը:

Սավառնող ավազների ամբարտակը ազատում է
հեղեղները՝

Միաժամանակ առանձնացնելով տիղմ ու ջուր:
Պատշաճ բարձրության վրա է մնում գետի հունը,
Բավական ցածր է տիղմով ներլցվող
ամբարտակը²⁹³:

Չին գետի վրա ուղղվում են թեքվածքները,
Ուղիղ հատվածներն ավելի խորն են փորված²⁹⁴:
Այսպես հազարավոր ակրեր արգասաբեր դարձան,
Չողագործներն օգտվում են դրանցից դարեր
շարունակ:

Արեւի ու լուսնի չափ բարձր է արարիչը,
Չեղեղը սանձող նրա հրամանը դեռ գործում է:

²⁹³ «Շշի բերանի» դիմաց ընկած գետի հունն ամեն տարի հողահան-
վում է՝ պահպանելու համար հաշվարկված խորությունը, որը նշվում է
գետի մեջ թաղված երկաթի կտորի վրա:

²⁹⁴ Այն հատվածում, որտեղ գետը թեքվում է, դուրս ընկած մասի
ափը բարձրացվել է՝ գետի հունը ուղղելու համար. այնտեղ, որտեղ գե-
տը հոսում է ուղիղ հունով, վտառները (եթե այդպիսիք կան) հեռացվում
են, որպեսզի գետի հոսքը հեշտանա:

ԲԱՐՁՐԱՆԱԼՈՎ ՅՈՒԵՅԱՆԳ ԱՇՏԱՐԱԿԸ²⁹⁵

Ապրիլ 2003

Դոնգթինգ լճի մոտ միանում են չորս խոշոր
գետերը²⁹⁶,
Որտեղ հայտնի աշտարակը վերից նայում է ջրերին
ընդարձակ:
Մարդու անմահ էսսեն²⁹⁷, որ անհանգստանում է
Ժողովրդի ու նրա ուրախությունների համար,
արձագանքում է դեռ:

²⁹⁵ Հունան նահանգի Յուեյանգ քաղաքի արևմտյան դարպասի վրա խոյացած եռահարկ Յուեյանգ աշտարակն ընկած է արևելյան Բալինգ սարի դիմաց և նայում է արևմուտք՝ Դոնգթինգ լճին: Այն առաջին անգամ կառուցվել է Թանգ դինաստիայի ընթացքում (618-907) և վերակառուցվել է Սոնգ դինաստիայի ժամանակաշրջանում (960-1279):

²⁹⁶ Միանգցգիանգ, Ջիցգիանգ, Յուանցգիանգ և Լիցգիանգ գետերը, որոնք լցվում են Հունան նահանգի Դոնգթինգ լիճը:

²⁹⁷ Խոսքը Ֆան Չժոնգյանի (989-1052)՝ Սոնգ դինաստիայի գրականագետի մասին է, որի «Յուեյանգ աշտարակի վրա» էսսեն աշտարակին մեծ ճանաչում բերեց: Նրա «Եղի՛ր առաջինը, ով անհանգստանում է մարդկանց վշտի համար ու վերջինը, որ կիսում է նրանց բարիքները» տողը հիշվում է մինչ այսօր:

ՅՈՒՑՉՈՒ ՏԱՃԱՐԻ²⁹⁸ ՔԱՐԵ ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հավաքելով թթենու տերեւներ» (Քայ սանգ զի)

Հունիս 2004

Տարեցտարի նրանք մեխվում ու հղկվում են,
Հիմար չէին ծեր մարդիկ իրենց խոսքերով:
Մինչդեռ հիմար էին արարքներով իրենց,
Նրանց սխրանքները վեց դար են տեւել ու
հազարամյակներ:

Կողք կողքի կանգնած տաս հազար
քարետախտակներ՝

Սա Մեծ պատը չէ:
Բայց մեծ են նրանք իսկապես,
Եվս մի հուշարձան է ահա խոյանում
երկնակամարում:

²⁹⁸ Խոսքը Յունցզուի տաճարի մասին է, որ կառուցվել է ներկայիս Պեկինի հարավարևմտյան արվարձանում Մուի-Թանգ միջքազավորության ընթացքում (581-618): Տաճարում պահվում 114,278 քարե-տախտակից կազմված հավաքածու, որոնց վրա փորագրված են 1122 բուդդիստական Մուրբ գրությունների 3,572 հատորները, որոնց բառերի ընդհանուր թիվը 35 միլիոն է: Այս աննախադեպ սխրագործությունը սկսեց Վանահայր Ցզինգվանը Մույ դինաստիայի Դայե Քագավորության ընթացքում (605-617), բայց 1039 տարի պետք եղավ, որը ձգվեց վեց դինաստիա՝ Մուի, Թանգ, Լիաո, Ցզին, Յուան և Մինգ, մինչ այն իրականություն դարձավ: Ամբողջ տեքստը փորագրված է այնպիսի ճշգրտությամբ, որ ոչ մի բառ դուրս չի մնում ու սխալ չի կարդացվում:

ԼԻՑԶԻԱՆ ԳԵՏԸ²⁹⁹

Մայիս 2001

Բլուրները, ողողված բարակ անձրեւով,
վերածվում են գմրուխտի,
Առագաստանավերը քամուց շարունակում են
ճոճվել:

Երբ ամպերը ցրվում են, գետ է երեւում,
Մշուշոտ քողի ետեւ ամոթխած թաքնվում են
բլուրները:

Բոլոր ջրերը հայելու պես հարթ մակերես ունեն,
Բոլոր սարերը տեսիլքի են նման³⁰⁰:

Երբ գետը թեքվում է, տեսարանները հաջորդում են
իրար.

Նավարկելը նման է ֆիլմում թափառելուն:

²⁹⁹ Լիցզիանգ գետը Արևմտյան գետի վտակն է Գուցզիանգ գետի վերին հատվածում՝ հյուսիսարևելյան Գուանգսիում: Գուիլինից Յանգշուո ճանապարհի 83-րդ կիլոմետրում ես տեսա, որ գետը սահմանակից է սապատանման բլուրներին, որոնց փոփոխական ուրվագծերը գերազանց միջանցք են ստեղծում:

³⁰⁰ Երբ արևի ճառագայթներն անդրադառնում ու բեկվում են տարբեր խտության մթնոլորտային շերտերին, հեռավոր տեսարանների հերթափոխող պատկեր են ստեղծում երկնքում կամ հորիզոնի վրա: Այս բնական տեսողական երևույթը շփոթելով ծովի կակղամորթների արձակած գոլորշու հետ՝ մեր նախնիներն այն կոչում էին «ծովի ամբողջներ և կակղամորթների տաղավար»: Լի Շիչժեն (1518-1593), «Մատերիա մեդիկայի համառոտագիր - Չուկ և կշեռք I», «Կակղամորթների արձակած գոլորշիները կարող են ձեռք բերել տաղավարների ու ամբողջների ուրվագծեր, որոնք տեսանելի են դառնում անձրևից առաջ: Այստեղից էլ առաջանում են «կակղամորթների տաղավարներ» և «ծովային ամբողջներ»:

ԹԵՔ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԼԻՃԸ³⁰¹

1992

Ես նավարկում եմ Թեք արևմտյան լիճն ի վեր,
 Նշաններ թողնելով, որտեղ գարնանային
 գեփյուռն է փչում:
 Թին ձեռքիս՝ կտրում եմ կանաչ մարգագետինը
 երկու ափին,
 Նոտաների պես դուրս եմ հորդում փնջված
 ծաղիկները:
 Առվակների, միջանցքների, պատահական
 պալատների երկայնքով
 Մառախուղի մեջ ուռիները նկարի
 տպավորություն են թողնում:
 Չարմանալի չէ՝ այստեղ հաճախ եմ այցելում
 գրողները,
 Նրանք մրցում են՝ սիրունիկ տեսարանները
 բանաստեղծության վերածելու համար:

³⁰¹ Լին արևմտյան լիճը Յանգչժոուում, Ցզիանգսու նահանգում, իր անունը ստացել է Վանգ Հանգի (1704-1783) բանաստեղծությունից, որը Արևմտյան լիճը (որ նաև կոչվում էր «Չուլածո ոսկու գավաթ») համեմատել է իր հայրենի Հանգչժոուի Արևմտյան լճի հետ: Բանաստեղծությունը վերնագրված է «Լին արևմտյան լիճը». «Արտասովոր ուռիների անվերջ շարքը փոխարինում է չորացած մոլախոտը, /Վայրի սագերը հերթ են կանգնում կարմիր կամրջի վրա, ինչպես նկարում: /Մա ձուլածո ոսկու ևս մի գավաթ է, /Եվ լավ կլինի կոչվի «Թեք Արևմտյան լիճ»:

ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՅՈՒԱՆԳՇԱՆ ՍԱՐ

Գարնան փառատուն 1999

Մենք վերջապես եռյակ ենք կազմում³⁰²
Յուանգշան սար բարձրանալու համար:
Նախորդ գիշեր դու անձրեւ էիր խնդրում,
Այս առավոտ քամին եմ վարում³⁰³:
Անձրեւը նահանջում է, մառախուղն է իշխում,
Քամին իր տեղն է գիշում պարզկա երկնքին:
Ավելի վաղ սահում էր մշուշոտ ամպերով,
Յիմա՝ տաքանում արեւի տակ մեղմ:
Նրա ծայրը հայտնվում է, երբ մեզն
անհետանում է,
Եվ ամաչելով թաքնվում՝ ճանապարհին ամպեր
տեսնելով:
Յեռվում բլուրները մրցում են՝ ցուցադրելով
արծաթափայլ ձյունը,
Զմրուխտի կողքին ջրերը ճախրում են
սոճիների հետ:
Վերելում վսեմ առյուծով ենք մենք սրտանց
հիանում,

³⁰² Մեզնից յուրաքանչյուրը՝ կինս, դուստրս և ես, աշխատանքի կամ ուսման զբաղված ռեժիմի պատճառով հազվադեպ ենք հնարավորություն ունենում ընտանիքով դուրս գալ տեսարժան վայրերը դիտելու, ինչը արեցինք 1999 թվականին Հուանգշան սարում Գարնան փառատունին նվիրված ուղևորության ընթացքում: Բանաստեղծությունը գրել եմ՝ նվիրելով հատկապես այս իրադարձությանը:

³⁰³ Հուանգշան սարի վրա ամիսներ շարունակ անձրև չէր տեղացել: Բայց երբ երեքով հասանք մեր նպատակակետին ու գրանցվեցինք Բեյհայ հյուրանոցում, սկսեց անձրև գալ: Կատակով ասացի, որ պարուն Վանգն էր բերել անձրևը, ով եկել էր նախորդ գիշեր: Բայց հաջորդ օրը անձրևը դադարեց, ու քամի բարձրացավ:

Ներքեւում հաշվում ենք խոնարհվող
վիշապների³⁰⁴:
Մի լար կախվում է երկնքում³⁰⁵, միախառնվելով
Արահետների հետ, որ պարուրածեւ ձգվում են դեպի
ամպերն անվերջ³⁰⁶:
Տարօրինակ են ժայռերը, ասես՝ կացնահարված³⁰⁷,
Խորհրդավոր է սոճին, ասես բնածին
գրչածայր է ևս³⁰⁸:
Նույնարմատ ծառերն ամուր կանգնած են
բարձունքներում³⁰⁹,

³⁰⁴ Այստեղ «առյուծ» բառը վերաբերում է Առյուծի գագաթին, որը, Բեյհեյ հյուրանոցի կիրճից նայելով, նմանվում է առյուծի, որ հպարտությամբ նայում է ցած՝ սպիտակ ամպերի ծովին: «Կռացած վիշապները» վերաբերում է սարի վրա հին ծառերին: Միահյուսված արմատներով ու ծուռումուռ ճյուղերով այս ծառերը հիշեցնում են խոնարհված վիշապների խումբ:

³⁰⁵ Արևելյան ծովի ճոպանուղին մոտ 2,800 մետր երկարություն ունի: Ինչպես երկնքում սահող ժապավեն, այն ներքև է տանում բազմաթիվ հովիտների հրաշքները:

³⁰⁶ Սա վերաբերում է մեկդարյա պատմություն ունեցող արահետներին, որոնք պարուրածեւ բարձրանում են բլուրն ի վեր՝ դեպի ամպեր:

³⁰⁷ Հուանգչան սարին հատուկ են տարօրինակ ժայռերն ու բլուրները, որոնք այնպիսի տեսք ունեն, ասես Աստված միջամտել է նրանց ստեղծմանը: Ահա և ասույթը. «Բոլոր գագաթները կազմված են ժայռերից: Բոլոր ժայռերը հրաշալի են»:

³⁰⁸ Խոսքը սոճու մասին է, որն աճում է Գրչի գագաթի վերևում: Ցրված ծաղիկների թամբարդում գտնվող գագաթը հսկայական վրձնի պես դուրս է ցցվում դեպի երկինք, իսկ ծառը նրա գագաթի պես վերևում է, ու դրա շնորհիվ վերածվում է բնական հրաշքի:

³⁰⁹ Խոսքը վերաբերում է «Սկսիր հավատալ» գագաթի ճանապարհին գտնվող գույգ ծառերին, որոնք աճում են նույն արմատից ու վեր խոյանում դեպի երկինք:

Կողպեքները սիրո ուխտն են ամուր կնքում³¹⁰:

Մի ծիծեռնակ է պարում նրբին, վայելչագեղ՝

Յաղթանակի մեր երգը ներդաշնակությամբ
զարդարելով:

Յուանգշանի գեղեցկությունը պահպանվում է աստ,

Այս եռյակի ուրախությունը սահմաններ չունի³¹¹:

³¹⁰ Երկաթե շղթայի վրա, որն անցնում է Երկնային կենտրոնական գագաթի ու Դարպասաշեմի միջով դեպի Արևմտյան ծով, բազմաթիվ կողպեքներ են կախված: Սիրահարներն ամրացնում են իրենց կողպեքները, ապա սարից նետում բանալիները՝ հավերժ սեր խոստանալով միմյանց:

³¹¹ Վերջին չորս տողերը պարունակում են բառախաղ՝ ծիծեռնակ (յան), հաղթանակ (քայ) և ուրախություն (լե), որոնք կնոջս, իմ ու դստերս անուններն են:

**ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՇ ԳՅՈՒՂԱԿԻ
ԼԵՈՆԱԳՈԳ³¹²**

Սեպտեմբեր 9, 1999

1999 թվականի 9-րդ լուսնի 9-րդ օրվա ժամը 9-ն է,
Երազանքի ետեւից ճանապարհ եմ ընկնում դեպի
հովիտ:

Կիպարիսները սավառնում են, եւ ևոճիները երկինքը
կանաչ են ներկում,

Սահանքներն ու լճերը³¹³ շրջապատում են գեղեցիկ
բլուրը:

Աչք չէի կտրում յոթգույն անտառից,

Յինգգույն լիճը³¹⁴ թիավարներին է հրապուրում:

Պետք չէ երազել հեքիաթային երկիրը գտնելու
մասին,

Ինը գյուղակի լեռնագոգից հետո ոչ մի վայր այլևս
արժանիք չունի:

³¹² Ինը գյուղակի լեռնագոգը, որն այդպես է կոչվել տիբեթյան հնագույն ինը գյուղակների անունով, որոնք սփռված էին 80 կմ երկարությամբ և 1980-3100 մետր բարձրությամբ լեռնագոգում, հայտնի է իր հինգ լավագույն տեսարժան վայրերով՝ Չմբուխտի ծովը, Չուգադիպող ջրվեժները, Բազմագույն անտառները, Չնաժածկ գագաթները և տիբեթյան ժողորդական բանահյուսությունը:

³¹³ Ինը գյուղակի լեռնագոգը պարծենում է 114 լճերով, որոնց մեծ մասը միահյուսված է: Լճերից մի քանիսից թափվող ջրերը գահավիժելով իջնում են բլուրներն ի վար և վայրէջք կատարում մմանատիպ լճերի մեջ:

³¹⁴ 90,000 քառակուսի մետր ջրային մակերեսով, հինգ մետր խորությամբ և 2472 մետր բարձրությամբ լիճը բազմաթիվ երանգներ ունի՝ բաց դեղին, մուգ կանաչ, բյուրեղյա կապույտ, մուգ կապույտ և բաց կարմիր, որոնք միախառնվում ու գեղադիտակի հրաշքներ են ստեղծում:

ԼԻՑԶԻԱՆ ՔԱՂԱՔԸ³¹⁵

-Երկնքից մաքրված ավազներ (*Թիան ցզիան շա*)

Յոկտեմբեր 2000

I. Պատվարժան Դայան քաղաք³¹⁶

Քարե կամուրջ, փայտե առանձնատուն³¹⁷, բամբուկե կացարան, Երբանցքներ, ջրամերձ շավիղներ, կարկաչուն գետակներ:

³¹⁵ Յունան նահանգի հյուսիս-արևմուտքում գտնվող Լիցզիանգը պատմական ու մշակութային քաղաք է, որը հայտնվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ համաշխարհային մշակութային ժառանգության տեսարժան վայրերի ցուցակում:

³¹⁶ Դեռևս մոտ 1279 թվականին, Սոնգ-Յուն միջքազավորության ընթացքում կառուցված Դայան հնագույն քաղաքն ընկած է հյուսիս-արևմուտքում՝ սարի դիմաց, որից բացվում է դեպի հարավ-արևելք փոփոք ընդարձակ հարթավայրը: Դայանի հիմնական փողոցն անցնում է գետի ափով, նրբանցքներով, որոնք կապված են ջրանցքներին, իսկ ճանապարհները սալարկված են բազմագույն գետաքարերով:

³¹⁷ «Փայտե առանձնատունը» պալատների փոփոք խումբ է 800-ամյա պատմություն ունեցող Դայան քաղաքի սրտում և իսկապես կառուցված է փայտանյութից: Սակայն «փայտե առանձնատունը» նրա անվան սխալ թարգմանությունն է՝ «Մու Ֆու», որը պիտի թարգմանվի «Առաջնորդ Մուի պալատ»: Ընտանիքի ժառանգական անուն է, որը 1383 թվականին շնորհվել է մի ժամանակ ազգանուն չունեցող այս թագավորական ընտանիքին Մինգ դինաստիայի հիմնադիր հայր Չժու Յունանչժանգի կողմից (1328-1398) այն բանից հետո, երբ տեղաբնակ Նասի տոհմի առաջնորդ Ահգզիահդեն մվիրվածության երդում տվեց դինաստիային:

Թանգ երաժշտությունն ու Սոնգ կիթառը³¹⁸ դեռ
արձագանքում են,
Բայց նրա հարգված կեսը՝ Դայան քաղաքը, ցայսօր
մնում է,
Իսկ ծառերի վրա գարունը շարունակում է ուրախ
ոստոստել:

³¹⁸ Խոսքը վերաբերում է դասական Նասի երաժշտությանը՝ քաղաքային ժողովրդական բանահյուսության մի մաս, որն աչքի է ընկնում պարզությամբ, մաքրությամբ, ականջ շոյող հնչեղությամբ:

II. Յուրևզի ձևե սարը³¹⁹

Միգապատ շղարշ, ձևե գլխաշոր, սոճու

շրջագգեստ:

Էկզոտիկ գագաթ ու թափանցիկ ժայռ՝ ոտքի տակ

կանգնած:

Վերից նայում է իր տարածքի բոլոր բլուրներին:

Թե մարդ բարձրացնի ձեռքերն իր, ապա նա

բարձրահասակ կլինի երկնից:

³¹⁹ Յուրևզ ձևածածկ սարը Լիցզիանգ քաղաքի մատույցներում կազմում է Հյուսիսային կիսագնդի հարավային գագաթի ժամանակակից սառցադաշտերի մի մասը: Արևելքից ուսումնասիրելիս սարի 13 գագաթները նման են ամպերի օվկիանոսում քնած վիշապների, իսկ նրանցից ամենաբարձրը 5596 մետր է ծովի մակարդակից:

ՈՍԿԵ ՄՏՐԱԿ ԳԵՏԱԿԸ³²⁰՝ ՉԺԱՆԳՑՉԻԱՑՉԻԵ՝³²¹

Ապրիլ 2001

Լայնարձակ է անտառը, գագաթները՝ հիասքանչ,
Շավիղն անցնում է լուռ հովտի միջով:
Քարափները ճախրում են, իսկ ծառերը համար
դուրս են ցցվում՝ տարածքի համար
անխոնջ պայքարելով,
Օդը թնդում է երգող թռչուններից, իսկ առվակները
խոխոջում են:
Թավ անտառները պաշտպանում են ճամփան
արեգակից:
Երկու ափերին երկնային սյուներ են հառնում, ասես
աստղերին ողջունելու:
Նազվարդերը գուցե լավագույնն են այստեղ
վայելքի համար,
Բայց ոչինչ ավելի չի հիացնում, որքան ծաղկապատ
միջանցքները:

³²⁰ Չժանգցգիացգիե գբոսաշրջային հանգստավայրում գտնվող այս գետակը հոսում է բարձրաբերձ գլաքարի երկու կողմից, որն այդպես է կոչվել իր ոսկեգույն և մտրականման ձևի պատճառով:

³²¹ Չժանգցգիացգիեն, որ նշանակում է «Չժանգ ընտանիքի տիրապետություն», իր անունը ստացել է այն փաստի շնորհիվ, որ նախկինում Հան դինաստիայի գեներալ Չժանգ Լիանգի (?-189 մթա.) առանձնավայրն էր:

ՊԵԿԻՆԻ ԾԱՌԱՍՏԱՆԸ ԳԱՐՆԱՆԸ

Ապրիլ 2001

Երբ արեւելյան քամին կանաչ է ներկում բլուրները
մի գիշերվա ժամի,
Ծաղիկների ծովում ամբոխները ուրախ մրցում են՝
տեսնելու հրաշք պատկերն այդ:
Ճոճվող ուռիների բազում ոստերն այնքան
հմայիչ են,
Վարդագույն բողբոջներն ալիքվում են
փունջ-փունջ:
Սրտերն արբած են այսքան արբեցնող մշկաբույրից,
Աչքերն ըմբոշխնում են գույները՝ ոսկե շողի մեջ
այնքան շլացնող:
Ծաղկման շրջանում այցելուներին գունանկարներ է
պարզելում գարունը:
Այս շքերթում մատիտներ չկան, շարունակ
երգում են նրանք:

ՀՈՆԳՅՈՒՅՉԻ ԱՆՏԱՌ, ՀՈՒՆՈՒՆԲՈՒՐ ՏԱՓԱՍՏԱՆ

Մայիս 2001

Գարունը մեզ ուղեկից՝ հարյուր մղոն ահա
Գնում ենք լայնակի անապատով, որ սկսել է թեթել
կանաչել:

Թարմ օդ շնչելով՝ հանգիստ ենք զգում,
Նույնիսկ ձիերն ու անասունները վայելում են
այս զբոսանքը:

Խիտ բլուրներում գրկախառնվում ենք հին
ծառերի հետ:

Բլրի գագաթին աչքերը վայելում են ծառաստանի
սիրուն հեռապատկերը,

Այնտեղ՝ ներքեւում, հոգոց եմ հանում ամա
հողակտորների տխուր առիթով.

Կարո՞ղ ենք ավարտել երթը, մինչ նրանք կծածկվեն
կանաչով:

ԿՆՈՒՆԻՎ ԹԱՅ ՍԱՐԸ³²²

Փետրվար 2002

Մենք հեռու ենք քշում ամպերը Նեֆրիտի կայսեր
գագաթին³²³,
Մինչդեռ ծեր վանականի ժայռը գրկախառնվում է
արեւի հետ:
Բնությունը աստվածային հմտությունն իր
տարածում է բլրի ու հովտի վրա,
Վրձիկը ձեռքին՝ նա կանաչ է ներկում
բնապատկերը:
Մեծ Իններորդ երկնքի սրահը կապում է
երկինք ու երկիր,
Մակագրություններ³²⁴ ժայռերի վրա՝
արձանագրում են ազգի վերելքն ու վայրէջքը:
Ճանապարհելով հազարավոր գետեր՝
Թայ սարն իր գիրկն է առնում տիեզերքը:

³²² Թայ սարը, որ Չինաստանում համարվում է Արևելքի սուրբ սար կամ սարերի սար, վեր է խոյանում կենտրոնական Շանդոնգ նահանգի կենտրոնական հատվածում, իսկ հիմնական գագաթի բարձրությունը 1524 մետր է ծովի մակարդակից:

³²³ Թայ սարի գլխավոր՝ Նեֆրիտի կայսեր գագաթը այնտեղ է, որտեղ Չինաստանի կայսերական անցյալի միապետներն անց էին կացնում իրենց խոշորագույն կրոնական ծիսակատարությունները՝ հարգանքի տուրք մատուցելով Երկնքին ու Երկրին:

³²⁴ Նեֆրիտի կայսեր գագաթի արևելյան ժայռը վերից վար ծածկված է փորագրված մակագրություններով, որոնցից ամենավաղը պատկանում է Քին դինաստիային (211-206 մթա.): Այն պատմության ճշգրիտ դասագիրք է, որ պատմում է ազգի զարգացման մասին, ինչպես նաև «Չինական արագագրության թանգարան» է բաց երկնքի տակ:

ԳԱՐՈՒՆԸ ԼԻՆԳՅԱՆ ՏԱՃԱՐՈՒՄ³²⁵

Փետրվար 2002

Վերադառնալով Թայից՝ դադար ենք առնում
անտառում խաղաղ,
Որտեղ թարմ օդը հմայում է մեզ:
Վսեմ գմբեթավոր շինությունները պատմություն
ունեն պատմելու³²⁶,
Քարետախտակները՝ մաշված ու կտորված,
անցյալի փառքի մասին են խորհում:
Քարե քանդակները պարում են, խամրեցնում
փյունիկին,
Ներկած քանդակները խոսում են եւ նրանց խոսքերն
աչքերում են³²⁷:

³²⁵ Լինգյան տաճարը գտնվում է Թայ սարի գլխավոր գագաթից 20 կիլոմետր հյուսիս-արևմուտք՝ Լինգյան սարի հարավային լանջի վրա: Վերջինս, որ հայտնի է նաև Ֆանգչան անունով, «Ջրային ուղիների դասական մեկնաբանության» մեջ կոչվում է Յուֆու սար: Մինգ դինաստիայի նշանավոր գրականագետ Վանգ Շիչենի խոսքով (1526-1590)՝ «Ուղևորությունը դեպի Թայ լիարժեք չէ առանց Լինգյան այցելելու»:

³²⁶ Տաճարից դեպի արևմուտք ցրված են 81 մակագրված քարե-տախտակներ և 167 սալեր, որոնց տակ թաղված են տարբեր սերունդների վանահայրերի աճյունները:

³²⁷ Հազար Բուդդաների սրահում դասավորված է 40 նկարազարդ կավից «արիաք»: Մոնգ և Մինգ դինաստիայի արհեստավորների կողմից պատրաստված այս արիաքներն արտահայտում են կենդանի զգացմունքներ՝ զմայլանքից մինչև գայրույթ, տխրությունից՝ ուրախություն: Ժամանակակից չինացի գիտնական և մտածող Լիանգ Քիչաուն (1873-1929) դրանք կոչում է «Չինաստանի թիվ մեկ կավե քանդակներ»: Ականավոր նկարիչ Լիու Հախուն (1873-1929) գրել է իր վայելչագրերից մեկում. «Կենդանի միս ու արյունով՝ Լինգյանի կավե կերպարները նմանը չունեն աշխարհում»:

ՄԱ ՔԱՅ

Ծառերի ոստերը կանաչ են մաղում արեւով
ողողված առավոտի վրա,
Թանգ սոճիներն ու Յան նոճիներն անվրդով
վայելում են նորեկ գարունը:

ԹԵՅԱՄԱՆԻ ՔԻԹ ՀԻՇԵՑՆՈՂ ՋՐՎԵՇՆԵՐ³²⁸

-Թափանցիկ ու միալար երաժշտություն
(*Քինգ փինգ յուե*)

Ապրիլի սկիզբ 2002

Դեղին վիշապի նման՝ ասես երկնքից է ընկնում նա,
Կամ կատաղի վագրի պես ցատկում ու կծկվում է
անվերջ:
Հավիտենական աղմուկի մեջ սպառնում է ճեղքել
կիրճերը՝
Արթնացնելով բազում հեծյալ զինվորների:

Երբ քամին փոխում է ուղղությունը, ավազն ու
ալիքը մեկտեղ պտտվում են հորձանուտում,
Ծիածան է բացվում՝ փչելով ծուխ ու մառախուղ:
Թեյամանի քթից ուղղահայացորեն ջուր է ցայտում՝
Ցիրուցան շտապելով դեպի արեւելք:

³²⁸ Շանսի նահանգի Յզիսիան կոմսության և Շանսի նահանգի Յի-չուան կոմսության միջև ընկած հատվածում 400 մետր լայնությամբ Դեղին գետը հանկարծ նեղանում ու հասնում է 50 մետրի: Սա հանգեցնում է նրան, որ գետն ուղղահայաց թափվի լեռնագոգից մոտ 20 մետր՝ ստեղծելով այն գեղատեսիլ ջրվեժը, որ հայտնի է Հուկոու անունով, ինչը նշանակում է Թեյամանի քիթ:

ԱՅՅԵԼԵԼՈՎ ՅՈՒԱՆՑԻԱՑԻՉԵ ՀԱՆԳՍՏԱՎԱՅՐ³²⁹

Հոկտեմբեր 5, 2003

Անձրեւ Է մաղում, հանդգնում եմ բարձրանալ
Էկզոտիկ բլուրները,
Քայլելով հններորդ երկինքն ի վեր:
Ամպերը սահում են, որ ծածկեն թափանցիկ ու վսեմ
տեսարանները,
Որ հայտնվում են միայն, երբ թանձր մառախուղը
տեղի է տալիս:
Կամուրջը³³⁰ ձգվում է տաս լիզ խորությամբ
սեւ անդունդով,
Բամբուկի շիվերը³³¹ վերել են ձգվում:
Երկինքը կանաչ ներկելու համար՝ բլուրները
հեծնում են մեկը մյուսին,
Աստվածային քանդակագործ գոյություն ունի,
ուզես թե չուզես:

³²⁹ Չժանգզգիացգիե զբոսաշրջային հանգստավայրի հյուսիսային հատվածում գտնվող Յուանգզիացգիեն կամ «Յուան ընտանիքի տիրապետությունը» բարձրավանդակը բոլոր կողմերից շրջապատված է մոտ 1000 մետր բարձրությամբ ուղղաձիգ ժայռերով, որի ետևում կապույտ սարերի լողզված պատկերն է, իսկ առջևում՝ խոր անդունդը:

³³⁰ «Կամուրջը», որ ձգվում է մի գագաթից մյուսը ավելի քան 300 մետր բարձրության վրա, իրականում երեք մետր լայնությամբ, հինգ մետր հաստությամբ ու 50 մետր երկարությամբ բնական սալաքար է՝ ցնցող տեսարան, որ փառաբանվում է՝ որպես «երկնքի տակ առաջին կամուրջ»:

³³¹ Խոսքը մամոնտի քարե սյունների մասին է, որոնք բազմաթիվ բամբուկի շիվերի պես ձգվում են դեպի երկինք:

ՆՈՐ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԼՃՈՒՄ ՆԱՎԱՐԿԵԼԻՍ

2010

Ես շրջում եմ նոր լճում, իսկ նավակս հեռացնում է
մշուշը,
Աշտարակն ու պալատը պահմտոցի են խաղում:
Կամրջի տակ հանդարտ գետակն է ոլորվում,
Ջրի վրա երկու նարնջագույն բադ հետապնդում են
իրար:
Ուռիների միջով թեւում է ֆլեյտայի ալեձեւ
մեղեդին,
Այգում մի գորտ է ցատկում դեպի ինձ, իսկ ես
ծուլորեն կարդում եմ:
Եթե Թառ Յուանմինգն այսօր ողջ լիներ,
Լճի մոտ նոր կացարան կկառուցեր նա:

ԳԱՐՆԱՆ ՕՐԿԱ ԱՐԱՇԻՅԱՄԱ³³²

Ապրիլ 2007

Դարձյալ Արաշիյաման լողում է հորդ անձրեւով,
Որտեղ գեփյուռը կանաչ է ներկել շիվերը:
Ու՛մ ուշադրության համար են իրար հրմշտում
սակուրայի ծաղիկները:
Ժողովուրդն է այս հողին ջերմանում:

³³² Արաշիյաման շրջան է Ճապոնիայի Կյոտո քաղաքի արևմտյան արվարձաններում: Այն նաև ազգային-պատմական վայր է և գեղատեսիլ հանգստավայր՝ լի այնպիսի տեսարժան վայրերով, ինչպիսիք են Լուսինը խաչող կամուրջը, որտեղից բացվում են սակուրայի ծաղիկների ու Արաշիյամա սարի լանջերի աշնանային գույների առասպելական տեսարանները, Թենրի-ցվիուն՝ Ռինգայ դպրոցի՝ Չեն բուդդայականության երկու հիմնական ուղղություններից մեկի 15 մասնաճյուղերից մեկի հիմնական տաճարը, և «Արաշիյաման անձրևի տակ» հուշակոթողը, որի վրա փորագրված են Չժոու Էնլայի չորս բանաստեղծությունները՝ 1919 թվականի ապրիլին իր տասը օրվա այցելության մասին, որից հետո նա վերադարձավ Չինաստան և միացավ հեղափոխությանը:

**ՔՈՍՖՈՐԻ ԿԱՍՈՒՐԶ՝ ԳԵՏԱՄԵՐԶ ԶԱՂԱՔԻ ՄԱՐԴԸ
(ՅԶԻԱՆԳ ՉԵՆԳ ՉԻ)**

Ապրիլ 18, 2002

Երկու նեղուցները կոկորդից բռնեցին ջրային ուղին:
Նավերը եկան խմբերով մեծ՝
Անհանգիստ ջրերի վրա մրցելով:
Եվրոպայի ու Ասիայի կանաչ բլուրները՝ միմյանց
դեմ-հանդիման

Նախանձել կարող էին միայն ձկներին:
«Ե՞րբ կլինի կամուրջը սավառնող,
Որ կարողանանք մի քայլով հասնել մյուս ափ».
-Միայն երազանք էր այդ ցանկությունը:

Կամրջին պողպատե սյուներ են կանգնած,
Երկար ժապավենը երկինք մեկնած՝
Ապահովում է երկու երկրների երթևեկությունը:
Մարտակառքերով ձիերը ետուառաջ են անում
այս ու այն կողմ,
Մետաքսի ճանապարհը կարծես ի վերջո դարձյալ
ծաղկում է:

Երթևեկությունը վերսկսվում է, երբ արեւելքն ու
արեւմուտքը մատակարարում են իրար:
Մարդիկ՝ դեղին, սպիտակ ու սեւ մաշկով,
Ամեն մեկն իր գրական գոհարն է առաջարկում:

ՀԻՆ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

«Հրաշալի լեդի Յու» (Յու Մեյ ռեկ)

Ապրիլ 2002

Ի՞նչ է սա՝ մարդու դեմք առյուծի մարմնի վրա³³³:
Քանի՞ գաղտնիք է թաքնված յուրաքանչյուր բուրգի
ներսում³³⁴:

Որտե՞ղ է Ռայի՝ Արեւի աստծո նավը³³⁵:
Որքա՞ն ժամանակ են փարավոնները ննջում³³⁶:

Հագարամյակներ անց՝ առեղծվածները դեռ կան.
Փոխվել են միայն հարցադրողները:
Գոհարները գուցե հղկվել են Երկնքում,
Միայն մարդը կարող է գտնել պատասխանները:

³³³ Մֆինքսը՝ առյուծի ազդրերով, թռչնի թևերով ու կնոջ դեմքով ու կրծքով քարե արձանը Մեծ բուրգից 350 մետր հեռավորության վրա է, կառուցվել է Եգիպտոսի Կահիրե քաղաքում, Չորրորդ դինաստիայի (մթա. 2613-2498թթ.) Քեոփս փարավոնի (մթա. 2589-2566) կողմից:

³³⁴ Բուրգերը դամբարաններ էին, որ հին Եգիպտոսում փարավոնները կառուցում էին իրենց ու իրենց թագուհիների համար: Ինչպե՞ս են կառուցվել բուրգերը. այս հարցը մինչ այժմ բավարար պատասխան չունի, քանի որ չկան բավարար տվյալներ չափազանցության, աստղագիտության, մաթեմատիկայի, երկրաչափության ու տիեզերքի մասին:

³³⁵ Չգտելով արևի աստված Աթոն-Ռայի հավիտենական կյանքին՝ Քեոփս փարավոնը կառուցեց նավ, որն Արևի աստված Ռայի նավի կրկնօրինակն էր, որպեսզի մահից հետո իր հոգին կարողանա հետևել արևի աստծո օրինակին ու վարել նավը դեպի երկնակամար:

³³⁶ Կահիրեի Եգիպտոսի ազգային թանգարանի թագավորական մումիաների սրահում են պահվում Փարավոնյան ժամանակների 27 արքաների ու թագուհիների մումիաները: Չնայած անցել է շուրջ 3000 տարի, նրանց մաշկն ու մազերը պարզ տարբերակվում են այս զմռված մարմինների վրա: Նրանցից ոմանց դեմքին մույն արտահայտությունն է, ինչ մարդիկ ունեն այսօր:

ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿ

«Սեւ նեֆրիտի շերտ» *(Զինգ յու ան)*

I. Գարնան հետքերը որոնելիս

1981

Ե՞րբ է լռության մեջ գալիս գարունը:
 Եւ հետեւում է տուն դարձող ծիծեռնակներին³³⁷,
 Որ տուն կառուցի նոր շիվի համար:
 Եւ կոխոտում է մոլախոտը, հոտոտելով գտնում
 ծաղիկներ:

Գեղեցիկ է ծիրանը³³⁸,
 Չբաղված են կկունները³³⁹,

³³⁷ Չվող ծիծեռնակը աշնանը հեռանում է Չինաստանից և փետրվարին հարավ-արևելյան Ասիայից վերադառնում է Գուանգդոնգի ճանապարհով, իսկ մարտի սկզբին ուղղվում դեպի Յանգցե գետի միջին ու ցածրադիր շրջաններ: Ապա ապրիլի սկզբին սավառնում է Դեղին գետի երկայնքով, և երբ ապրիլի վերջին գարունը հասնում է Չինաստանի հյուսիս, նրան կարելի է տեսնել Պեկինում:

³³⁸ Վարդերի ընտանիքի ծառ է, որը ծաղկում է տարվա մեջ չորս ամիս: Ծիրանի ծաղկի պատկերը հաճախ պոեզիայի մեջ հայտնվում է՝ որպես գարնան նախագուշակ: Հարավային Սոնգ դինաստիայի բանաստեղծ Յե Շաոունգի (1194-?) «Այգում այնքա՛ն գարուն կա, ինչպե՛ս կտեղավորվի: /Ծիրանի կարմիր ծաղկի ընձյուղներն արդեն անցնում են պատը» տողերը շարունակ մեջբերվում են մեր օրերում՝ որպես խորիմաստ գրական արժեք և պատկերավոր ներիմաստ:

³³⁹ Ի տարբերություն կարծրատիպային հիմար ու հաճախ խելահեղ պատկերի՝ «բարեխիղճ» կկուն, որի յուրահատուկ կանչն ազդարարում է «տնկելու ժամանակը» և «սերմնահանման ճիշտ ձևը», համարվում է Գարնան սիրելին: Սոնգ դինաստիայի բանաստեղծ Գաո Բոքի (?-?). «Ո՞վ կշտապի կարճ պատասխան տալ կկուի զոջման կանչերին: /Միայն այն զբաղված մարդիկ, որ շտապում են վերադառնալ արևելյան արվարձաններ՝ գյուղատնտեսական նպատակներով»:

ՄԱ ՔԱՅ

Բզզում են մեղուները:

Գետերը հալչում են, եւ հոսանքն ի վար լողում են
նավակները,
Երկիրը տաքանում է՝ ստիպելով, որ սերմերը
փորեն հողը:

Անձրեւի բերած վերջին երեկոն մետաքսե
շաղով է գալիս³⁴⁰:

Ներծծելով Էոյի քաղցր արցունքները՝
Կանաչը պատել է ծառաստաններ:
Ո՞վ է ասում, թե նա ոչ մի տեղ չի ապրում:

³⁴⁰ Դու Ֆու, «Բարի գալուստ անձրևին մի գարնանային գիշեր».
«Քամու կրունկների վրա այն սահում է գիշերվա մեջ, /Լուռ ու հան-
դարտ խոնավեցնում ամեն ինչ»:

II. Ամառային արձակուրդներ

2002

Ու՞ր գնալ եւ խուսափել հեղձուկ արեւից:
Փոքրիկ կամրջի ետեւ,
Խոր հովիտն ի վար:-
Սաղարթը պաշտպանում է ճամփան անստվեր:
Արմատ գցելով թափանցիկ վտակում՝
Լեռնագոգի մոտ
Մոլախոտերը քամու մեջ պարում ու ճոճվում են:

Տաղավարում նստած՝ նայում եմ ամպերին
դեսուդեն ճախրող,
Առվակի մոտ պառկած՝ լսում եմ նվագներ
կարկաչուն:

Անձրեւը հուսախաբ չի անում, ներշնչանք է տալիս:
Չափածոն ստեղծված է,
Ծառերը՝ պատվաստած,
Ինչպե՞ս կարող են տաք ալիքները խանգարել
սրտին:

III. Ողջունող աշուն

1981

Ու՞ր է աշնանային քամին, որ շնկշնկում է
Բուրմուռների բլուրներում³⁴¹։
Որտեղ կարմիր են ներկված տերեւները³⁴²,
Արահետները ծածկված են դեղին ծաղկաթերթերով։
Սպիտակ ցողից³⁴³ տամկացած գնդիկները,
Հասունացող բերքը ոսկե գույներ են ստանում շռայլ,
Ուղեկցելով վայրի սագերին՝ դեպի հարավ են
սլանում նրանք։

Բեռնավորած նավերը առագաստ են պարզում՝
գետերով լողալու,
Դիմացկուն քրիզանթեմները հառում են աչքերը։
Արելը մայր է մտնում յոթգույն ծիածանին։
Խնձորները կարմրել են,
Տանձից ծանրացած ծառերը ճկվում են։
Ալեհեր մազերը վայելում են իրենց
երիտասարդությունը։

³⁴¹ Խոսքը Պեկինի արևմտյան արվարձանում գտնվող Բուրմուռների բլրի մասին է։

³⁴² Մարշալ Չեն Յի (1901-1972), «Արևմտյան բլուրների կարմիր տերեւներ», «Օ, դուք, հրանման տերեւներ Արևմտյան բլուրների վրայով, /Ավելի շատ նռնաքար, քան վաղ գարնան ծաղիկներ»։ Դու Մու (803-852), Թանգ դինաստիայից. «Արշավելով սարի վրայով»։ «Թխկիների անտառում կանգնեցնում եմ կառքս, որ ուզածիս չափ նայեմ երեկոյին, /Երբ ցրտահարված տերեւներն ավելի կարմիր են, քան վաղ գարնան ծաղիկները»։

³⁴³ Սպիտակ ցողը արևային 24 շրջաններից է, որոնցից յուրաքանչյուրը տևում է տասնհինգ օր։ Այդ ընթացքում ջերմաստիճանը սկսում է իջնել, եղանակը գովանում է, և առավոտյան ցողի կաթիլները երևում են մոլախոտի ու ծառերի տերեւների վրա։

IV. Մնաս բարով, ձմեռ

2002

Որտե՞ղ են պտտվող բյուրեղապակյա ծաղիկները:

Ամենուր,

Մինչեւ իջնում են տանձենու ճյուղերին:

Այս կուրացող աշխարհում ճանապարհ չկա:

Միգամած է ամպերի ծովը,

Ճերմակով է հովիտը շղարշված.

Ո՞վ է պարում՝ արծաթյա ժապավենը ձեռքին:

Դիմակայելով քամուն՝ սալորի բուրմունքը

թափառում է.

Երբ գիշերն ավարտվում է, ժամանակն է,

որ արեւը ելնի:

Անձրեւից լավ են հալչող սառույցն ու ձյունը:

Սնուցելով չոր ու անբերրի հողերը,

Արթնացնելով ձմռանը քուն մտած ծառերին՝

Նրանք կսպասեն գարնան վերադարձին:



Կենսագրական տեղեկություններ

Մա Բայը ծնվել 1946 թվականի հունիսին, Շանհայում՝ Ցզինչանում: Չինացի պետական գործիչ, 2013 թվականի մարտից ՉԺՊ կոմունիստական կուսակցության կենտկոմի քաղբյուրոյի անդամ է: Չինաստանի փոխվարչապետներից է: Նախկինում զբաղեցրել է ՉԺՊ գների վերահսկողության պետական վարչության պետի, տնտեսական համակարգի բարեփոխումների պետական կոմիտեի ղեկավարի, Պետական խորհրդի գլխավոր քարտուղարի պաշտոնները:

Չինաստանի ազգային համալսարանի քաղտնտեսության ամբիոնում: Չինաստանի կոմունիստական կուսակցության 16-րդ և 17-րդ կենտկոմի, իսկ ներկայում՝ 18-րդ կենտկոմի անդամ է: 2003 թվականից ղեկավարում է Ազգային զարգացման և բարեփոխումների կոմիտեն՝ կազմակերպություն, որը լայն վարչական վերահսկողություն է սահմանում Չինաստանի տնտեսության նկատմամբ: Տնտեսագիտության մագիստրոսի կոչում է ստացել 1982 թվականին:

Անուսնացած է, ունի դուստր:

Բովանդակություն

Հեղինակային նախաբան.....	5
1. Մտորումներ եւ ներշնչանքներ.....	8
Արեւ, Լուսին, Մարդ.....	9
Արեւի դիտում.....	12
Քիանթանգ գետի մակընթացությունը.....	13
Առավոտյան ստվերամարտ.....	14
Մի ընկերոջ պատվին.....	15
Ներքող տարածել տերեւներով բարդուն.....	16
Ներքող ծաղկող սալորենուն.....	17
Անքնություն.....	18
Կարդալով Ջիա Դաոյի բանաստեղծությունը.....	19
Գիշերը տեղը գիշում է օրվան.....	21
Ասա ոչ ծարավի մտքին.....	22
Օրվա չարիքներ.....	23
Հեռու պահիր հռչակ ու շահ.....	24
Ներքող բարոյական ամբողջականությանը.....	25
Իմ աշխատասենյակը.....	26
Սպասում.....	27
Գեղագրության մեջ վարպետանալիս.....	28
Կարդալով «Տառ Տե Զինգ».....	29
Մտքեր պոեզիա սովորելու մասին.....	30
Ընթերցում կեսգիշերին.....	31
Նյութեղեն իրեր I.....	32
Նյութեղեն իրեր II.....	38
Նյութեղեն իրեր.....	44
Խորհրդածություններ.....	48
Քաջվարդը.....	52
Ընթերցողի մտորումներ.....	53
Բանաստեղծական համայնքը քսան տարեկան է դառնում.....	63
Վայելչագրությունը ժառանգության ցուցակ է կազմում.....	64

Ավելի շատ ճանաչել մարդուն.....	65
Պոեզիայի միության երրորդ համաժողովին.....	66
Արեւելյան տենչանք.....	67
Կամքի ստուգում.....	70
Լուսապսակը գուշակում է քամի.....	71
Ուղեւորություն հեռավոր երկիր.....	73
Ինքնագեղվելով վաթսունհինգ տարեկանում.....	76
Ութսունմեկ բառից ասացվածք.....	77

2.Ընտանեկան երանություն եւ վստահություն.....	80
Հայրիկի մահվան քսաներորդ տարելիցը.....	81
Մայրիկի ծննդյան ութսուներորդ տարեդարձը.....	83
Առաջին ժամադրություն.....	84
Հարսանյաց օրվա առաջին տարեդարձը.....	85
Արժաթե հարսանիքի տարեդարձ.....	86
Կնոջս հետ շրջում եմ բուրմունքի բլրին.....	87
Սպասում.....	88
Մարգարտե հարսանիք.....	89
Կնոջս վաթսուներորդ տարեդարձին.....	90
Քնած դուստր.....	91
Կարդալով դստերս առաջին աշխատանքը.....	92
Դստերս I	93
Դստերս II	94
Դստերս հարսանիքը	95
Պտղի սրտի տրոփյունը.....	97
Թռռան ծնունդը.....	98
Տուն՝ աշխատանքից հետո.....	99
Ջիջիան դառնում է երեք տարեկան.....	100
Ջիջիայի «ցասումը».....	101
Կրտսեր թռռան ծնունդը.....	102
Միջաշնանային տոնը՝ արտասահմանում.....	107
Միջաշնանային միայնությունը վերադառնում է.....	109
Դասընկերներին ճանապարհելիս.....	110
Շրջանավարտները մեկնում են Ներքին Մոնոլիա... ..	112
Ամառային պալատում՝ ընկերների հետ.....	113

Հավաք դպրոցում	114
Ընկերներին.....	115
Հետճաշյա զբոսանք.....	116
Ընկերոջը.....	117
Ի պատասխան գործընկերների.....	118
Սրելով պոետական արվեստը.....	119
Կարդալով Քու Յուանի բանաստեղծությունները.....	120
Մագնոլիայի փատատոն Դաժուի տաճարում.....	121
Ի պատասխան Շեն Փենգի.....	122
Գեղագիր-բանաստեղծների հավաք.....	124
Ի պատասխան վարպետ Շեն Փենգի.....	125
3. Հեղեղուկություն.....	127
Երկար ճանապարհ դեպի վերածնունդ.....	128
Նոր հազարամյակի սկիզբը.....	134
Հիսուներորդ ազգային օր.....	135
Կուսակցության ութսուներորդ տարեդարձը.....	136
Մաոյի մահվան առաջին տարելիցը.....	139
Մաոյի ծննդյան 110-ամյակը.....	141
Վարչապետ Չժոուի հիշատակին.....	145
Դենգի ծննդյան հարյուրամյակը.....	146
V օրվա վաթսուներորդ տարին.....	147
Կուսակցության ինստուներորդ տարեդարձը.....	148
Դատապարտելով ԱՄՆ-ի վայրագությունները.....	149
Այգեգործական ցուցահանդես.....	150
Լճակներ Բաչժոնգում.....	152
Սինին-Լհասա երկաթուղի.....	153
Օլիմպիական խաղերի հայտը շնորհված Է.....	155
Պեկինի պարաօլիմպիկ խաղերը.....	156
Պատնեշելով երեք կիրճ.....	157
Ներքող SARS մարտիկներին.....	158
Մարդու առաջին թռիչքը.....	159
Ողջունելով «Շենչոու VII-ը».....	160
Մտքեր կորած գանձերի շուրջ.....	161
Ուղեւորություն դեպի արեւմուտք.....	164

Բանակցության սեղանի շուրջ.....	166
Փոթորկուն Լուդինգ կամուրջը.....	167
Ձմեռային պալատում շրջելիս.....	169
Հո Շի Միևի դամբարանը.....	171
Մարտնչող հեղեղներ.....	172
Ծեծող ձևաքեր.....	187
Երբ երկրաշարժը հարվածեց.....	201

4. Տեսարաններ ու տեսարժան վայրեր.....	216
Հետազոտելով խոլորձի տաղավարը.....	217
Դու Ֆուլի ծղոտե տնակը.....	219
Մարկիզ Վուի տաճարը, Նանյանգ.....	220
Յու արքայի հիշատակին՝ Հուայուանում.....	223
Վերհիշելով Դուցզիանգի ամբարտակը.....	224
Բարձրանալով Յուեյանգ աշտարակը.....	226
Յունցզու տաճարի քարե մակագրությունները.....	227
Լիցզիան գետը.....	228
Թեք արեւմտյան լիճը.....	229
Ուղեւորություն դեպի Հուանգշան սար.....	230
Առաջին այցելությունը Ինը գյուղակի լեռնագոգ.....	233
Լիցզիան քաղաքը.....	234
Ոսկե մտրակ գետակը՝ Չժանգզիացիք.....	237
Պեկինի ծառաստանը գարնանը.....	238
Հոնգհուցզի անտառ, Հուլունբուր տափաստան.....	239
Կշռելով Թայ սարը.....	240
Գարունը Լինգյան տաճարում.....	241
Թեյամանի քիթ հիշեցնող ջրվեժներ.....	243
Այցելելով Յուանցզիացիքե հանգստավայր.....	244
Նոր արեւմտյան լճում նավարկելիս.....	245
Գարնան օրվա Արաշիյամա.....	246
Բոսֆորի կամուրջ՝ Գետամերձ քաղաքի մարդը.....	247
Հին եգիպտական հանելուկներ.....	248
Չորս եղանակ.....	249
Կենսագրական տեղեկություններ.....	254

Մա թԱՅ

ՄՐՏԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Բանաստեղծություններ

Թարգմանիչ՝
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2015

Խմբագիր՝ Զ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Մաթեոսյան
Էջադրումը՝ Մ. Ավանեսյանի
Կազմի ձեւավորումը՝ Մ. Դրավյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 16.5 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 1000:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25



一个学术性教育性
出版机构

网址: <http://www.fltrp.com>

PUBLISHING RESEARCH AND
TEACHING OF FOREIGN LANGUAGES (BEIJING)
«Օտար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների
հրատարակչություն» (Պեկին, Չինաստան)



Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
Քեռ.: +37497252323

«ԳեՂարմ» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

- «Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից»-
2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի
խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով,
Ն.Գունիլյով, Վ.Խոդասելիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»-
2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»-
2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով,
Վ.Նեկրասով, Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Յենրիխ Սապգիր. «Ջուզահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը.
մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կավածքը»-
2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուրը.
Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբը (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Սաջիա. «Չրեղեն խոսքեր» - 2015